



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91026
q-50


6992

7681
169

ԱՐԴՅՈՒՆ
ՀԱՅ

9





91(026)

9-50

ԱՆԴՐԱՄԻ
ՍՐԵՋԵՆ ՏԵՂԵՑ

ՅՈՐԻՆԵՐ

Ի ՄԿԵՏԻՉ ԵԲԵԳԵՅ

ԳԵՐՄԱՆԻԿԵՑԻՑ

Ի ՄԵՐԵ ՆՈՒԹԵՐԵ

Ա ԵՐԱԿԱՀԵՐ

ԵՐՏՕՆՈՒԹԵՄ

ԱՐԵՎԱԿԱՆ ԺԱՇԱՑ ԱԽՄԱՆ



2004

ԿԱՄԵՆԴԱԼԻՊՈՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՏԵՐՈՅԵՆՑ

ՔԵՊԵՑԻ ԽԱՆՆ

1858

2012

Ի ՀԵՅՐԵՊԵՏՈՒԹԵԸ

Տ. Տ. Մ ԵՏԹԵՐՈՍՏ

ՆՐԱՏԻՐ ԵԿ ՄՐԲԱՉԱԿԱՏԵՐ

ԿԵԹՈՒԳ ՀԵՂՈՒ

ԵՐԵՎԱՆ ՀԵՅՐ

ԵՒ

Ի Հ ՊԵՏՐԵՐՈՒԹԵԸ

ՄՐՅՈՅ ԵՐՈՒՇԱԴՄԻ

Տ. ՅԱԿԱՎԵԼԻ

ԵՐԵՎԱՆՏԻՐ ՄՐԵԶԵՐ

ՄՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՏ

ԵՒ ՀՐԱՄԱՆ

ԵՐԵՎԱՆՊԵՏԻ ՊԵՏՐԵՐԻ

ԿՈՍՏԵՂՆՈՒՊՈԼՈՅ

Տ. ՅԱԿԱՎԵԼ

ՄՐԵՎՃԱՆ

ՄՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՏ

ԴԱԻ ԹՅՒ

Պաշտքյոլովք եւ գեղեցիկք, երկիրք
բազումք եւ վայելուչք են եւ են 'ի մէջ աս-
պարիզի լայնատարած աշխարհիս. բայց չիք
եւ չիք յար եւ նման չնաշխարհիկ չքնաղքա-
ղաքիս սրբոյ Երուսաղէմի՝ որ է մայր ամե-
նայն քաղաքաց. եւ ակն համայն տիեզերաց.
աղքիւր ամենայն լիութեանց հոգեւորական
բարութեանց եւ լուսաշաւիդ շնորհական նո-
րոգ օրինաց (օրէնք 'ի սիօնէ ելցեն) ո-
րով յորդառատ ոռոգեալ զամենայն 'ի ջրոյն
կենդանութեան, ոչ իբրեւ զադինականն
գետ 'ի չորեսինս միայն, այլ 'ի բիւրաւոր ա-
ռաջս բաշխեալ բաժանեալ մինչ 'ի ծագս
տիեզերաց պտղաբերս գործէ զհամայն բա-
րեպաշտիկ հաւատացեալս առաքինական
Ըստուածահաճոյ բարեմասնութեանց. երկիր
աւետեաց՝ յորմէ լցան լիացան տիեզերք ա-
մենայն բերկրալիր աւետեօք փրկառիթ անօ-
բենութեան մարմնացեալ բանին Ըստուծոյ,
դրախտ ցանկալի՝ որ ոչ զերկրաւորն արդիւ-
նաւորէ զպտուղ մարմնական կենդանութեան

այլ զՃմարիտ ծառն կենաց զիջեալն 'ի
յերկնից՝ որ բուսոյց եւ բուսուցանէ եւս
միշտ զհացն կենդանի զկեցուցիչն հոգւոց՝
հոգւով ՚ինա դիմելոց (Ես եմ հացն
կենդանի՝ որ յերկնից իջեալ, եթէ ոք ու-
տիցէ ՚ի հացէս յայսմանէ կեցցէ յաւի-
տեան) : Արեգակն լուսապայծառ ՚ի մէջ բազ-
մութեան բազանշոյլ աստեղաց՝ որ բոցա-
ճաճանչ փայլմամբ առ ինքն հրաւիրեալ գը-
րաւէ ՚ի ծագաց տիեզերաց զամենայն սիրտ
բազմատենչ ջերմեռանդ հաւատացելոց :

Ահա այս է Աստուածահաճոյ քաղաքն
այն սիօն՝ յորում բարեհաճեցաւ բարեգութն
Աստուած բնակիլ յաւիտեանս յաւիտենից,
ո՞չ իբրեւ զՊաւիթ առօրեայ իշխանու-
թեամբ, եւ այն եւս մեղանչական վիճակառ
մարդկայինս թշուառ բնութեան . այլ ինքն-
իշխան անկախ զօրութեամբ եւ բոլորովին
անհաղորդ ՚ի մեղացն մասնակցութենէ հաս-
տատեաց ՚ի սմա զաթոռ անվախճան թա-
գաւորութեանն ՚ի ժամանակի մարդեղու-
թեան իւրոյ, եւ ՚ի վախճանի աշխարհիս
աստ ունի միանդամայն բազմիլ ՚ի գահ ար-
դարութեան իւրոյ, (Նստցի յաթոռ դատա-
ւոր արդարութեան) : Ուստի ըղճալի է
քաղաքս այս հրաշալի ոչ միայն մահու վի-
ճակեալ վաղանցուկ մարդկան, այլ եւ ան-
մահիցն դասուց, զօրացն հրեղինաց, հը-

րեշտակացն՝ գնդից եւ հրեշտակապետացն պարուց՝ որք՝ ՚ի սկզբանէ անձառելի մարմնառութեան բանին Ըստուծոյ սկսեալ աւետաբեր խնդութեամբ մինչ՝ ՚ի պսակն ամենայն տնօրէնութեան հրաշափառ համբարձմանն Վրիստոսի մեծաւ փառօք՝ ՚ի փող օրհնութեան յաւերժական զուարձութեան գունդագունդ ծաւալմամբ յերկնից՝ ՚ի յերկիր, ընդհանուր փրկութեան մարդկայինս բնութեան, եւ անպատում ուրախութեան աստուածային մարդասիրութեան գտան գերագոյն պաշտօնեայ եւ նախկին աւետարանիչ համայն աշխարհի:

Երդ՝ զայսպիսի ունիս տեղի պարծանաց ո՞վ անձնդ բարեպաշտ, քաղաք այնպիսի՝ որ յաստուծոյ ընտրեալ, տուն եւ տաճար ըզտէրն երկնի եւ երկրի յինքն սեփհականեալ, քաղաք՝ ՚ի վերին զօրաց պատուեալ, եւ հրեշտակային սպասահարկութեամբ պաշտպանեալ, քաղաք՝ ՚ի մարդկանէ ջերմեռանդն ըղձիւ սիրեցեալ, եւ խորին զգացմամբ սըրտի տենչացեալ, ըստ Պաւթի թէ (Որպէս սիրելիք են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ եւ փափաքի անձն իմ՝ ՚ի գաւիթսքո):

Հապա ընդէ՛ր յապաղիս, զի՞ պատճառս յօդես, է՞ր օրէ յօր ձգես, չյիշե՞ս երբէք թէ՝ ՚ի դուռն հասեալ կայ օրն՝

Հորում՝ զթել կենացդ յանկարծ իմն կըտ-
րեալ տեսանես . ուրեմն մի՛ դանդաղիր բաղ-
բաղելով զայս եւ զայն , մի՛ խաբիր յաշխար-
հային ունայն եւ պատիր զբաղմանց , ծանի՛ր
զի (Ունայնութիւն ունայնութեանց ամենայն
ինչ ընդունայն է) աշխարհիս , եւ մի գար՚ի
մոռացօնս սքանչելի տեղւոյս փրկութեան
քո : Պանա՛ , փութա եւ գուն գործեա՛
դիմել յայսր ՚իյարկս տան տեառն Աստու-
ծոյ քո օր յառաջ սիրով եւ տենչանօք սըր-
տի զՊաւթեանն եթելով ըղձալի նուադ
(Տմէ ոչ տաց քուն աչաց իմոց , կամ նինջ
արտեւանաց , կամ հանդիստ իրանաց , մին-
չեւ գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ
Յակորայ) :

ՀԵՂԻՍԱԿ ԳՈՐԾՈՅՑ

Բ. Ե. մոռացայց զքեզ Երուսաղէմ
մոռացի զիտ աջ իմ : (Սաշ . ՇԼՀ . 5) :

Ի բազւմ խնդրանաց ոմանց բարե-
միտ տէրունական ուխտաւորաց ջերմեռան-
դից ստիպեալ ըղձայր միշտ սերտ սիրով ըն-
ծայել պտուղ ինչ քաղցրութեանի ճաշա-
կումն ձեր համայն քրիստոսասէր հայկազ-
նեացդ՝ որ էք ցանդ փափաքով այսպիսի իմն
զուարձալի հոգեւորական զբօսանաց : Մինչ
էր այս խորհուրդս 'ի մտի՝ եհաս նմա կարգն
պաշտօնի երկնանման տաճարի սրբոյ յա-
րութեան ըստ գեղեցիկ կարգադրութեան
սրբոյ աթոռոյս, եւ անդէն անդ ապաւի-
նեալ յառատաձիր շնորհս հոգւոյն սրբոյ, եւ
միանգամայն շարժեալ եւ զօրացետլ 'ի գե-
րազանց սիրոյ եւ յընդաբոյս պարգեւաց
արեամբ մածեալ սրբազնասուրբ տնօրինա-
կան տեղեաց եւ կենսատու գերեզմանի
տեառն մերոյ Ծիսուսի Քրիստոսի մարմնա-
ցելոյ բանին Աստուծոյ . սկիզբն կալաւ

ձեռնամոլիս գտանիլ սոյն բարեշաւիղ գործոյս, 'ի փառս եւ 'ի պատիւ ամենափափազելի Աստուածընկալ սրբազան տեղեաց, եւ 'ի նմա տնօրինեցելոյ որդւոյն միածնի՛ հօրն անեղի : Օոր Թէպէտ 'ի վաղուց անտի յղացեալ երկնէր 'ի սրտի իւրում, եւ կամէր օր յառաջ ծնանիլ, բայց սղութիւն ժամանակին չներելով կայր միշտ 'ի տակնապ տարակուսի . իսկ յորժամ եկն եհասժամ ծնանելոյ՝ ո՛չ եւս այնուհետեւ կարաց 'ի սրտի եւ 'ի մտի պահել զայն, այլ իսկոյն ծնաւ եւեր յաշխարհ, եւ մատուց նուիրեաց իբր հաճելի իմն ուղերձ զիս զփանաքի եւ անխմաստ ոճիւ յօրինեալ բանական փոքրիկ զրքոյկս որ եմ իսկ առաջնորդ եւ հայելի նկարագրական սըրբազան տեղեաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի վայելումն եւ 'ի զուարծութիւն լրութեան ձերում աստուածասիրութեանց :

Գիտէր՝ զի են նախկին պատմագիրք Ճոփիք եւ լիակատարք . որպէս Յովսէպոս՝ Արինոս՝ Հաննայ՝ եւ այլն : Իայց սա ո՛չ 'ի նոյն միտս եւ եթ պատմութեանցն զկնի ընթանալով՝ այլ զայժմեան 'ի ձեռս ունեցեալ կարեւոր տեղիսն ըստ կարգի Ճառեալ, եւ ուրեք ուրեք յորդորակինչ մաղթանս ընծայեալ տնօրինեցելոյն վասն մեր Յիսուսի

Վրիստոսի, զբարետենչ ընթերցօղան հանդերձ ունկնդրօքն՝ ի սէր սրբազան տեղեաց եւ ՚իկիրս հոգեւորս հրապուրելով նորանոր իմն քաղցրիկ ուտեստ պատրաստեաց ջերմեռանդ սիրով փափագողացդ սրբազան տեղեացս . յաւել՝ ի սմա եւս զամենափառաւոր հանդիսավեհութիւնս թափօրից սրբոյ Ա-թոռոյս եւ երկնանման տաճարի սրբոյ Յա-րութեան՝ թէ երից ազգաց եւ թէ զյատ-կացեալ առանձինսն, զշաբաթական թա-փորսն, եւ զվասն ուխտաւորացն . զժամա-նակս բուրվառացն եւ կոչնակաց եւ այլոցն ամենեցուն համառօտակի վիպել մի ըստ միո-ջէ :

Ապա մ՛այ նմա այսուհետեւ միայն աղեր սական սիրով մաղթել՝ ի բարեսէր վերծա-նողացդ . նախ՝ ներողամիտ գտանիլ անկարգ եւ անչեթեթ ընթացից բանից ձեռնար-կութեանս, եւ յանդուգն համարձակութեան՝ ի ձկտումն յայսպիսի գործ ինչ սրբաբանու-թեան . եւ հուսկ յետոյ փոխարինել զմասն ինչ բարի ՚ի խնկանուէր աղօթս ձեր իբր.՝ ի հատուցումն վարձուց երկասիրութեան նոյն յօրինօլի իմոյ՝ սրբոյ Աթոռոյս յետին միա-բան գերմանիկեցի Ակրտիչ Աբեղայի :

ԵՒԽԵՐԴԻԸՆՔ

Ի՞շձ է քեզ գալ Երուսաղէմ՝

ո'վ բարեպաշտ անձնըդ խոհեմ.

Թող փառս արագ Խաբշիկ Երկրիս՝

եւ Հետեւեաց բանին վըսեմ:

Լուր դու ճայնի Հըթեշտակին՝

որ հրաւիրէ 'ի սուրբ տեղին.

եկայք ասէ տեսէք զվայրիկն՝

ուր ըզՏէր ձեր փառօք եղին.

Կանխեա' եւ դու 'ի յառաւօտ՝

աղնիւ կենացդ զօր ունիս մօտ.

Եց ըզ փափաք սըրտի քոյին՝

մինչեւ անկեալ իցես յաղօտ:

Կայ մութ գիշեր յանկարծ մահու՝

զոր ո'չ գիտես յորում պահու,

փղձկիս ուժգին յայնժամ սրտիւ՝

բայց զի՞նչ օգուտ կեանքըդ սահու:

Եռաքելոց նըման Փրկչին՝

փութա' դիմել յոտս Երարչին:

'ի Գրալիլեա լետոն խոստման' մայս էկառ
եւ 'ի կատար կամաց հաստին :

Կալնու ըզ ձեռս քո այս ցուցակ՝
տայ քեզ շրջիլ անխոտովնակ .
ուր քեզ իցեն կամք գնալոյ՝ կ բայ ըմբ
լըցուցանէ՝ ըզ քո փափաք :

Ի դրանէն որ Յոպպէու՝ մուծեալ տանի յելս արեւու .
հակեալ անտի 'ի հարաւ կոյս՝ դիմես 'ի վանս սուրբ Յակոբու :

Օ երախայրի եռանդ սրտիդ՝
ջերմ ընծայեա՛ 'ի սուրբ վայրիդ .
որ է պարծանք հայկազունեան՝
շբքեղ փայլեալ 'ի փառս ազգիդ :

Ո՞չ զըլանայ 'ի քէն տանիլ՝
ուր որ կարես կշտամբ յագիլ .
'ի մեծ տաճարն սուրբ Յարութեան
անդ չէ՛ հնար սիրով չայրիլ :

Ո՞չ երջանիկ կեանք երկնային՝
որք 'ի տեղւոյդ մեզ պարգեւին .
հեղ զարտասուս առատ եւ յորդ՝
'ի սուրբ վայրիկդ Աստուածային :

Ը օջեա՛ ըղձիւ փղձկեա՛ սրտիւ
հոլովեա՛ զքեզ որպէս զանիւ .

Դուցէ իբրեւ ըզ Ամրիամ՝
Գըտցես զՃէրդ սիրով սերտիւ:

Հրեշտակապետ վանք հրաշալի՝
ուր է նախկին բանտ Յիսուսի.

Կից ընդ վանուց սուրբ Յակոբայ՝
կանգնեալ փայլի իբրեւ զարսիի:

Փրկիչ անուն վայրն սոսկալի՝
դէմյանդիման սուրբ Ախօնի.
ուր տէրն մեր նախատանօք՝
եղաւ մինչ ցայդ յերկրորդ բանտի:

Ե՛ջ դու 'ի ձորն Գէթսեմանի՝
տե՛ս անդ զսուրբ վայրն աղօթի
մո՛ւտ 'ի տաճարն ըսքանչելի՝
ամէնօրհնեալ Աստուածածնի:

Ենտի 'ի լեառն ել Զիթենեաց՝
ուստ համբարձաւ տէրն վառաց.
մերձ է սըմին եւ Կալիլեա՝
վայրն Ղաղարու ժամ մի շաւղաց:

Իքաղաքիդ են այլ տեղիք՝
ոմանք ազատք ոմանք գերիք.
Թո՛ղ զաւերակս եւ զանյայտնիս՝
որք երեւին անթուելիք:

Տունն ծննդեանի սրբոյ Կուսին՝
Պրօպատիկէ աւազանն հին.

փուշ տղըսակի հըրապարակն՝
եւ ապարան Պիղատոսին :

Բնակարան հերովդէի՝
Վայրն հանգիպման մօրն Յիսուսի .
տեղին անկման Տեառն մերոյ՝
եւ բառնալոյ զխաչն Աիմոնի :

Փարիսեցւոյն տունն ճաշոյ՝
եւ սիւնըն այն արձան վճռոյ .
բանա Պետրոսի մերձ Յարութեան՝
եւ գերեզման Նեղինէ դշխոյ :

Կայ եւս տեղի յոյժ տենչտլի՝
սուրբ ծնունդըն Ռեթլէհէմի .
այն սուրբ այրիկն կոյս ծընընդեան :
տաճար չըքնաղ հիանալի :

Փոյթն երջանիկ արթուն հովուաց՝
ուր լոյս սաստիկ փայլատակեաց .
փառք 'ի բարձունս Շուաքողին :
Խաղաղութիւն մեզ աւետեաց :

Ո կրտութեան սուրբ գետն Յորդան՝
ժամ է իբրեւ երկոտասան .
ծովըն հրաշից Տիբերիայ՝
եւ Գալիլեայ մերձ նմին կան :

Լեառն թափոր երկնանըման՝
անդ փառքն անճառ ձայնն հայրական .

աստուածային լոյսըն պայծառ
ըզմայլեցույց սուրբ զառաքեալսն :

Հապա մատո՛ տեառն Արարչին՝
փառք եւ պատիւ յաւիտենին .
որ հաճեցաւ անձառ սիրով՝
տընօրինիլ յայս սուրբ երկրին :

Գուշրի մայթառս Վառզնորդ
սբ յեղեց անոռութեան
գլուհէ Եղան ՚ի սբ Միռառ
Վղիկ մարու Աշուրեան -
Քամ և այ. Ո՞ստ շատ ի-
բացառու այս ի առաջ շետու
յի պարի ժա իրեւու :

մաստուիդ ամզոյ և նաև
այս ազգի պահան մզիոն
և այս միան նուն արքիմանք և
մանուկանից զախոնի մասն
մայթառս միան ունեն մզուու բան

(31)

ՏԱՐԻԽԻ Ե.

Յաղագս Գալը՝ 'ի տաղակն սո-ըբ Երու-
սաղէմ, և մատաշը՝ 'ի բրանե Յոդակէո-, Գալ
և շրջել նախ 'ի վանս սրբոյն Հակոբայ.

Երանեալք իցեն որբ սիրեսցն զքեզ Երու-
սաղէմ և ցնծացեն նորա ի խաղաղութեան
քում, և եկացեն օրհնութիւնք ի մերայ սի-
րոշաց քոց : (Տուբ. ժդ. 18):

Կամի՞ս՝ ո'վ քաջդ հայկազուն, գալ 'ի
ցանկալիդ սուրբ Երուսաղէմ, եւ անվըհէպ
ընթացիւք շրջագայիլ 'ի տնօրինական սրբա-
զան տեղիս Վրիստոսի, եւ 'ի պարծանա
լութեան ձերում 'ի գերահրաշ վանս սըր-
բոց Յակոբեանց . փութա՛, հա՛տ զլերինա
եւ ա՛նց ընդ ծովս անվեհեր սիրով . ե'կ 'ի
վերին դուռն սրբոյ քաղաքիս որ կոչի դու-
ռըն Յոպակու, եւ արաբացիք ասեն Պապ
ըւ Խալիլ, առ զիս զգըքոյկս 'ի ձեռսքո՛ որ
եմ իսկ հայելի նկարագրական եւ առաջնորդ

սրբազան տեղւոյս տեառն մերոյ տնօրէնու ~
 թեան : Ի՞այց չեւ եւս մտեալ 'ի ներքս՝ պարտիս
 ածել զմտաւ թէ արդեօք ո՞ւր հանդերձեալ
 ես մտանել, առ ի՞նչ քաղաք, յո՞րպիսի
 վայր, եւ կամ յորո՞յ բնակարան, եւ ան-
 դէն 'ի քեզ բերեալ զուշ քո՝ թօթափեա՝
 վաղվաղակի զթմրութիւն ճանապարհին .
 մո՛ւտ նախ քան զքաղաքս՝ 'ի սենեակ սըր-
 տի քո, քննեա՛ զքեզ, եւ տե՛ս թէ ունի՞ս
 ինչ զումեքէ, թո՛ղ նմա 'ի սրտի քում,
 զըղջա՛ 'ի չարեացդ՝ զորս գործեալ ես յա-
 ռաջագոյն, լուա՛ զսիրտ քո ջերմ ջրով ար-
 տասուացդ, ջնջեա՛ մաքուր կտաւօք ապաշ-
 խարութեան . եւ ապա մտցես 'ի քաղաքս
 սուրբ, զի սուրբ է երկիրդ՝ յոր մտանե-
 լոց ես, եւ դուռն արքայութեան, քաղաք
 է մեծի արքային, եւ ընտրեալ յամենայն
 քաղաքաց, 'ի սմա է վայրն այն սքանչելի՝
 որ կոչի 'ի նահապետէն (Տէր ետես) 'ի սը-
 մա է Ի՞էթէլն այն խորհրդաւոր՝ յորում
 Խսահակն երկրորդ փոխանակ առաջնոյն
 պատարագ հաճութեան ընծայեցաւ Հօր
 Եսուծոյ վասն հաշտութեան ընդ մարդ-
 կան եւ փրկութեան 'ի յաւիտենական դա-

տապարտութենէ . 'ի սմա է վայրն այն սուրբ՝
 ուր ամենայն ինչ կատարեցաւ՝ զոր խօսեցան
 մարդարէքն , զի միածինն ։ օր ՚ի սմա կա-
 տարելագործեաց զամենայն փրկառիթ տնօ-
 րէնութիւնս իւր . չարչարեցաւ , խաչեցաւ ,
 թաղեցաւ , յարեաւ , եւ համբարձաւ փա-
 ռօք առ ։ այր՝ ուստի ել . ուստի քաղա-
 քըս այս է բնակարան Աստուածային , ՚ի սմա
 է աթոռն Աստուածութեան՝ ուր աներեւու-
 թապէս բազմեալ կայ միշտ ամենասուրբ
 Աստուածութիւն , ՚ի սմա են պարունակեալ
 դունդք հրեշտակապետաց՝ որք անդադար
 փառաբանութիւնս մատուցանեն անձառելի
 մարդեղութեանն Քրիստոսի , եւ ձեզ տէ-
 րունական ջերմեռանդ ուխտաւորացդ աւետիս
 յարութեան ընծայեն ասելով գիտեմք , զի
 զի՞իսուս զխաչելեալն խնդրէք՝ չէ՛ աստ ,
 այլ յարեաւ . եկա՛յք տեսէ՛ք ըզտեղին՝ ով
 եդաւ , թէպէտ եւ յարեաւ , բայց անբա-
 ժանելի է միանգամայն եւ ՚ի սրբազան տեղ-
 եացս , առ ՚ի հատուցանել իւրաքանչիւրոց
 վարձս ըստ ջերմեռանդութեան սրտից նո-
 ցաւ Աւքնմն ըսկեա՞ ՚ի բի՛ն զամենայս շա-
 րիս արտաքոյ գրանդ նու մուտ ՚ի ներիս

(18)(

մաքուր սրտիւ. Եւ ջերմեւանդն սիրով .
սկսեա յառաջին գլխոյս , ընթա՛, փութա՛
եւ կարդա՛: Եկեալ սակաւ ինչյառաջ դէալ
առ արեւելս՝ դա՛րձ յաջ թիկունս կոյս , 'ի
վեր վազեա՛ 'ի հարաւ , անցեալ յառաջոյ
դրան բերդին՝ որ ասի Դաւթի , գնա՛ փոքր
ինչ ուղղակի՝ իսկոյն գտանես զհոյակապ
զարմանալի դուռն երկաթեայ ամենացան-
կալի գերահրաշ վանուցս սրբոց յակոր-
եանց . մո՛ւտ 'ի նա զուարձախառն երկիւ-
ղիւ , եւ խաղացեալ անտի քանի ինչ քայլ
յառաջ տեսանես 'ի ճախակողմի եւս դուռն
մի . մտեալ անդր գտանես զքարայատակ քակն
ամենասքանչ սրբոյ տաճարիս . Են անդ եր-
կաթեայ Ճաղք . անցեալ ընդ նոսա մտանես
'ի ներքոյ կանանց վերնատան , ուր ընդ ա-
ռաջ ելանէ երկաթեայ աւագ դուռն երկ-
բերան ամենագեղեցիկ սուրբ տաճարիս՝ յորոյ
վերայ է սարսափելի եւ զարհուրելի պատկեր
մի դատաստանի , որ զտեսողսն իսկոյն յա-
պուշկրթեալ սրտաբեկ առնէյ երկու կողմունս
սոյն դրան են երկու պատուհանանման սե-
ղանք՝ յաջակողմեան յանուն սրբոյն Գէոր-
գայ . ուր երբեմն պատարագամատոյց են

Եղեալ զեօթն ամ վարդապետք սրբոյ Ա.
 Թռուոյս՝ արգիլեալ ՚ի մոտանելոյ ՚ ի սուրբ
 տաճարս . զորմէ ունիմք պատմել յաւարտ
 ճառիս . եւ ՚ի ձախոյ կողմն՝ յանուն սրբոյն
 ՚ Աիկողայոսի սքանչելագործի . յայս կողմն
 են կոչնակք երկուք . մին՝ տախտակեայ , եւ
 միւսն երկաթեայ , զորս հարկանեն լուսա-
 րաբք ՚ի կարգադրեալ պահու ժամերգու-
 թեանց : Բայց դու մուտ ՚ի ներքս ահիւ
 եւ խնդութեամք , ե՛րթ նախ դէպ առ յա-
 ջակողմն սրբոյ տաճարիս , զի անդ դասնես
 զցանկալին քո՝ զգանձն երկնային , զգերա-
 հոչակեալն յամենայն ազգաց , զառաջնորդն
 եւ զի՞ջնորդն ազգիս հայոց , եւ զպատ-
 ուեալն ՚ի տիեզերաց իսկ՝ զգլիսադիրն ՚ի
 սէր Վրիստոսի , զսիրելի աշակերտն երկ-
 նաւոր վարդապետին . զսրբազան առաքեալն
 զմեծն Յակոբոս՝ որոյ ամենապատուական
 գլուխն կայ աստ ամփոփեալ ձեռամք ամեն-
 որհնեալ Տիրամօրն : Ահա այս է գլխաւոր
 պարծանքն ազգիս , այս է կատարիչն ա-
 մենայն արժանահայց խնդրուածոց , եւ այս
 է ներկայացուցիչն համայն ջերմեռանդ ուխ-
 տաւորաց իւրոց առաջի աթոռոյ Աստուա-

ծութեանն առ ՚ի լնուլ զփափաքս սրտից
 իւրաքանչիւրոցն։ Հապա պարտիս եւ դու
 ասու չարչարակցիլ նմա, զի եւ փառացն
 հաղորդ գտցիս, թէ եւ իոք չկարես, բայց
 է հնար զոր ցուցից քեզ. յիշեա' նախ ըզ
 գլխատումն նորա ՚ի սէր Աստուծոյ, գլւ-
 խառեա' եւ դու ՚ի սրտէ քումմէ զամենայն
 հեշտութիւնս եւ զցանկութիւնս աշխարհի,
 բղխեա' ընդ արեան նորա զառուս յորդա-
 հոս արտասուացդ, եւ լուս' զամենայն աղ-
 տեղութիւնս անձին քո. է՞զ ՚ի ծունկս.
 անկիր ՚ի վերայ երեսաց քոց. եւ այնպէս
 մատո՛ զերկրպագութիւնս ամենամաքուր գե-
 րեզմանի նորա, եւ ահա' յայնժամ լինիս
 աշակերտ եւ եղբայր նորա, որպէս եւ նա
 Քրիստոսի, եւ ապա հաղորդ փառաց նո-
 րա անտարակոյս։ Պառուն սուրբ գլխադրիս
 է սատափագործ եւ զարմանալի արուեստ-
 իւք յօրինեալ՝ յոյժ գեղեցկատեսիլ. ՚ի վե-
 րայ գերեզմանին է կիսագնտակ սեղան իմն՝
 ուր մատչի սուրբ պատարագն, եւ ՚ի ներքոյ
 սեղանոյն է փոքր փոս ինչ՝ որ է իսկ
 տեղի սրբազն զլխոյն. են անդ շուրջա-

նակի զփոսիւ վեցեքին մշտավառ կանթեղք
 եւ անուշահոտ ծաղկունք վայելուչ ամա-
 նովք . ունի 'ի վերուստ զփոքրիկ գմբէթս
 զեղեցկանկար երանդօք զարդարեալ , ունի
 եւ զայլ բազում զարդս վայելուչս եւ շքե-
 ղըս որովք պճնեալ գեղափայլի յաւուր
 տօնախմբութեան իւրոյ , եւյայլ աւուրս
 հանդիսից : Աստ է միջադուռն մի փոքր . ընդ
 այն անցեալ գտանես եւս դուռն ինչ փակ-
 եալ , եւ ծածկոց ընդ երեսս , անդ են 'ի
 մէջ նորս սքանչելիք եւ պատուական իրք ,
 մտեալ անդր տեսանես շուրջանակի կախեալ
 զորմով զզարմանագործ գեղեցիկ գաւազանս
 'ի վաղուց անտի մինչեւ ցայժմ , նա մանա-
 ւանդ զ նեթում հայկազուն թագաւորի մերոյ
 սաթեայ միաձոյլ գաւազանն՝ որ չնաշխարհիկ
 իմն է : Ընդ են մասունք ամենայն սրբոց
 կերպ առ կերպ շինուածովք արծաթապատ-
 եալ , եւ այլ ամենայն հազուազիւտ նուիրեալ
 անօթք , անդ են երեք գեղեցկազարդ սե-
 ղանք . յաջակողմեանն է՝ յանուն սրբոյն Ա'ի-
 նասայ . որ եւ անուն եկեղեցւոյն կոչք սուրբ
 Ա' ինաս . ձախակողմեանն՝ յանուն սրբոյն
 Ա' արգսի , յորոց վերայ . սուրբ պատարագ

մատչի՞ միանգամ 'ի տարբոջ յաւուր տօնաւ
 խըմքութեանց իւրեանց, եւ միւս սեղանն
 որ է 'ի միջի, է յանուն սրբոյ Յարութեան,
 եւ է փոքր յոյժ, բայց որպէս վարդ 'ի մէջ
 այլ ծազկանց : 'Ա մէջ սոյն եկեղեցւոյն է եւ
 դուռն մի եկեղեցական գանձու գերահուչակ
 սրբոյ աթոռոյս՝ ուր ամենայն զարդք եւ ա-
 նօթք, թէ խաչք, թէ աւետարանք, թէ
 սկիհք, թէ թագք, թէ սաղաւարտք, թէ
 շուրջառք, թէ ծածկոցք եւ թէ վարա-
 գոյրք պարունակեալ կան ըստ կարգի եւ
 ըստ տեղւոյն՝ որք 'ի գործ դնին ըստ աւուր
 պատշաճի . ոչ ոք կարէ մտանել անդք բաց
 յաւագ լուսարարէ ըստ սահմանադրութեան
 նախկին սրբազան հայրապետաց . մատուցեալ
 անդ զվայելուչ ջերմեռանդ երկրպագու-
 թիւնս ահիւ եւ դողութեամբ, գաս դէպ 'ի
 դուռն տաճարին, ուր կայ փոքր մատուռն մի
 յանուն սրբոյն Վահարայ ճկնաւորի, անդ
 է եւ գերեզման նորա . քանզի սա երբեմն
 ընտրութեամբն Աստուծոյ պատրիարք է
 նստեալ 'ի սուրբ աթոռս, ապա վճարեալ
 զկեանս իւր, աստանօր է ամփոփեալ ըստ
 արժանապատուութեան իւրոյ . աստի փոքր

ինչ յառաջ է փոքր դուռն մի՛ ուր մտեալ
 ելանես երեսուն եւ վեց աստիճանաւ 'ի վեր
 'ի մէջ որմոյն, 'ի վերայ գլխադրին, անդ է
 պատարագամատոյց փոքր սեղան մի՛ որ կոչի
 սուրբ 'Աշան', աստ դնիւր երբեմն ամենա-
 պատուական խաչն այն . որ ունի մեծ մասն
 'ի կենաց փայտէ . բայց այժմ 'ի գանձարանի
 պահեն առ . 'ի զգուշութիւն : Յարտօքին
 կողմն սոյն սեղանոյս է մի եւս փոքր դուռն՝
 յոր մտեալ գտանես զսեղանն երկոտասան
 առաքելոց՝ ըստ է իբր փոքր եկեղեցի մի . եւ
 անտի եւս 'ի դուրս ելեալ 'ի փոքրիկ դրանէ
 իմեքէ՝ տեսանես փոքր սեղան մի եւս՝ որ ա-
 սի Համբարձման . յայս սեղանս միանգամ
 'ի տարւոջ պատարագ մատչի , աստ է եւ
 փոքրիկ դուռն մի՛ որ հանէ 'ի տանիսն . բայց
 դույետս դարձեալ անտի իջանես 'ի վայր
 'ի նոյն առաջին դրանէ , եւ անդ գտանես
 երկաթեայ ճաղ իմն դասանման՝ ուր կանգ-
 նին ծերունազարդ վարդապետք՝ որք ո՛չ եւս
 կարողասցին վարել զպաշտօն եկեղեցական .
 եւ 'ի գլուխ սոյն դասի է փոքր աթոռ մէ
 երկաթեայ կաթուղիկէիւ՝ ուր բազմի սրբա-
 զան պատրիարքն 'ի ժամ մատուցման սուրբ

պատարագի 'ի սուրբ գլխադիրն։ 'Այետս կոյս
 սորա է եւս դուռն մի տաճարիս՝ յորմէ մտա-
 նեն միշտ եկեղեցականք, վարդապետք եւ
 սրբազն պատրիարքն։ Աստի շրջելով գնա'
 դէպ առ ձախակողմն տաճարիս . անդ է հո-
 յակապ դուռն մի երկրերան՝ յոր մտեալ գը-
 տանես եկեղեցի մի՝ որ ասի Խջմիածին . անդ
 է միառաւոր աւագ սեղան մի ամենայն վա-
 յելչութեամբ զարդարեալ ջահիւք եւ կան-
 թեղօք . 'ի ձախակողմն նորին 'ի մէջ դասին՝
 հինգ աստիճանաւ 'ի վեր է փոքր սեղան մի
 գեղեցիկ 'ի վերուստ ունելով փոքր կա-
 թուղիկէ մի՝ որ կոչե Ախնէական սեղան . 'ի
 մէջ սոյն սեղանոյ են երեք սքանչելի քա-
 րինք . 'ի խնդրանաց Տերամօրն բերեալ 'ի
 ձեռն հրեշտակապետի . մին 'ի Ախնէական
 լեռնէ . մին 'ի Ծամբօրական լեռնէ . եւ մին
 'ի Յորդանան գեաց, զորս համբուրեն ջեր-
 մեռանդ ուստաւորքն վասն բազում հրա-
 շագործութեանցն . 'ի մէջ սոյն եկեղեցւոյս
 է կանանց դուռն՝ յորմէ մտեալ կանայք ե-
 լանեն երեսով եւ եօթն աստիճանաւ 'ի
 վայելչազարդ վերնատունն՝ որ է յոյժ փառա-
 ւոր, ջահիւք եւ կանթեղօք զարդարեալ . անդ

են երկու պատարագամատոյց սեղանք . ա-
 ջակողմեանն՝ Պայծառակերպութեան , եւ
 ձախակողմեանն՝ Ընթրեաց : Աստի իջեալ 'ի
 վայր , եւ անցեալ կրկին յառաջին դրանէ
 դաս դէպ առ ձախակողմեան դասն սրբոյ
 տաճարիս . չեւ եւս մտեալ 'ի դասն՝ ընդ ե-
 րես որմոյն կայ գուռն մի փոքր սատափա-
 գործ 'որ անտի ելանես երեսուն եւ վեց աս-
 տիճանաւ 'ի միջոյ որմոյն 'ի վերայ երկուց
 դասուց խորանացն՝ ուր են երկու սեղանք
 գլխաւոր առաքելոցն . աջակողմեանն՝ Պետ-
 րոսի , եւ ձախակողմեանն՝ Պօղոսի . ամենայն
 շքքեղութեամբ զարդարեալ , եւ յաւուրս տօ-
 նախմիւթեան իւրեանց մատչի սուրբ պա-
 տարագ ամենագիտաւոր հանդիսիւ : Անդ 'ի
 յետուստ կողմանէ աւագ սեղանոյն է ձա-
 նապարհ՝ որ հանէ 'ի մէջ ամենահոչակ բարձ-
 րակառոյց հոյակապ գմբեթի սրբոյ տա-
 ճարիս՝ յորմէ գնան լուսարարք 'ի հանդիսա-
 ւոր աւուրս 'ի լուսաւորել զկանթելս՝ որք
 են 'ի մէջ գմբեթի շուրջանակի իւրեւ եր-
 կերիւրք : Ա երագարձեալ անտի լջանես 'ի
 վայր , եւ մտանես 'ի ձախակողմեան դասն՝
 ուր է սեղան սուրբ Աստուածածնի . ասպա-

ըեղ երկուց դասուց է յոյժ լայն եւ ընդարձակ
 եւյատակ նոցա կարի գեղեցիկ յօրինեալ զոյն
 զգոյն կճեայ մանր քարամբը: Անդ է տես-
 սանել զամենավայելուց դասակարգութիւնն
 երկուց կողմանց, փառահեղ եպիսկոպո-
 սաց, խոհեմազարդ խորհրդականաց, գեր-
 իմաստ վարդապետաց, պարկեշտասուն սար-
 կաւագաց, եւքաղցրաբարբառ դպրաց. ե-
 սրբազան պատրիարքն կայ 'ի մէջ նոցա 'ի
 գլուխ աջակողմեան դասուն որպէս ակն 'ի
 մատանեով, եւ վարդ 'ի մէջ բազմատեսատէ
 ծաղկանց. 'ի մէջ սոյն սեղանոյ եւ աւագ
 սեղանոյ 'ի ճակատ որմոյն է սքանչելագործ
 աւետեաց պատկերն սուրբ Աստուածածնի,
 որոյ աւետատու հրեշտակապետին 'Կաբրիէ-
 լի պատկերն է 'ի միւս կողմն աւագ սեղա-
 նոյ, որք են դէմ առ դէմ միմեանց . յորու
 բազում սքանչելիք եղեալ ասին . որ եւ տես-
 սութիւնք պատկերաց ինքնին վկայեն զհը-
 րաշագործութիւնս իւրեանց . 'ի սոյն ձախա-
 կողմեան դասէն 'ի վեր ելանեն չորս աստի-
 ճանաւ 'ի գերահոչակ ամենավայժառ լոյր
 աւագ խորանն՝ որ ամենափառառոր շքեղու-
 թեամբն յապուշ կրթէ զբոլոր տէրունական

ուխտաւորսն , եւ ինքնին սկսանի բղխիլ հո-
 սիլ յաչաց նոցա գետք արտասուաց . 'ի ներ-
 քոյ սորին է եդեալ ամենապատուական մար-
 մին սրբոյն Հակոբայ տեառնեղբայր արդար
 առաքելոյն : Աքանչելիս այս Յակոբ եղեւ
 առաջին պատրիարք մայր սուրբ աթոռոյս
 տեսչութեամբն Աստուծոյ եւ ընտրութեամբ
 սրբաղան առաքելոցն . եւ այս սուրբ աթոռս
 էր տուն նորա՝ որ վիճակեցաւ ազգիս հայոց
 տեղի սեպհական 'ի վաղուց անտի՝ զորմէ
 ունիմք ճառել առ յապայն . ըստ անուանն
 արդարութեան էր եւ վարք սրբոյն , որ-
 պէս եւ մեծին Յակուսայ զլսադրի . ուստի
 յանուն սոցա կոչի այժմ սոյն գերաշուշակ
 սուրբ գահս . մայր սուրբ աթոռ սրբոց
 Յակոբեանց . որ 'ի վերայ երկուց անգլո-
 րելի Հաստատուն սեանց կառուցեալ կայ
 անշարժ մինչեւ ցայժմ . եւյուսամք թէ մինչ
 'ի կատարած աշխարհի եւս առաւել շքե-
 ղութեամբ կայ եւ մնայ 'ի պայծառութեան ,
 'ի պարծանս ըրութեան ազգիս հայոց .
 ևնդրեմք 'ի տեառնէ զի միշտ փառաւոր եւ
 Հաստատ պահեսցէ , եւ զմեզ զամենեսեանս
 'ի սէր սորա անքակտելի կապեսցէ :

Պարտիս աստանօր ո՞վ հոգիդ ջերմե-
 ռանդ ածել ՚ի միտ զվարս եւ զկատարած
 սրբազան առաքելոյս, եւ զնոսին փութալ
 յանձին քում ցուցանել. զի հաղորդ գտա-
 նիցիս փառաց նորա. տինա՛ ուղղեա՛ զղեկ
 անձինդ ՚ի ճանապարհն արդարութեան, եւ
 օրինակ կացո՛ զքեզ ամենեցուն իբրեւ զնա
 սրբութեամբ եւ առաքինութեամբ. հանըզ-
 քեզ ըստ սմին յաշտարակն բարձրութեան
 Աստուածահամոյ բարեմասնութեան. եւ
 միանդամայն կալ զանձնդ ՚ի վայրն խոնար-
 հութեան, եւ մի՛ ցաւս կրէր ընդ անկումն
 քո ՚ի խոնարհ վասն սիրոյն արքայութեան.
 Նա եւ մատո՛ զզլուխդ ընդ նմին խորտակ-
 ման փորձութեանց եւ նեղութեանց աշ-
 խարհի որք են պարգեւք Աստուծոյ: Եւ մի՛
 ընդդիմանար երբէք ձախողութեանց, տա-
 լով զքեզ հեշտութեանց երկրաւոր ցան-
 կութեանց. այլ տոկա՛, համբերեա՛, լոեա՛
 եւ ժուժեա՛, զի ընդ նմին վայելեսցես եւ
 ուռ զփառս անվախճան կենաց: Դիքն
 սրբայ անշանցս է կիսագնտակ, եւ ՚ի վերուստ
 ունի զոսկեղեն խաչկալս եւ զերիս գեղեց-
 կատեսիլ կաթուլիկէս հանդերձ մէն մի տէ-

բունական փոքր պատկերաւ, եւ միջինն է
բարձր եւ վայելուչ յոյժ՝ որք զերկնից կա-
մարացն բերեն յինքեանս զօրինակ պայծառ-
ութեամբք իւրովք :

Ենցեալ եւ ընդ այս հրաշափառ սեղան՝
երթաս յաջակողմեան ուասն՝ ուր է սեղան
սրբոյ կարապետին, 'ի գլուխ սոյն դասի է ա-
մենահռչակ գեղեցկատեսիլ աթոռ տեառն-
եղբայր սրբազան առաքելոյն Յակոբայ .
յորոյ վերայ եւս կառուցեալ կայ ամենա-
փառաւոր կաթուղիկէ . աստ ո'չ նստի սըր-
բազան պատրիարքն . միայն թէ 'ի տարւոջն
միանգամ, եւ այն իոր կէս ժամ, յաւուր
տօնախմբութեան սրբազան առաքելոյն .
բայց միշտ կայ զարդարեալ ընտիր գորդիւ
եւ ամենայն շքեղութեամբ . կից ընդ սմա
է եւ աթոռն սրբազան պատրիարքի 'ի կողմն
ատենի . ուր բազմին միշտ աստուածընտիր
արժանաժառանդ պատրիարքունք : 'Ի վախ-
ճանիլ պատրիարքաց՝ սեւազգեստիւք շրջա-
պատեն զերկոսին աթոռան եւս, մինչ 'ի
յատկանալ նորոյն՝ որ յայնժամ պայծառ
զգեստիւք զարդարեն : Օայլ եւս զանազան
շքեղութիւնս եւ զզարդս սրբոյ տաճարիս .

եւ ահեղակերպ սքանչելի պատկերս՝ որք
շրջապստեալ կան զերեսօք որմոցն, եւ մա-
նաւանդ երկուց դառուց արտաքոյ սեանց
եղեալ, եւս արտաքոյ դրան սուրբ գլխադ-
րի ամենապայծառ հրաշալին Աստուածածնի
պատկերսն, նա եւս 'ի հանդիսաւոր աւուրս
զարիֆիափայլ զարդարանս եւ զանթիւ կան-
թեղս, եւ զբաշմաշտանակ գեղեցիատեսիլ
ջահսն, զզարմանալի բարձրահասակ աշ-
տանակսն, եւ զգեղեցկանկար մոմեղէնսն՝
որովք լուսաւորին 'ի պարծանս ազդիս. ո՞վ
կարէ մի զմիոյ ճառել, որ տեսողաց է մի-
այն գլտելի, եւ մեկնողաց 'ի նմանէ կսկիծ
անմոռանալի: 'Ի մեջ սուրբ Յակոբայ հա-
մայն վեր 'ի վայր մշտավառ կանթեղքն են
քառասուն եւ հինգ:

Ապա ե եալ 'իսոյն յաջակողմեան դասէն
գտանես անդ միջադուռն մի սատափագործ
յորոյ աջակողմն է սքանչելատեսիլ պատկերն
տէրունական. որ պայծառագոյն է քան զա-
մենայն պատկերս, եւ է կից ընդ գերեզ-
մանի գլխադրին. որոյ առաջի սեղանս յօ-
րինեն յաւուր տօնախմբութեան որդւոցն ո-
րոտման փառաւոր զարդուք: Ա տանես ընդ

այս դուռն՝ ուր է փոքր եկեղեցի մի յանուն
 սրբոյն Ատեփաննոսի՝ որ ունի զերիս սե-
 ղանս . յաջակողմն Լուսաւորչի անուամբ . եւ
 ընդ մէջ այսօր սեղանոյ եւ աւագ սեղանոյ է
 փոքր սեղան մի խաչելութեան՝ սակաւ ինչ
 'ի վայր , ուր զգեստաւորին 'ի մէջ սրբոյ Յա-
 կոբայ մատուցեալ պատարագաց ժամարարք
 թէ վարդապետք թէ եպիսկոպոսունք եւ
 թէ սրբաղան պատրիարքն . իսկ աւագ սե-
 ղանն է յանուն սրբոյն Ատեփաննոսի՝ ուր
 հանդիսաւոր պատարագ մատչի յաւուր տօ-
 նախմբութեան իւրոյ . եւ ձախակողմեան սե-
 ղանն է աւագանն Կիւրղի Երուսաղէմի սրբ-
 բազան հայրապետի՝ որ անդ մկրտեաց իւր
 հարիւր հազար հոգիյաւուր երեւման կենսա-
 տու սուրբ Խաչին , ուր կայ տակաւին երկա-
 թեայ սուրբ Խաչն . որով սրբեաց զջուրնյայ-
 նը մժամանակի սուրբ հայրապետն . որ պահի
 մինչեւ ցայսօր 'ի վկայութիւն եւ 'ի հաստա-
 տութիւն նոյն եղեալ աստուած ահրաշ իրու-
 ղութեանց . կից ընդ սեղանոյս է դուռն իւ-
 ղատան սրբոյ տաճարիս : 'ի մէջ սոյն եկե-
 ղեցւոյս զգեստաւորին ամենայն եկեղեցաւ

(32)(

կանք, թէ 'իսուրբ պատարագի, եւ թէ 'ի
հանդիսի, 'ի սմաեն բուրվառք սարկաւա-
գայ, 'իսմանէ ելանեն երկոտասան աստի-
ճանաւ 'ի շքեղափայլ ուկեզօծ ամպիոնն-
ուր օր ըստ օրէ ընթեռնանի յայումաւուրն
ըստ աւուրն պատշաճի. 'ի սմաէ սուրբ ա-
ւազանն մկրտութեան երախայից, 'ի սմաէ եւ
տեղի ինչ՝ ուր երբեմն բաղմի աւագ լու-
սարար արքեպիսկոպոսն տռ 'ի նկատել զա-
րարմունս սարկաւագաց եւ դպրաց. զի. է
գերագոյն կառավարիչ 'ի վերայ եկեղեցա-
կանաց ըստ սահմանադրութեան նախկին
սրբազան հայրապետաց, 'ի մէջ սոյն եկե-
ղեցւոյս է եւ փոքր դուռն մի՝ որ հանէ ըզ-
քեզ 'ի մոմատունն. անտի 'ի վեր ելեալ աս-
տիճանօք՝ գնաս 'ի տանեաց դէպ առ կողմն
արեւելեան, եւ անդ գտանես միասեղան
փոքրիկ մատուռն մի շքեղափայլ՝ որ կոչի
Հոգին սուրբ, ուր սրբազան հայրապետն
Դրիգոր՝ պարոնտէր կոչեցեալ, տեսեալ
ակն յանդիման զո՞ոգին սուրբ յաւուր Պետ-
տէկոստէի. վասն այնր կառուցեալ է զայս
փոքր եւ գեղեցիկ եկեղեցին. աստ երբեմն
ժուրբ պատարագ մատչի: 'ի ներքոյ սորա է

սուրբ Խարոսի անուամբ կառուցեալ ամենաչքնաղ փառաւոր եկեղեցին՝ որոյ ճանապարհն է 'ի մէջ ուխտաւորաբնակ թաղից, մտեալ 'ի նայարտաքին դրանէ՝ երկոտասան աստիճանաւ իջանես 'ի վայր, եւ 'ի թիկունս դարձեալ գտանես զերկաթեայ դուռն եկեղեցւոյն. խի առաջի դրանն է փոքր սեղան մի, որ կոչի սուրբ Առնդուխտմուտ 'ի ներքս, եւ տեսանես շըջապատեալ բոլորովիմբ յախճապակաւ, եւյոյժ գեղեցկատեսիլ պատկերօք զարդարեալ. ունի միայն աւագ սեղան՝ ամենայն վայելչութեամբ զարդարեալ. 'ի ճախտկողմն սեղանոյն է փոքրիկ մատուռ մի. սուրբ Աներկեսիսի անուամբ՝ անդ եղեալ կայ եւ մասունք նորա արծաթապատեալ, 'ի յաջակողմն դասին՝ լնդ երես որմայն է փոքր տեկի մի աւազանանման՝ ուր է գերեզման Խէռդորոսի՝ որդւոյ Լեւոնի արքայի մը բում կիլեկեցւոյ. աստ է եւ դուռն աւանդատան՝ ուր մտեալ տեսանես գեղեցիկ սեղան մի յանուն որբոյն Արապետի. ուր զգեստաւորին պատարագամատոյցք եւ այլ եկեղեցականք 'ի լինելն աստ սուրբ պատ

տարագ: Ահա այսքան են ուխտատեղիք եւ
սեղանք պարունակեալք 'ի մէջ գերագահ
սրբոյ աթոռոյս սրբոց Յակոբեանց : Ահա
այսպիսի պատուական գանձք են 'ի մի գու-
մարեալ աստ 'ի մէջ ամենացանկալի սուրբ
վանուցս : Ահա այսոքիկ են գլխաւոր պար-
ծանք հայկազնեան ազգիս՝ պարգեւեալ եւ
վիճակեալ 'ի Տեառնեղբօքէ անտի մինչեւ
ցայժմ գիտութեամբ ամենայն ազգաց . եւ
մանաւանդ տեսչութեամբն Աստուծոյ :

Առաջին հիմնադրութիւն սրբոյ աթո-
ռոյս եղեւ յԱռաքելոց անտի՝ որք յորժամ
նստուցին զերանելին Յակոբ Տեառնեղ-
բայրն եպիսկոպոս եւ առաջին տեսուչտանն
Աստուծոյ . շինեցին աստ փոքր մատու-
իմն առ 'ի կատարել զահաւոր խորհուրդն
սուրբ պատարագի . զի սոյն տեղի՝ տուն
եւ բնակարան էր սրբազն Առաքելոյս որ-
պէս յառաջադոյն եւս առաջաք : Օառաջին
հիմնադրութիւնն քրիստոնէական սուրբ ե-
կեղեցւոյ աստ հաստատեցին սրբազն ա-
ռաքեալքն : Իսկ յորժամ եկն թագուհին
Նեղինէ՝ ո՛չ մայրն Կոստանդեայ, այլ կինն
Աբգարու թագաւորին մերոյ՝ առաջին պըտ-

Ղոյն քրիստոնէութեան Արամեան ազգիս .
ասի Թէ՝ այսր էջ՝ 'ի սուրբ աթոռս , որ
յայնժամ սով սաստիկ էր՝ 'ի քաղաքիս այս-
միկ . Եւ ինքն թագուհի գոլով միջագե-
տաց՝ որպէս պատմեն Յովսե . Խորեն .
Եւսեբ . Հայոց պատմու . Արքի . Եւ այլք
բազումք . բերեալ ընդ իւր ցորեան բա-
զում Եղիպաոսէ՝ լիացոյց զամենայն բնա-
կիչ . Երուսաղէմի , Եւ սկսաւ շինել զմա-
տուոս զայս՝ օրինաւոր եկեղեցի . բայց ո՛չ
որպէս զայժմեանս : Այն մեծահաւատ Հայ-
կաղուն թագուհիս Նեղինէ՝ աստ՝ 'ի սուրբ
քաղաքս վճարեալ զկեանս իւր բարի մահ-
ուամբ . Թաղեցաւ առաջի դրան սրբոյ քա-
ղաքիս՝ 'ի նշանաւոր տեղւոջ՝ որ կայ մինչեւ
ցայժմ :

Եւսպիսի պայծառութեամբ մնացեալ
սուրբ աթոռս յաջորդութեամբ եպիսկոպո-
սաց՝ որպէս լաւագոյն պատմէ Եւսեբիոս
պատմին , մինչ՝ 'ի ժամանակս առաջնորդու-
թեանն տաճկաց՝ Ահմէտ կոչեցելոյ . որ
յերարդ ամի իշխանութեան իւրոյ եկեալ
'ի սուրբ քաղաքս , Եւ բազում մարդասիրու-
թիւնս տեսեալ յազգէն մերմէ՝ ետ՝ 'ի ձեռս

(36)(

մեր գիր հաստատուն՝ իւրով ձեռամբ իսկ
էրոշմեալ . թէ վանքն սուրբ Յակոբայ՝ որ
կոչի՝ ի մէնջ Արքադուակ . Լիցի սեւիա-
կան վանք եւ բնակութիւն հայոց ազգի՝
որպէս եւ է մինչեւ ցայժմ . եւ ո՛չ այլ ոք
՚ի միւս քրիստոնէից ունիցի իշխանութիւն
ձեռս արկանել սմա . կամ բոամբ յափըշ-
տակել ՚ի ձեռաց հայոց . եւ թէ մի անձն
միայն մնասցէ ՚ի հայոց ազգէ յայսմքա-
ղաքի՞նա տիրեսցէ սմա , եւ ո՛չ այլ ոք .
Եւսպիսի հաստատութեամբ Եւնզովիւր
կրօնից իւրեանց գրեալ եւ կնքեալ զհրո-
վարտակն զայն ետ մեղ . որ է ՚ի մել մին-
չեւ ցայսօր :

Խսկ յետ ժամանակի մինչդեռ տիրեցին
մեր հայկազուն թագաւորքն Արևիկիոյ , եւ
անտիւ մինչեւ ՚ի Նրէաստան եկին բարե-
պաշտ թագաւորքն Եւոն եւ Նեթումիր
սուրբ քաղաքս . ո՛չ թէ երկուքն ՚ի միա-
սին , այլ իւրաքաչիւրն ՚ի ժամանակի տէ-
րութեան իւրոյ . եւ արարին բազում շինու-
թիւնս սրբազան տեղեաց . որոց առաջինն
եղեւ նորոգումն սրբոյ աթոռոյս , Հայն եւ
ընդարձակ դրութեամբ , բարձրակառոց եւ

Հոյակապ հաստատութեամբ 'ի վերայ չո-
 րից սեանց՝ որ ամենապայծառ շքեղութեամ-
 բըն ապշեցուցանէր զամենայն ազգս. եւ
 մինչեւ ցայսօր է նոյն թագաւորաշէն պայ-
 ծառութիւն սրբոյ աթուոյս՝ որ է պարծանք
 պարծանաց լրութեան ազգիս քաջ հայոց.
 Այս բարեպաշտ թագաւորքն ո՛չ միայն զա-
 թսոս զայս՝ այլ եւ բազում սրբազն տե-
 ղիս նորոգեցին. թէ 'ի մէջ սուրբ Յարու-
 թեան, եւ թէ արտաքոյ. որպէս զհրեշտա-
 կապետն, զսուրբ փրկիչն, զսուրբ համբար-
 ձումն, զսուրբ Աստուածածնի սարսափելի
 գերեզմանն, եւ մանաւանդ զսուրբ ծնունդն.
 զի սրբոյ ծննդեան սոյն զարմանալի սեամբք
 զառաջին հոյակապ կառուցումն ասեն լինիլ
 'ի մերս քաջ Տրդատայ. եւ երկրորդ նորո-
 գումն յառաջին Նեթում թագաւորէն Կի-
 լիկիոյ, որ 'ի վկայութիւն նորին՝ գիր եւս
 գրեալ կայ հայերէն մինչեւ ցայժմ 'ի վե-
 րայ միջին տախտակեայ ղրան մեր այսպէս
 " 'ի թուին հայոց զճհզ, կազմեցաւ գուռս
 այս տաճարիս ձեռամբ տէր Աբրահամին եւ
 տէր Առաքելոյ, 'ի թագաւորութեանս հա-
 յոց Նեթմոյ որդւոյ կոստանդնի. Վրիս-

Այս Աստուած ողորմի աշխատաւորաց,,
 Զի յայնմ ժամանակի սուրբ ծնունդն,
 սուրբ գողգոթայն, եւ սուրբ համբարձու-
 մըն, յատուկ տեղի սեփական էր ազգիս
 հայոց. բայց յետոյ անիրաւութեամբ եւ
 Խարդախութեամբ յափշտակեալ են յոյնք.
 մասն ինչ թողլով՝ ի ձեռս մեր: Այս Հե-
 թում ունի եւքանի ինչ սենեակս ՚ի մեջ
 սուրբ Քակոբայ վանուցս՝ որ մինչեւ ցայ-
 սօր յիշին Հեթում թաղաւորի սենեակք:
 Իսկ քաջն Լեւոն յետ նորոգելոյ զբազում
 տեղիս, կանգնեաց նա եւս զեկեղեցի մի
 ողջոյն ՚ի վանս մեր յանուն սուրբ Թաորո-
 սի. զի ունելով ընդ իւր որդի մի սիրելի՝
 Խմարոս անուն. աստէն վճարեալ է զկեանս
 իւր կոյս մանուկն Թաէողորոս. ուստի ամ-
 փոփեալ աստ արքայն Լեւոն զմարմին որդ-
 ւոյ իւրոյ սիրելոյ՝ կառուցեալ է զայս վա-
 յելուչ կեղեցի՝ յանուն որդւոյ իւրոյ սուրբ
 Թաորոս՝ որ յսուած ասացաք:

Իսկ յետ ժամանակաց մինչ փայլէրյայ-
 սըմ պայծառութեան վանքս մեր գերահըռ-
 չակ. եկն եհաս Ավլահէտտին անուանեսլ
 սովթանն Լրգիպտոսի. որ տեսեալ զպայծա-

ոռւթիւն սորա, կամեցաւ յափշտակել 'ի
 ձեռաց մերոց. բայց խղճալի ազգն մեր առ
 հասարակ դիմեալ յոտս նորա աղաչեցի ն լոյժ,
 զի մի զրկեսցէ 'ի սեփսկան բնակութենէ
 մերմէ. եւ նա զիջեալ փոքր ինչ՝ ասէ. կը ն-
 քեմ այժմ զվանքս այս նշանաւ իւիք, եւ
 մնանցէ այնպէս մինչեւ դարձայց 'ի Դա-
 մասկոսէ. եթէ յայնժամ գտանեմ զնշանն
 իմ հաստատուն՝ շնորհեմ ձեղ. թէ ո'չ 'ի
 բնակութիւն լիցի ինձ, եւ այսպիսի վճռօք
 ի քն միայն մտեալ 'ի ներքս որբոյ տաճա-
 րիս, եւ գաղտ 'ի վառ թողեալ զաւագ սե-
 ղանոյ կանթեղն ել արտաքս. եւ կնքեալ
 զղրունս սրբոյ տաճարիս գնաց. զի բուռն
 էր զօրութեամբ եւ ինքնակալ. յայնժաման-
 ձարացեալ մերս խղճալի միաբանութիւն.
 զաւատուհանն, որ է ընդաջմէ դրան օծեալ
 իր սեղան, եւ եղեալ պատկեր. խաչ, ա-
 ւետարան, յանուն սրբոյն Վէորգայ. պաշ-
 տէին անդ զժամերդութիւնս եւ զսուրբ պա-
 տարագն ցեօլն ամ. որպէս քաջ պատմէ
 պատմապիրն հայոց. իսկ զինի եօթն ամաց
 մինչ յեկն Ալահէտաբին 'ի Դամասկոսէ
 ընդ առաջ ելեալ մերայինք յիշեցուցին ըզ-

խոստմունս իւր, եւնա եկեալ բազմու-
 թեամբ 'ի վանս մեր. ելոյծ զկնիքն 'ի գլ-
 րանց եւ մտեալ 'ի ներքս, ետես զի վառեր
 տակաւին կանթեղն աւագ սեղանոյն. եւ
 սարդիոստայնքն պատեալ էին 'ի վերայ նո-
 րա. շայնժամ զարմացեալ յոյժ սուլթանն
 շնորհեաց զվանս մեր կրկին մեզ. եւ ան-
 ձամբ վկայեաց թէ վանքս այս յըստուծոյ
 է պարզեւեալ հայոց. եւ ո՛չ 'ի մարդկանէ.
 ուրեմն նզովեալ եւ անիծեալ լիցի ով ոք եւ
 կամիցի յափշտակել զայս 'ի ձեռաց հայոց.
 այսու բանիւ ետ եւ հրովարտակս դրոշմ-
 եալս ձեռամբ իւրով մեզ. նա եւս ետ զը-
 քել 'ի վերայ արտաքին դրան վանուցս՝ ա-
 րապի գրով զայս հաստատութեան գիրն.
 որ նոյն գրեանք կան մինչեւ ցայժմ 'ի վա-
 նըս մեր ։ Բայց 'ի վերայ այսր ամենայնի մե-
 ծապատիւ եղբարքն մեր յոյնք չվերջանան
 երբէք ձեռներէց գտանիլ երբեմն երբեմն
 շփոթմանց վասն սրբոյ աթոռոյս, զրգու-
 թով զայլ եւ այլ ունայն վէճս եւ առիթո
 խռովութեանց. չպատկառին գոնէ 'ի վկա-
 յութեանց պյլասեռ ազգաց՝ որք եւ հեթա-
 նոսք գոլով՝ անձամբ վկայեն թէ 'ի տես-

չութենէ Աստուծոյ պարզեւեալէ վանքս
այս սուրբ Հակոբ՝ հայոց յառաջուց անտի .
սակայն ո՛չ գիտեմ թէ յիմմէ՞ յառաջանան
այսպիսի չարաչար նախանձութիւնք . եթէ
աշակերտք իցեն Քրիստոսի . որպէս խոս-
տովանին բանիւ գոլ, ո՛չ պարտին երբէք
այսպիսի ինչ առնել այլոց, եւ մանաւանդ
եղբարց . որպէս եւ Քրիստոս վարդապետն
եւ ուսուցիչն մեր չարար . եւ ո՛չ հրամայեաց
եւս աշակերտելոց իւրոց առնել զայսպիսի
չարիս :

Թուի թէ չունին բաւական տեղեկու-
թիւն հին եւ նոր ընտիր մատենից, որք այլ
եւ սյլ օրինակօք վկայեն սեփական գոլ հա-
յոցս . սոյն սուրբ աթոռս ՚ի բնէ անտի,
եւ կամ կօղմնակի ընթեանլով զայնոսիկ՝
յատկապէս ընդ հակառակն ընթանան եւ
թիւրեն, ոչինչ զրելով երբէք զնախատինս
եւ զանուանաշահութիւնս եղայրատեցու-
թեան . որովք քանիցս քանիցս փայլեալ են
՚ի մէջ ազդաց եւ աղանց . թուի թէ ո՛չ
այլ ինչ եթէ ոչ այն առաջին ա՛իրաւ յա-
ջողութիւնք յանդկնութեան իւրեանց դըր-
գեն միջաւ զնոսա միջամուխ լինիւ յայսպիսի

շփոթածին դրդիռս . զորօրինակ յառաջա-
 գոյն նենգութեամբ եւ բըռնութեամբ տը-
 րոց յափշտակեալ են անիրաւաբար զտեղիս
 տեղիս 'ի ձեռաց մերոց . որպէս զսուրբ գող-
 բոթայն , որ յայտնի վկայեալ է յամենայն
 պատմագիրս լինել մեր . եւ զսուրբ ծննդեան
 Վրիստոսի զմեծ մասն , զհայր Աբրահամու
 վանքն . եւ զայլ բազում սրբազան տեղիս ,
 թէ 'ի մէջ սրբոյ ՀՅառութեան , եւ թէ ար-
 տաքոյ . ուրեմն յաստուածուստ իմն իսկ է
 զի երբեմն յանյաջող դիպուածս անկանին
 յարդարադատ վրէժինդրութենէն Աստու-
 ծոյ . որպէս երբեմն շփոթ ինչ հանելով
 վասն սրբոյ աթոռոյս անուղղակի իմն կեր-
 պիւ հրովարտակս առեալ յարքունուստ եւ
 ժողովեալ զքազում երեւելիս ազգաց իւր-
 եանց 'ի Պօլիս , մտեալ են 'ի նաւ մեծամեծ
 վիքացմամբ գալ եւ բոնոթեամբ յափշտա-
 կել զվանս մեր 'ի ձեռաց մերոց . եւ 'ի ձա-
 նապարհի զլխովին անգնդասոյզ են եղ-
 եալ 'ի մէջ ծովու հանդերձ անմեղ նաւա-
 վարօքն . չապրիլ 'ի նոցանէ բաց 'ի միոյ
 պառաւոյ . եւ այն 'ի վկայութիւն սքանչելի
 եւ աստուածահրաշ իրողութեանց . զի նոյն

ողառաւն ինքնին վկայեալ է թէ եկն եհաս
այր մի սեւամօրուս, քաջ եւ կորովի, եւ
իսկոյն կալեալ զկայմն նաւին սպառնալեօք
իմն՝ ի վայր տապալեաց. եւ զիմ ձեռանէ
կալեալ՝ ի վերայ միոյ տախտակի անվեսաս եւ
հան ցամաքն. եւ ասաց ինձ թէ գնա' եւ
պատմեա' զոր ինչ տեսերդ. այրն այն քաջ
յայտ իսկ է թէ, եր առաջնորդն եւ պար-
ծանքն տիրասէր ազդին մերոյ՝ գլխալիր սըր-
բաղան առաքեալն Յակոբոս՝ որ արագ եւ
քաջահաս է յինքն յուսացեալ եւ ապաւին-
եալ խղճալի ազդիս: Բազում եւ այլ այս-
պիսիք մինչեւ յայտմ լինին, եւ լինելոց եւս
են. թէ ո՛չ զղջասացին յայսպիսի նենդամիտ
դաւաճանութեանց իւրեանց:

Խնդրեմք՝ ի մարդասիրէն Աստուծոյ՝ զի
ինքն գթասցի՝ ի վերայ ամենեցունս. եւ
մանաւանդ՝ ի վերայ նոյն մեծապատիւ եղ-
բարց մերոց. եւ զիջուսցէ զբորբոքեալ նա-
խանձս նոցա, զի մի՛ քինախնդիր ատելու-
թեամբ եղբարց իւրեանց արդիւնաւորեա-
ցին զյաւիտենական կորուստն. այլ կա-
պակցեալ Աստուծածային սիրով ընդ մեզ եւ
ընդ ամենեսին, որպէս եւ մեք ընդ նոսա-

Ակցուք պի սիրա եւ մի հոգի . որպէս եւ
պարտն պահանջե եւ լստուած կամր . եւ
մեզ քրիստոնէիցս վայելէ , որով եւ մար-
թասցուք վայելչապէս մատուցանել զփառ
եւ զպատիւ պաշտելի եւ երկրապելի տը-
նօրինական սրբազնասուրբ տեղեաց տեառն
մերոյ Հիսուսի Քրիստոսի , ՚ի հաճութիւն
եւ յընդունելութիւն Հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ միշտ եւ հանապազ . ամէն :



ԴԱՍԻ Բ.

Յ աշխա գնալոյ յերինանման պահարն սրբոյ
Յարութեան, և կարգաստ շրջադայելոյ ըստ
պահօնինական սրբազն պեղիս և շարուց
նոյն :

Մահեց 'ի տունքո, եւ երկրութագից
'ի տաճար սուբրքո երկիւղիւքո,
(Ապշ. և 6):

Ելեալ 'ի վանուց սրբոյն Յա՛ւրայ,
ուղղակի գնաս յառաջին ձանապարհ, յորմէ
եմիր 'ի վանս . յորժամ հասանես 'ի գլուխ
կրպականոցին՝ խոտորեա' զշակիղս քո առ
արեւելս . եւ փոքր ինչ իջեալ 'ի վայր 'ի
կրպականոցն՝ դառնաս անտի 'ի կողմն հիւ-
սիւսոյ, սակաւիկ եւս գնացեալ առ սրե-
ւելս, եւ անտի փոքր ինչ վայր իջեալ գլ-
տանես զարտաքին փոքրիկ դուռն Աստուա-
ծահրաշ տաճարի սրբոյ Յարութեան . որ է
նեղ եւ անձուկ ըստ բանի Տեառն . որպէս
թէ վերնական իմն տեսչութեամբ դիպեալ .

Եցէ դրութիւն՝ դրանս այսմիկ առ ՚ի յիշեցուցանել մտեցելոցն ՚ի նա զհետեւիլն նեղութեան յայսմ կենյաղի . զի ՚ի հանգերածելումն զկ' տանս ընդարձակ'ս եւ խաղաղականս արժանասցին վայելել . որպէս եւ ասամտեալ յայսմ նեղ եւ անձուկ դրանէ՝ հասեալ ժամանեն ընդ լայն եւ արձակ հոյակապ եւ սքսնչուի ահսդին դուռն երկբերան եւ երկաթեայ . ամենացանկալի սրբոյ Յարութեան . բայց նախ քան զմտանելդ ընդ այն՝ գոն եւ այլ ինչ ուստատեղիք շուրջ զընդարձակսդիր միջաբակիւն սրբոյ տաճարիս : Աախ ՚ի յաջակողմն սոյն բակի յարեւելս կոյս է փոքր վանք մի մեր , հայր Ռքրահամի անուամբ . ուր ասի թողեալ Ռքրահամ նահապետն զիւայտաբարձ էշն եւ ըզծառայն ընդ նմա . եւ բարձրացեալ զիւայտըն յուսն Խսահակայ միածին որդւոյ իւրոյ . ել ՚ի լեառն Կողդոթայ՝ մատուցանել զԽսահակ պատարագ տեառն Ռստոծոյ . որում յոյնք տիրեալ են այժմ անիրաւութեամբ : Աից ընդ նմա է սուրբ Յոհաննէս աւետարանչի անուամբ կառուցեալ փոքրիկ եւ գեղեցիկ եկեղեցին մեր՝ որ զարդար-

եալ է ամենայն շքեղութեամբ . մանաւանդ
 նորաշէն տէրունական պատիերօք փորս
 կերտեալ մարմարոնեայ զւրմանսլի քա-
 րամբ . ունի զերիս փոքրիկ սեղանս . 'ի
 մէջյաշիողմեան սեղանոյն զետեղեալ կայ
 կէսն կճե ոյ սեան՝ յոր պրկեցաւ Փրիստոս
 'ի գիշերի չարչարանացն 'ի տան Կայիափայի .
 այսինքն՝ 'ի սուրբ Գրկիչն . եւ կէսն սո՞ն
 սեան է յեկեղեցւոյն լասինաց՝ որ 'ի մէջ
 արբոյ Յարութեան . աւագ սեղանն է յա-
 նուն սրբոյն Հոհաննու աւետարանչին : Ա-
 սի թէ՝ աստ է յանձնեալ Փրիստոս զմալրն
 իւր՝ Հոհաննու . ասելով . կին դու ահա որ-
 դի քո . եւ ցը Հոհաննէս թէ՝ ահա մայր քո .
 իսկ ձախակողմեան սեղանն է՝ յանուն հայր
 Արքահամու : Ելեալ աստի կից ընդ սմա-
 գտանես զղպոց հրեշտակապետի վանքն .
 որոյ մի դուռն եւս 'ի վեր կողմն է որոյ ձա-
 նապարհն յալլ ուրեք է . 'ի մէջ բակի այս
 վանսւցս է հին ծառ մի ձիթենի , զորմէ ա-
 սեն կախեալ խոյն փոխանակ Խսահակայ .
 այն վանքս ընդ տեսչութեամբ սրբոյ ա-
 թոռոյն մերոյ 'ի ձեռս զպտոց եւ հա-
 պէշեց է , երկու եկեղեցիս ունի վեր 'ի

վայր փոքր փոքր հանդերձ երկոտասան սեռ
 նեկօք . ուր բնակին աղքատիկ հապէշք
 շնորհիւ աթոռոյն մերոյ : Աստի քանի ինչ
 քայլ յառաջ է փոքր եկեղեցի մի յունաց
 սուրբ Հոհաննէս աւետարանչի անուամբ .
 յոյնք ասեն թէ աստ յանձնեաց Վրիստոս
 զմոյրն՝ Յոհաննու : Աստի դարձեալ դէպ
 'ի դուռն սրբոյ տաճարի՝ գտանես ութն
 աւտիչմնու 'ի լոր փոքր մստուռ մի լստի-
 նաց . կից զրբալսուրբ Գողքոթայի , Ար-
 քիամու եղիպտացոյ անուամբ . այս Ար-
 քիամս վասն բալմութեան մելայն՝ արգել-
 եալ 'ի մտանելոյ 'ի սուրբ Յարութեան տա-
 ճարին , յաներեւոյթ զօրութենէ սրբազան
 տեղեացն . եւ աստ ապաշխարեալ ժամանակ
 ինչ , ապա երաշխաւորութեամբ պատկերի
 սուրբ Աստաւածածնի՝ որ այժմ 'ի մեր վեր-
 նատան է . մտեալ է մեծաւ ջերմեռանդու-
 թեամբ 'ի սուրբ եւ հրսչալի տաճարն :
 Ասրձեալ աստի ե'կ 'ի ձսիսկողմն բակին .
 եւ անդ է հնաշէն եկեղեցի մի յունաց քա-
 նի մի ինչ սեղանով սուրբ Յակոբ ան-
 ուամբ . կից ընդ այս վանուց է բարձր շի-
 նութիւն մի իբր աշտարակ . զորմէ ասեն լի-

նիլ յառաջադոյն զանգակատուն : Յետ այս
 սորիկ գաս յամենափառաւոր դուռն երկնաշ
 նման տաճարին սրբոյ հարութեան . ՚ի վեր
 ամբարձ նախ + զաջս քո , եւ աե՛ս ՚ի վերայ
 դրան զանազան պետկերօք փորակերտեալ
 կձեայ քարինս զարմանալիս . եւ զերկուց
 կողմանց սքանչելահրաշ սիւնս , թո՛ղ զա-
 հազին տեսիլ դրանս՝ որ զտեսողսն իսկոյն
 յապուշ կրթէ . ոչ թէ նիւթական տեսիլն
 միայն , այլ եւ տեսականն , զի զվերին ար-
 քայութեանն ունի զօրինակ . յաջակողմն
 սոյն դրան է կարմրագոյն փոքր ինչ պա-
 տառեալ սիւն մի՝ յորմէ ասենկ լոյս բղխեալ
 երբեմն յայտնապէս . ՚ի մրտ աճ աստանօր
 ո՛վ հաւատացեալդ ՚Քրիստոսի զամենայն
 փրկառիթ տնօրէնութիւնս տեառն մերոյ
 վասն փրկութեան ազգի մարդկան , եւ ՚ի
 բաց վտարեալ ՚ի սրտէ քումմէ զամենայն
 մահառիթ սերմունս չարին . ջերմեռադն սիւ-
 րով սուրբ հաւատով եւ յորդաբուղլս ար-
 տասուօք մուտ ՚ի ներքս , եւ անդ յիշեա-
 նախ՝ թէ ո՞ւր մտեր , զի տեղիդ յոր մտա-
 նես՝ տուն է Կատուծոյ եւ բնակարան ամե-
 նասուրբ Երրորդութեան . երկինք է յերկրի

Եւ ժողովարան հրեշտակաց, պարծանք հաւատացելոց եւ քաւարան մեղաւորաց . մտանելու իսկոյն ընդ առաջ ելանէ քեզ դէմյանդիման դրան գերամաքուր երկրպագելի պատանատեղն Արիստոսի՝ որ է իբր երեսուն ոտնաչափ 'ի դրանէ՝ ուր պատեցաւ Տէրն մեր 'ի Յովսեփիայ եւ 'ի Կիկողիմեայ ամենայն փառաւորութեամբ, խնկօք եւ մաքուր կտաւօք 'ի նշան արձակելոյ զմեզ 'ի կապից անջնջելի մեղաց : Աստ պարտիս ընծայել զառաջին պտուղ ջերմեռանդութեանքում գետնամած երկրպագութեամբ եւ արտասուաթոր համբուրիւ՝ ասելով . Աստուածիմ Յիսուս անձառելի է մարդասիրութիւնքո . որ վասն ծովացեալ մեղաց մերոցյանձըն առեր զամենայն չարչարանս եւ կրեցեր յօժարաբար . եւ այնու եւս ո՛չ շատացեալ մեռար եւ պատեցար աստ 'ի ձեռս հողեղէն մարդկան արձակիչը տիեզերաց :

Երդ երես անկեալ աղաչեմ զքեզ բարեգութ Աստուած՝ յիշելով զայս ամենայն մարդասիրական մեծ ողորմութիւնս քո՝ արձակեա զիս զբազմամելս յանքակտելի կապանաց մեղաց իմոց, եւ արժանի արա ըզ-

վայելուչն մատուցանել երկրպագութիւն սըր-
բազնասուրբ տնօրինական տեղեաց քոց ՚ի
փառս եւ 'ի պատիւ ամենասուրբ անուան քո։

Են աստ երկոտասան կերպնակիր զար-
մանալի աշտանակք . վեցն յոյժ մեծամեծք
եւ գեղեցկատեսք . եւ վեցն՝ փոքրադիրք եւ
վայելուչք . յորոց չորսն , այսինքն՝ երկու
մեծք եւ երկու փոքրունք են մեր . չորսն
յունաց , եւ չորսն լատինաց . եւս կախեալ
կան 'ի վերայ ոսյն տիրակիր տեղւոյս ութն
լապտերաձեւ կանթեղք . երկուքն մեր՝ չոր-
սն յունաց , մին լատինաց եւ մին զպտոց .
սրբազն տեղիս այս է մի միայն կարմրա-
գոյն մարդահասակ կճեայ քար մի անկիւ-
նաւոր . լայնութիւն նորա է երեք թիզ,
բարձր 'ի յատակէ իբր թիզ մի . Աստի հըն-
գետասան ոտն յառաջ՝ է որմն միոյ կողման
աշխարհամատրան տաճարին յունաց . որմս
այս զարդարեալ է բեհեղեայ ծածկութիւ ,
թաղման եւ այլ տէրունական զարմանալի
պատկերօք եւ կանթեղօք . ասի թէ 'ի ներ-
քոյ այսմ որմոյ կան շիրիք նախկին քրիս-
տոնեայ թագաւորաց : Աստի վաթսուն ոաք
յառաջ գնացեալ առ հիւսիս՝ գտանեօ զտե-

զին ուշաթափման սուրբ Աստուածածնի՝ ի ժամ խաչելութեան միածնի որդւոյ իւրոյ որ է յանդիման սուրբ գողգոթային. Եւ է առաջի դրան ըռեկիզին մերոյ, որ սեփիչականեալ է ազգիս մերում ՚ի վաղուց անտի. սոյն սուրբ Վայրս է փոքր ինչ տեղի բոլորակ. Եւ շուրջանակի պատեալ ունի ՚ի վերայ իւր երկաթագիր կաթուղիկէ մի յորոյ միջի կախեալ կայ մշտավառ կանթեղ մի. Եւ ՚ի վերայ նոյն կաթուղիկէին ունի կախեալ ջահ մի կանթեղօք Եւ աշտանակօք:

Աստ պարտիսյիշել զկսկծալի կիրս տիրամօր սուրբ Կուսին՝ որ տեսեալ զօրդին իւր միածին յանտանելի չարչարանս ՚ի վերայ խաչին, աղէկիզեալ մեծաւ կսկծանօք՝ անկառ ուժաթափ իբրեւ կիսամահ։ Հապա Եւ դու անկի՞ր ՚ի վերայ երեսացդ առաջի ամենօրհնեալ Տիրամօրն. ջանա՛ ամենայն սրտիւ Եւ ջերմեռանդութեամբ շարժել զնա ՚ի գութ. զի աստէն կարի փոյթ է վասն սիրոյ որդւոյն իւրոյ շնորհել իւրաքանչիւր խնդրաշաց զօդուտն իւր անխնայաբար :

Աստի ՚ի վեր ելեալ երեսուն Եւ ութ աստիճանաւ գտանես զվերնատունն մեր՝ որ կոչի

երկրորդ գողգոթայ . զի է ուղղակի յան-
 դիման գողգոթային . աստ է երկու վայել-
 չառես սեղան . մին խաչելութեան , յորում
 մատչի միշտ սուրբ պատարագն բացման դը-
 րան սրբոյ Յարութեան . իսկ միւսն՝ երաշ-
 խաւոր սուրբ Աստուածածնի , զոր յաւաջա-
 գոյն եւս յիշեցաք . աստ եւս միշտ սպասն
 դնի նոյն դրան բացման պատարագին . 'ի
 սոյն վերնատանս կան չորս շարան կանթեղք
 եւ երկու կերոնակիր մեծ աշտանակք . յե-
 տուստ խաչելութեան սեղանոյն են երեք
 լուսամուտք՝ սրբ ուղղակի հային 'ի սուրբ
 գողգոթայ . կոչնակք մեր 'ի սոյն վերնա-
 տան կախեալ կան . որք հարկանին 'ի սահ-
 մանեալ ժամու իւրեանց , եւ ո՛չ վայրկեան
 մի յետ կամ յառաջ . է աստ եւ փոքր իմն
 տեղի՝ ուր եւս 'ի վեր ելանեն հնգետասան
 աստիճանաւ . որ ասի կանանց վերնատուն .
 'ի կողմն սուրբ գերեզմանի 'ի մէջ ոտից
 գմբէթին փոքր ինչ 'ի վեր՝ են երկաթեայ
 ձաղք իրեւ լուսամուտք , որ անտի հային
 'ի վայր 'ի դուռն եւ 'ի շրջանակս սուրբ գե-
 րեզմանին . 'ի վայր իջեալ 'ի նոյն առաջին
 աստիճանաց՝ գնաս 'ի դիմաց ուշաթափման

դեպ առ սուրբ գերեզման երեսուն ոտք .
Եւ անդ ընդ մէջ ոտից գմբէթին զերեսօք
զորմոյն է գեղեցկատեսիլ ոսկեզօծ վայել-
չանկար սուրբ Աստուածածնի պատկերաւ
լայնաղիր սեղան մի մեր , իւղաբերից ան-
ուամբ . որ առ ինքն հայեցողաց զմիտսն
յապուշ կրթէ . եւ խկոյն զառուա արտաս-
ուաց ընդ ծնօտս 'ի վայր գետօրէն տայ իջու-
ցանել , եւ ունի փոքր շարան մի կանթեղ
առաջի իւր . աստ ասեն կանգնեալ իւղաբեր
կանայքն ասէին ընդ միմեանս . (ո՞վ թաւա-
լեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին) .
յաջ կողմն սորա 'ի վերայ ոտից գմբէթին
է եւս խաչելութեան պատկեր մի մէծաղիր
հանդերձ կանթեղիւ է . մեր : Աստի յառաջ
խաղացեալ իբր երեսուն ոտնաշափ՝ ժամանես
յաստուածաբնակ երկինն որ 'ի վերայ երկ-
րի . յուրախացուցին հրեշտակաց եւ մարդ-
կան 'ի կենսատու եւ լուսաբուղիս ամենացան-
կալի սրբազնասուրբ զերեզմանն տեառն
մերոյ Հիսուսի Վրիստոսի :

Երդ՝ ո՞վ կարիցէ այժմ աստ նկարագ-
րել զայս աննկարագրելի սրօբէասքանչ բը-
նակարանս տէրունեան . միթէ հա՞ր իցէ

արդեօք զայս տեսանել ումեք, եւ զարտաւ-
 սուս աշացն յետս արդելել կամ ծածկել,
 ո՞րբան ապառաժ եւ քարասիրս ոք իցէ:
 Ծնողում զքաղցրութիւն սորա՝ տեսողաց եւ
 վայելողացն պատմել. յերկու կողմանս ար-
 տաքին դրան են երկոտասան հիանալի մեծ
 եւ փոքր աշտանակք կերոնակիրք ըստ պա-
 տանատեղւոյն. յորոց չորսն մերէ, չորսն
 յունաց, եւ չորսն լատինաց. զերեսօք դը-
 րան կան երեք յարութեան պատկերք հան-
 դերձ մէն մի կանթեղօք. վայրինն է մեք.
 միջինն՝ որ է կոփածոյ քարանց՝ է յունաց.
 եւ վերինն լատինաց. զսոյն պատկերաց եր-
 կու կողմանց մոմեղէնսն եւ զկանթեղսն եւ
 զյլ զարմանալի զարդսն յաւուրս զատկի եւ
 այլ հանդիսից. թէ մեր, թէ յունաց, եւ
 թէ լատինաց չկարէ ոք ընդ թիւ արկա-
 նել եւ ընդ գրով գրաւել. տեսողաց է մի-
 այն յայտնի եւ միանգամայն զուարձալի. իսկ
 ամենայն զարդք սրբոյ զերեզմանիս, թէ 'ի
 ճակատն եւ թէ 'ի շրջանակսն, որովք պըճ-
 նազարդարեն 'ի հանդիսաւոր աւուրս. են
 համահաւասար երից զլիսաւոր ազդաց. եւ
 թէ որոշեալ հանդէսք լինիցին միում յերից

ազգաց . յայնժամ նոյն ինքն հանդիսատէրն
 միայն զարդարէ ըստ յօժարութեան եւ կա-
 մաց իւրոց . զի չեք բնաւ արդելք միմեանց
 վասն զարդուց : Ո՞չ բարի կեանք որ ըն-
 ծայի յայսմ կենսաբաշխ սրբազնասուրբ գե-
 րեղմանէ . կեանք է կենաց սիրելիք , եւ
 պարզեւիչ անմահութեանց : Յորժամ մտա-
 նես ՚ի ներքս՝ գտանես անդ ՚ի միջի զվէմն
 հրեշտակաց . յորոյ վերայ կանգնեալ քարո-
 զէին կանանցն զյարութիւն չեառն ասե-
 լով . (Մի երկնչիք՝ գիտեմք զի զչիսուս
 զեսաչելեալն խնդրէք չէ՝ աստ , այլ յարեաւ) :
 Բատ սմին օրինակի պարտ է եւ ամենայն
 հաւատացելոց աներկիւղ հետեւիլ եւ խընդ-
 րել գրիստոս . զի լուիցեն զերանականն
 ձայն թէ յարեաւ Վրիստոս . այսինքն՝ (ե-
 կայք օրհնեալք հօր իմոյ), եւայլն : Յայսմ
 վայրի կախեալ կայ ՚ի վերուստ հնդետա-
 սան կանթեղյերիս շարս . յորոց չորսն մեր
 է , եւ մին զպտոց , հինգն յունաց , եւ հին-
 գըն լատինաց . կան եւս երեք տէրունական
 պատկերք . մին մեր , մին յունաց , եւ մին
 լատինաց . շուրջանակք սոյն սուրբ տեղ-
 ւոյս են զարմանալի կերպուածով կոփեալ

սրբատաշքարինք . եւ երկուտասաննը բագդոյն
 կճեայ սիւնք կցեալ զորմովք իբրեւ զապա-
 կի փայլունք եւ սպիտակք յօրինակ առա-
 քելոց . եւ 'ի վերայ իսկ ներսի դրան կեն-
 սատու սուրբ գերեզմանին կան ներկեր-
 տեալ զարմանահրաշ կճեայ ծաղկունք , եւ մի
 յարութեան փոքր պատկեր , եւ այլ եւս
 բալում կերտուածք . թէ հրեշտակաց , թէ
 առաքելոց , եւ թէ խղաբեր կանանց . յա-
 ւուր խթման զատկի 'ի ժամ լուսաւորեայի
 կնքեն դատաւորն եւ բգեշխն զտախտակեայ
 զերկերան փոքրիկ դուռն սոյն սուրբ տեղ-
 ւոյս , զի մի ոք 'ի ներքս մտցէ բաց 'ի չո-
 րից արանց , մեր եւյունաց . այսինքն՝ Երկու
 լուսարարք . եւ երկու լուսահան ծերունի
 սրբակրօն վարդապետք ըստ հին սովորու-
 թեան . ապա ունիս մոտանել աստի իսկ 'ի
 ներքս . ուր , 'ի մշջ արքայութեան . յաթո-
 ռըն Աստուածութեան . 'ի փոքրիկ բնակա-
 րանն անբավանդակելոյն Աստուծոյ . 'ի սար-
 սափելին հրեշտակաց եւ հրեշտակապետաց .
 'ի վայրիկն այն ընտրեալ յաստուծոյ եւ փա-
 ռաւորեալ 'ի մարդկանէ . յամենամաքուր
 սրբազնասուրբ կենսատու գերեզմանն Ք.ք-

րիստոսի մարմնացելոյ վասն մեր, որ է տես
զի իմն փոքրիկ վիմափոր. բայց որպէս կա-
միս մտանել. զի՞նչ դիտաւորութեամբ, քա-
նի՞ ջերմեռանդութեամբ. 'ի միտ ա'ծ, զի
Աստուծոյ է բնակութիւնս այս. եւ դու
ո՞վ ջերմեռանդ հաւատացեալդ Քրիստոսի
պարտիս ըստ ամենայնի աստուածային լի-
նել՝ որ կարողասցիս մաքուր շրմամբք ող-
ջադուրել զսուրբ գերեզմանս զայս աստ-
ուածընկալ: Ուրեմն ընկեա՛ 'իքէն զամենայն
բիծս եւ զարատս սրտի, եւ զգեցեալ ըզ-
պատմուձան սպիտակ. այսինքն՝ զարդարու-
թիւն եւ զսրբութիւն. մուտ 'ի ներքս ահիւ
եւ դողութեամբ մեծաւ 'ի վերայ ծնգացդ.
զի մի լուիցես զյանդիմանութիւնն զայն
թէ (ընկեր զիա՞րդ մտեր այսր՝ որ ոչունէիր
հանդերձ հարսանեաց), չասեմ եւ զհետեւ-
եալսն սորա. (թէ հանէք զլա 'ի խաւարն
արտաքին): եւ այլն:

Հապա անկի՛ր 'ի վերայ երեսացդ բաց
անդէն զգանձս ջերմեռանդութեան սրտիդ,
բղխեա՛ զգետս արտասուաց. յիշեա՛ զան-
ձառելի մարդասիրութիւն բանին Աստու-
ծոյ առ մարդկային բնութիւնն. եւ մատո'

նմա զպտուղ ըղձիցդ ասելով . ո՞վ բարե-
 գութ Աստուած իմ հիսուս . քաղցր , բա-
 րի , եւ բարերար . ներող եւ անյիշաչար . ո՞ր-
 չափ մեծ են անքննելի խորհուրդ տնօրէնու-
 թեանքո՞ որ տէր գոլովերկնի եւ երկրի . ա-
 րարիչ եւ ստեղծիչ ամենայն եղելութեանց ,
 երեւութից եւ աներեւութից՝ խոնարհեցար
 յերկնից 'ի ծոցոյ Հօր մարմնանալ 'ի սրբոյ
 կուսէն . ծնար անձառաբար եւ կատարեալ
 զամենայն տնօրէնութիւնս՝ ապայանձն առեր
 վասն մեր մեղաւորացս զանտանելի չարչա-
 րանս . միանդամայն եւ զմահ՝ եւ թաղեալ
 աստ 'ի սուրբ գերեզմանիս իրեւ մահկա-
 նացու՝ զի զկնիք մահուան մերոյ լուծցես .
 յարեարհետ երից աւուրց ամենակարող ինք-
 նիշխանութեամբ 'ի սոյն սրբազնասուրբ գե-
 րեզմանէս . եւնոյն հրաշափառ յարութեամբդ
 լուսաւորեցեր զամենայն արարածս՝ ուրա-
 խացուցեր զերկնայինսն եւ զերկաւորսն .
 զգերեալսն ազատեցեր 'ի դժոխոց , եւ զին-
 քըն զգերողն՝ գերի առեալ 'խորտակեցեր
 զբարձր բազուկս նորա , եւ մեզ հետեւելոցս
 քեզ՝ որդի աստուծոյ , գեղ կենաց շնոր-
 հեցեր զամենապատուական մարմին եւ ա-

ըիւն քո սուրբ . Եւ զկենսատու գերեզմանս
զայս արարեր քաւարանմեղաւորաց , եւ յոյս
կենաց ամենայն հաւատացելոց . ահա այժմ
անկեալ եւ ես ամենապարտս մեղաց առաջի
սոյն լուսափայլ սուրբ գերեզմանիդ աղաւեմ
եւ աղերսեմ թախանձագին դիմօք եւ ար-
տասուալից հառաջանօք տէր իմ գլխառատ .
Լուսապայծառ յարութնանդ , եւ ամենամա-
քուր սուրբ գերեզմանիդ շնորհիւն յարու
զիս 'ի քնոյ մահու , ներեայանցանաց իմոց՝
զորս մեղուցեալ եմ ընդ դէմ ամենասուրբ
կամաց աստուածութեանդ , եւ արժանի արա՛
յերկրօրդ գալստեան քումերանական փառաց
անձառելի տեսութեանդ ընդ սուրբս եւ
ընդ կամարարս քո յարազուարձ ուրախու-
խեամբ միշտ եւ հանապազ :

Է՞որժամ մտանես 'ի ներբս' նախ քան
զամենայն առնուս զչոտն անմահութեան ,
եւ զբուրումն ամենաքաղցր անուշութեան ,
եւ անդ սկսանիս զմայլիլ իսկոյն հոգեւո-
րական եւ աստուածային զուարձութեամբ .
'ի վերայ սուրբ գերեզմանիս եղեալ կայ կը-
ճեայ սրբատաշ փայլուն եւ սպիտակ սքան-
չլահաշ քար մի տասն թղաչափ երկայ-

նութեամբ , եւ չորս թղաչափ լայնութեամբ . եւ երեք թղաչափ բարձրութեամբ
 'ի յատակէ՝ յորմէ ասի լոյս բղխեալ երբեմն
 'ի գիշերի լուսափայլ յարութեան տեառն մերոյ
 'ի տես ամենեցուն , զերեսօք որմոյ սուրբ գերեզմանիս կան երեք տէրունական պատկերք .
 մին՞ւ մեր , մին՞ յունաց , որ է կերտեալ 'ի
 կճեայ քարէ՝ զարմանալի յոյժ . եւ մին՞
 լատինաց . առաջի սոյն պատկերաց են ութեւ
 եւ տասն փոքր մոմավառ աշտանակք . վեցն՝
 մեր . վեցն՝ յունաց . եւ վեցն լատինացւոց :
 են եւս հնդետասան ծաղկամանք . հինգն՝
 մեր . հինքն յունաց , եւ հինգն լատինաց .
 'ի վերուատ կախեալ կան 'ի մէջ գմբեթիս
 քառասուն եւ երեք մշտավառ կանթեղք .
 երեքտասանն՝ մեր . երեքտասանն յունաց .
 երեքտասանն . լատինաց . եւ մնացեալ չորսն՝
 դպտոց . դիրքն սրբոյ զերեզմանիս է ձուաձեւ
 'ի միջատեղն մեծի տաճարին սրբոյ Յարութեան .
 շուրջ զերեսօք արտաքին որմոյ սուրբ
 գերեզմանիս են վեց գիշերավառ կանթեղք ,
 յորոց չորսն է մեր . եւ երկուքն՝ յունաց .
 'ի վերայ գմբեթի կենսատուգերեզմանիս գոյ
 եւս բարձրակառոյց գմբեթիկ մի 'ի վերայ եր-

կոտասան նրբագոյն քարեայ փոքրիկ սեանց
 կանդնեալ 'ի ձեւ կաթուղիկէի . 'ի մէջ նո-
 րին կախեալ կան երեք մեծաշէն կանթեղք՝
 երից ազգաց եւ 'ի շրջանակս նորին են բա-
 զում կանթեղք եւ աշտանակք եւա երից ազ-
 գաց հաւասար բաժանեալ . իսկ 'ի վերայ
 սոյն փոքրգմբեթիս է ամենահոչակ հո-
 յակապ զմբմանասքանչ մեծ գմբեթն սրբոյ
 Յարութեան՝ որ շուրջանակի ութ եւ տասն
 հաստակառոյց ոտիւք բարձրացեալ եւ կա-
 ռուցեալ է . միջոցք իւրաքանչիւր ոտիցն են
 ութն ութն ոտնաչափ , եւ 'ի միջի իւրա-
 քանչիւրոցն են երկու երկու վեր 'ի վայր
 շարանք վեց վեց կանթեղօք , եւ իւրաքան-
 չիւր ոտքն ունին մէն մի տէրունական պատ-
 կեր զերեսօքիւրեանց՝ հանդերձ կանթեղօք .
 յորոց վեցն՝ է մեր . հինգնյունաց . հինգն՝
 լատինաց . եւ երկուքն զպտոց . երեք ըս-
 տիկոնք են միջոցք սոյն ոտիցս եւ այսու
 կերպիւ բաժանեալ ներքին եւ միջին դրս-
 տիկոնն՝ 'ի իւղաբերից սեղանէն սկսեալ դէպ
 'ի հիւսիս երեք ոտնամէջքն են մեր . եւ
 'ի կարգէ նորին՝ երեքն յունաց , եւ անտի
 երկուքն՝ զպտոց . անտի երեքն եւս մեր .

անտի երկուքն եւս՝ յունաց . անտի չորսն
 լատինաց . եւ անտի է մեծ միջոցն աշխար-
 համատրան տաճարի՝ որ է յունաց մինչ
 'ի վերն : Իսկ վերին դատիկոնն որ եւ ասի
 վերնատուն . յառաջին կարգէ սկսեալ . վեց
 միջոցք են մեր հանդերձ շարան կանթե-
 ղօքն , եւ մետասան միջոցք եա շարանօքն
 են լատինաց : եւ անտի կայ աշխարհամատ-
 րանն : “Աս եւս ’ի մէջ գմբեթի յոյժ բար-
 ձը են շուրջանակի քսան փոքր կամարք՝
 որոց միջոցքն են ութն ութն ոտնաշափ .
 յորոց միջի է անձուկ ճանապարհ իմ՝ ու-
 րով ջրջագայի շրջանակն գմբեթի . եւ ’ի-
 մէջ սոյն կամարաց են նորասահման շա-
 րանք՝ եւ այլ աստի եւ անտի կախեալ բա-
 զում կանթեղք՝ որք այժմ ’ի ձեռս յունաց
 են . եւ լուսաւորեն ’ի զատկի եւ ’ի ծաղ-
 կաղարդի աւուրս . յանդիման դրան սրբոյ
 գերեզմանի կախեալ կան տասն մեծաշէն
 կանթեղք յերկու շարանս , որք են լատի-
 նաց . դէմ առ դէմ սուրբ գիրեզմանիս է
 մեծ եւ փառաւոր բարձրագմբեթ եւ ամե-
 նայն վայելչութեամբ զարդարեալ աշխար-
 համատրան տաճարն յունաց՝ յորոյ միջի

Վառեալ կանթեղքն եւ աշտանակք յաւուրա
 հանդիսից անձիւք են . են անդ, եւս եր-
 կու զարմանալի բարձրահասակ կծեայ փո-
 րակերտեալ կերոնակիր աշտանակք, եւ
 երեք հիանալի բազմաշտանակ ջահք . եւ
 այլ ամենայն զարդք վայելուչք . 'ի միջի սոյն
 տաճարի է քար մի փորակերտեալ կիսա-
 կանգուն 'ի վեր 'ի յատակէ, որոյ վասն
 տսեն յոյնք լինել մէջ աշխարհի՝ եւ տան
 համբուրել, ամենայն ջերմեւանդութեամք
 ուխտաւորաց իւրեանց . 'ի շրջանս նորա
 վառեալ մոմս շարելով իբրեւ զմեծ իմն
 ովստատեղի պաշտեն զնա զորմէ չունիմք
 երբէք վկայութիւն 'ի գրոց պատմութեանց
 զի մէջ եւ սիրտ աշխարհի զկենսատու գե-
 րելմանն՝ Քրիստոսի գիտեմք մեք . եւ վկա-
 յեմք եւս 'ի սուրբ գրոց . որպէս ասէ 'Աերսես
 շնորհալին յերդս շարականաց . "Թաղեցար
 'ի սիրո 'Երկրի,, , այսինքն 'ի միջի աշխար-
 հի : "Աաեւ տէրնմեր անսուտ բերանովիւրով
 հաստատէ զայս յասելն՝ (թէ եղիցի որդի
 մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս եւ զերիս
 գիշերս, Աատ . ՃԲ . 40) :

'Ի դրանէ սրբոյ գերեզմանիս 'ի ձախա-

գնալով ուժսուն ոտք դտանես Շիքտուստ
 կողմըն գերեզմանի փոքր պատարագամա-
 տոյց մատուռամբ՝ որ է ղպտոց . Եւ ունի
 մշտավառ կանթեղ մի . 'ի դէմն նորին է
 Յովսէփ արեմաթացւոյ վեմտիոր գերեզ-
 մանն՝ որ ունի մշտավառ կանթեղ մի . Է
 աստ եւս պատարագամատոյց սուրբ Աստ-
 ուածածնի սեղան մի կանթեղավառ՝ որք
 են մեր . Երբեմն ասորիք պատարագենյայս
 սեղանս՝ շնօրհիւ սրբոյ աթոռոյն մերոյ :
 Աստի յառաջ գնացեալ շուրջանակի դէպ 'ի
 յաջ կողմն սուրբ գերեզմանին իննսուն ոտ-
 նաչափ՝ գտանես զսուրբ պարտէզն ուր ե-
 րեւեցաւ Օխուս Մարիամու մագդաղե-
 նացւոյն 'ի կերպարանս պարտիզպանի . Եւ
 ապա ամենաքաղցր գոչմամբ ձայնի ետ նմա-
 ծանօթս . Նմանապէս եւ մէք եթէ կամի-
 ցիմք իսնդրել գՄարիամոս սերտ սիրով որ-
 պէս զմագդաշենացին , անշուշտ գտանեմք
 աստ յաստուածտունկ եւյերկնային պար-
 տէզս զնա . Ղատ օրինակի նոյն Մարիա-
 մու հեղինակի քրիստոսասիրութեան . սոյն
 պարտէզս է բոլորակած եւ մարմարոնեաց
 քարամբք յօրինեալ հաւասար ընդ յատակս

եւ է լատինաց . բայց 'ի վերայ սորա երկու
 մշտավառ կանթեղք կան կախեալ .
 մին մեր , եւ մին լատինաց . 'ի մի կողմն սու-
 րա 'ի բարձր ինչ տեղւոջ է երգեհօնն լա-
 տինաց՝ զոր 'ի ժամանակին հնչեցուցանեն
 քաղցր եղանակաւ . 'ի պատիւ սրբազնասգւրբ
 տեղեաց տեառն մերոյ Յիսուսի Պրիստո-
 սի . եւ 'ի միւս կողմն սոյն պարտիզին՝ է
 վայելուչ սեղան մի լատինաց : Աստի քսան
 ոտնաչափ յառաջ է լատինաց եկեղեցին՝ ուր
 միշտ պաշտեն զսովորական ժամերգութիւնս
 իւրեանց , եւ է զարդարեալ զանազան կան-
 թեղօք եւ այլ զարդուք . անդ է տեղի մի
 իբր զպատուհան կից ընդ դրան , որ 'ի
 մէջ նորա կայ և բեղք քար միատեղ . որոյ մին
 գիտեմք՝ թէ է կէս սեան տանն կայիափա-
 յի . զի կէսն 'ի ձեռս մեր է , որպէս 'ի վե-
 րոյ եւսյիշեցաք . բայց մնացեալ զերկոսին քս-
 րանց ասեն լատինք թէ՝ մին 'ի բարէ սուրբ
 գերեզմանին է . եւ միւսն՝ այն սիւնն է յոր
 պրկեալ Յիսուս ձաղեցաւ 'ի տան Պիղա-
 տոսի . ելեալ աստի սակաւ ինչ գնալով
 դէպ առեւելս՝ տեսանես քանի ինչ ա-
 չագին կճեայ սիւնս , եւ 'ի միջոյ նոցին ան-

ցեալ երթաս 'ի ներքսագոյն . վայր բնէ իբր
 հարիւր ոտնաշափ 'ի լատինաց եկեղեցւոյ ,
 որ ասի չորրորդ բանտ ՚Վրիստոսի . չեւ եա
 մտեալ 'ի ներքս յերկու կողմունս դրան են
 երկու սեղանք . 'ի ներքոյ ձախակողմեան սե-
 ղանոյն է կձեայ քար մի՝ որ ունի երկու բռ-
 լորակ ծակս . զորմէ ասեն յոյնք եւ լատինք
 թէ՝ ՚Վրիստոսի ծնդատեղիքն են . զի յոր-
 ժամ եղին զ՚Վրիստոս յայս բանտ՝ չունե-
 լով երբէք կարողութիւն կալ 'ի վերայ ո-
 տից , անկաւ 'ի տկարութենէ իւրմէ 'ի վե-
 րայ ծնդացն 'ի վերայ սոյն քարիս , եւ իս-
 կոյն հալեցան կարծրութիւնք քարանցն 'ի
 ներքոյ ծնդանցն ՚Վրիստոսի : ՚Վ տեալ 'ի
 ներքս 'ի բանտն որ է խոնարհագոյն տեղի
 իմն վիմափոր , տեսանես զերիս փոքր սե-
 ղանս մշտավառ կանթեղօք , եւ է յունաց
 բովանդակ : Եստ իբր եւ երեք ժամ ար-
 գելեալ մնաց տէրն մեր կապեալ ձեռօք ,
 զի չէ՛ր տակաւին պատրաստի գործիք խա-
 չին :

Երդ՝ ո՞վ դու յիշեա՛ աստ զկսկծալի եւ
 զազէտալի կիրս ՚Վրիստոսի , եւ ամենօրհ-
 նեալ մօրն ընդ իւր . միածին որդին յարեան

Ե՞ն թագժաւեալ եւ կիսամեռ կաղեալ
եղեալ 'իտանջանս յանձուկ տեղւոջ . եւ մայրն
աղէկիզեալ սրտատոչոր դիմօք նստեալ
պշոյր՝ յանտանելի կիրս կուսածին
որդւոյ իւրոյ : Ո՞չ մայրական գութ . քաղ-
թը է քան զամենայն քաղցունս . բայց վի-
րաւորիչ, ո՛չ միայն ունողին՝ այլ եւ ունե-
ցելոյն . քանզի Տիրամայրն՝ ո՛չ միայն զինքն
մաշէր ասա 'իսէր սիրելի որդւոյն, այլ եւ
զորդին իւր խանդաղատեալ կրկնէր զցաւ
նորա աղեատլի կսկծանօք մայրական ան-
պատմելի սիրոյն :

Ուստի եւ դու պարտիս աստանօր ցա-
ւակցիլ ընդ նոսա, եւ աղիողորմ արտաս-
ւօք երես անկեալ աղաջել եւ ասել: Ո՞վ
քաղցը անուն Յիսուս՝ որ յետ ամենայն ան-
տանելի չարչարանացդ, զանհնարինս կրե-
ցելի աստէն վիշտս եւ զաղէտս 'ի սիրաս
քո վասն իմ պատժապարտիս . վասնորոյ
պաղատիմ առքեղ բարեգութ եւ մարդասէր
տէր՝ յիշելով զնոյն դառնազին ցաւս եւ ըզ-
ևանդաղատեալ կսկիծ . ամենօրհնեալ մօր
քո . աղատեա զիս զբաղմամեղս 'ի հեղձա-
մբնձուկ մեղաց իմաց . եւ շնորհեա խաղա-

զութեամբ անցուցանել զկեանս այսմ' աշխարհիս, եւ արժանաւորիլ երկնային հանգըստեանն ընդ ամենայն սուրբս եւ սիրելիս անուան քո :

Ելեալ աստի գնաս առ արեւելս եօթանասուն ոտք, եւ գտանես տնդ զՊունկիանոսի սեղանն յունաց . այս Պունկիանոսն էր հարիւրապետ եւ պահապան գերեզմանին Քրիստոսի . սա խոցեալ տիգաւ զկողն Քրիստոսի, եւ միով կոթիւ արեան որ ել 'ի կողէն Քրիստոսի, բացաւ աչք սորա՝ զի էր միականի . եւ զայլ աստուածահրաշ սքանչելիս խաչելութեան եւ յարութեան տեսեալ հաւատաց 'ի Քրիստոս, եւ ապաշխարեալ աստ ժամանակ մի, եւ ապա մարտիրոսացաւ . յայնք ասեն թէ եւ գերեզման նորա է աստ :

Էստիյառաջ գնայեալ քսան եւ հինդ ոտք գտանես զտեղին բաժանման հանդերձիցն Քրիստոսի . որ չորից զինուգրաց առեալ զհանդերձսն Քրիստոսի եւ զպատմուճանն առանց կարանի, բաժանեցին աստ վիճակաւ . է սա կիսագնտակ փառաւոր պատարագամատոյց, սեղան մի մշտավառ կանթե-

լօք, եւ է մեր: 'Ի ձախակողմն սոյն սուրբ
տեղւոյս է դուռան մի՝ յոր մտեալ իջանես 'ի
վայր քսան եւ եօթն աստիճանաւ . . . ուր է
Լուսաւորիչ անուանեալ հնաշէն հոյակապ
գմբեթաւոր մեծ եկեղեցին մեր՝ որ 'ի վե-
րայ չորից կճեայ զարժանալի սեանց կա-
ռուցեալ է. եւ 'ի վերայ սորա է վանքն Տէ-
րիլ սուլթան անուանեալ. որ թէպէտ մեր
է, բայց սուրբ աթոռն մեր շնորհ արար-
եալ է առ այժմ նստիլ անդ հապէշից վա-
սըն խղճութեան նոցա, որպէս եւյառա-
ջագոյն յիշատակեցաք:

Ի մէջ սոյն հրաշալի եկեղեցւոյս են եր-
կու փառաւոր պատարագամատոյց սեղանք
մշտավառ կանթեղօք . յաջակողմեանն սուրբ
կարապետի անուամբ, եւ ձախակողմեանն
Լուսաւորչի, որ է մեծադիր իբր աւագ սե-
ղան. աւանդութեամբ ասի թէ՝ սուրբ 'Ար-
քիդոր Լուսաւորիչ հայրն մեր եկեալ 'ի
սուրբ Երուսաղէմ, եւ ձգնեալ աստ զեօթն
ամ, ապա մատուցեալ է յերկրպագութիւն
տնօրինական սրբազան տեղեաց . եւ 'ի դի-
մելն 'ի լուսաւուղիս սուրբ գերեզմանն՝ ինք-
նին լսւսաւորեալ են կանթեղք սուրբ գե-

րեզմանին. Դուստիքանդանօր առացեալ է ըզ-
լոյս զուարթն, որ յամենայն կիրակամօի եր-
գէ յամենայն եկեղեցիս հայաստանեայց. 'ի
մէջ սոյն տաճարիս են չորս շարան կան-
թեղք դէմ առ դէմ՝ եւ 'ի միջի գեղեցիկ
ջահ մի բազմաշտանակ, եւ շուրջանակի իան
եւս բազում կանթեղք եւ տէրունական
պատկերք :

Ի սուրբ Լուսաւորչի սեղանոյ ձախ
կողմն կայ Հուսամուտ մի մեր՝ երեք մշտավառ
կանթեղք, որ հայի 'ի վայր՝ 'ի գիւտ Խա-
չըն. աստ բազմեալ դշխոյն Նեղինէ բա-
զում գանձիւք եւ սպառնալեօք ետ գտանել
սուրբ Խաչն՝ որ մնացեալ էր ընդ հողով
'ի մէջ նոյն փոսին՝ որ ասի գիւտ Խաչ. ի-
ջանես անդր 'ի միջոյ սոյն եկեղեցւոյս եր-
կոտասան աստիճանաւ, ուր է տեղին գտման
պատուական սուրբ Խաչին, որ է լատինաց.
վիմափոր եւ գիջային վայր մի մարմարնեայ
սեւագոյն քարամբք յատակեալ՝ հինգ մատ-
նաչափ 'ի վեր յերկրէ. նշան խաչի կոփ-
եալ կայ 'ի միջի նոյն կճեայ յատակի՝ զոր
համբուրեն տէրունական ուխտաւորք ջեր-
մեռանդն սիրով. 'ի յաջակողմն սորին է սե-

ղան մի, եւ ունի զառաջեաւ ութ մշտա-
 վառ կանթեղս. այս այն աեղն է, որ յոր-
 ժամ՝ ի բաց առին զվերակուտեալ հողն եւ
 դտին զերիս խաչսն. ոչ գիտացեալ թէ
 ո՞րն ի նոցանէ իցէ Քրիստոսի. պատանի
 մի մեռեալ՝ որ անցանէր անտի ի նմին ժա-
 մու, իջուցեալ այսր ՚ի տեղի սեղանոյս ե-
 ղին զմին ՚ի խաչից ՚ի վերայ նորա՝ որ էր
 ձախակողմ աւաղակին, եւ ոչ զգաց երբէք
 մեռեալն. եղեալ եւ զմիւսն՝ որ էր աջա-
 կողմն աւաղակին, երաց զմի աչս մեռեալն
 եւ շարժեաց զաջ ձեռն. իսկ յորժամ ե-
 ղին զկենսատու խաչն Քրիստոսի ՚ի վերայ
 նորա՝ իսկոյն յարեաւ մեռեալն, եւ փառաւոր
 առնէր զՔրիստոս աստքւած զխաչելեալն
 վասն ազդի մարդկան. վասն որոյ ՚ի նմին աւուր
 բազումք հաւատացին ՚ի Քրիստոս, եւ ե-
 ղեւ ուրախութիւն մեծ հաւատացելոցն.
 Եթէ եւ դու կամիս յարուցանել զմեռեալ
 հոգիս քո զանազան մեղօք՝ դիր զկենսա-
 տու սուրբ խաչն Քրիստոսի ՚ի վերայ սրա-
 տիդ, եւ մի՛ բաժանէր երբէք զայն յանձնէ
 քումմէ. զի միշտ կենդանի լինիցիս ՚ի Քը.

քիսնոս, եւ Քրիստոս 'ի քեզ ըստ բանի
սրբազն առաքելոյն :

Եստ պարտիս ջերմեռանդն սիրով եւ
յորդաբուղիս արտառւօք համբոյր մատու-
ցանել սուրբ տեղւոյս, գտման կենսատու-
խաչին Քրիստոսի : Եստի 'ի վեր ելեալյա-
ռաջին աստիճանաց, 'ի ձախակողմն դրան
տեսանես զփուշ պսակի կանթեղավառ սե-
զանն յունաց, որ 'ի մեջ այնը սեղանոյ
կանգնեալ կայ կճեայ սուրբ սիւնն այն,
յորոյ վերայ նստեցուցեալ զտէրն մեր
փշեայ պսակաւ՝ եւ եղէդն յաջոյ ձեռին՝
կտտակէին զնա ասելով՝ ողջ լեր թագա-
ւոր հրէից . եւ առեալ զեղեգն ծեծէին
զամենօրհնեալ գլուխ նորա 'ի հրապարակս
ապարանից Պիղատոսի . սիւնս այս փակեալ
կայ 'ի մեջ սեղանոյն, եւ ունի արտաքուստ
փոքր ծակ մի՛ յորմէ ձեռնամուխ . եղեալ
աէրունական ուխտաւորքն պաշտեն զնա .
'ի տարւոջ միանգամ բացեալ լինի փակն
սոյն սուրբ սեան՝ (որպէս եւ 'ի մեջ լատի-
նաց եկեղեցւոյ եղեալ սեանց փակն), եւ
այն յաւուր աւագ ուրբաթու : Եստի 'ի ն-
նըսուն ռատնաչափ զնալով 'ի ձախակողմն գը-

առնես առտիճան մի մօտ պատանատեղ
ոյն՝ յորմէ ելեալ ութեւ տասն ոտք՝ 'ի-
վեր՝ ժամանես իսկոյն 'ի դուռն երկնից՝
'ի սարսափելին սերօբէից՝ 'ի փափաքելին
ամենայն ազգաց հաւատացելոց 'ի քրիստոս .
յաստուածընտիր վայրն գերամաքուր , " 'ի -
լեառն սուրբ՝ որ կոչի 'ի նահապետէն՝
աէր ետես . յառիթն փրկութեան ամենայն
տիեզերաց . յարիւնամած տեղին՝ 'ի սուրբն
գողգոթա :

Ահա աստ է ամենայն գրելոց կատա-
րումն . աստ լրացան գուշակութիւնք ա-
մենայն մարդարէից . նահապետք՝ յաւաջ-
քան զգալուստն Կրիստոսի : Արսափմամբ
մերձանային 'ի սուրբ լեառնս այս ' հոգ-
ևով եւեթ տեսանելով զտնօրէնութեան
խորհուրդն աստ կատարելի լինեն . ուրեմն
դուշայժմ ո՞րպիսի մտօք , ո՞րպիսի դիտա-
ւորութեամբ եւ վարուք պարտիս մտտչել
'ի սուրբ վայրս այս ահաւոր եւ սարսափե-
լի՝ որ հրեշտակացն է անմատչելի եւ հիա-
նալի . զի ինքն իսկ միածինն հօր եկեալ
այսր բարձրացաւ 'ի խաչվասն մեր՝ սբսեաց
եւ մաքրեաց զտեղիս զայս սքանչելի՝ ա-

մենապատուական . արեամբն իւրով . այժմ
 ո՞չ է ստուերն իմրեւ զառաջինն , այլ իսկն
 եւ ճշմարտիւ կատարեալն . առաջ հոգւով եւ
 ճշմարտութեամբ պարտ է 'ի սմա երկիր -
 պագանել . Քրիստոսի աեառն մերոյ ըստ բա -
 նի սսրբ աւետարանին . գոնէ կամօք եւ
 սրտիւ խաչսկցիլ ըստ խաչելոյն՝ զի եւ
 փառացն արժանի լիցուք 'ի դալն փառօք
 հօր եւ հրեշտակաց սրբոց : Աստէն հե -
 տեւի բառացին՝ զի անդէն կտցես զփառսն ,
 աստանօր բեւեռեա' զկամսդ բեւեռօք սի -
 թոյն և Քրիստոսի՝ զի անդ շքեղապէս կե -
 ցուցես զհոգիդ ընդ նմա . աստ տուր
 զառժամանակեայ մարմինդ 'ի ճընշումն եւ
 'ի ճգունս աստուածահաճոյս , զի անդ շա -
 հեսցիա զհոգիդ ըստ մարմնոյդ յաւիտենա -
 կան կենօք : Յորժամ ելանես 'ի վեր՝ դէ՛ս
 յանդիման տեսանես զհիանալի եւ զար -
 մանաօքանչ կենդանի պատկերն խաչելու -
 թեան Քրիստոսի՝ որոյ եւ եթ տեսութիւնն
 զվիմասարաս սիրտս պատառէ , եւ զգե -
 տօրէն արտասուս իսկոյն ընդ ծնօտս իջու -
 ցանէ : Յաջ կողմն սոյն սարսափելի պատ -
 կերի է Տիրամօր սուրբ կուսի սպազգած եւ

տիսրալի պատկերն , եւ ՚ի ձախ կողմն՝ սըր-
բոյն Յովհաննու աւետարանչի տրտմակսկիծ-
պատկերն , որք անշուշտ զհայեցողն
յինքեանս ՚ի կսկիծ յարտասուս հարկանեն :
Առաջի Խաչելութեան պատկերի է սեղան
մի սքանչելի սրբատաշ մաքուր կճեայ քա-
րիւ ՚ի վերայ փոքր կճեայ սեանց կանգ-
նեալ . եւ ՚ի ներքոյ սոյն սեղանոյ է փոս
մի՝ զոր համբուրեն ջերմեռանդ ուխտաւորք
ահիւ եւ դողութեամբ իբր տեղի կանգ-
ման սուրբ Խաչին . բայց իսկ փասն՝ ուր
կանգնեցին զկենսատու սուրբ Խաչն , է փո-
քը ինչ անտի՝ ՚ի ներքոյ մեծ եւ հիանալի
եօթնաջահեան աշտանակի միոյ՝ որ զար-
դարեալ է գեղեցկանկար մոմովք , . եւ է ա-
ռաջի Խաչելութեան պատկերի :

Արդ՝ անկի՛ր դուաստ ՚ի վերայ երեսացդ
ահիւ մեծաւ եւ դողութեամբ բազմաւ զղջա՛ ՚ի
չարեացդ , հառաչեա՛ սրտիւդ , աղօթեա՛
մոօքդ , եւ աղերսեա՛ բերանովդ , համ-
բուրեա՛ եւ կրկին համբուրեա՛ սերտ սիրով
եւ ջեռմեւանդն արտասուօք՝ ասելով , ո՞վ
Խաչեալդ վասն իմ՝ Աստուած իմ Յիսուս .
աղաչեավ եւ պաղատիմ գթա՛ յիս ՚ի մեղա-

ւորս՝ շնորհիւ անտանելիք չարչարանացդ, անպարտ խաչելութեանդ, սոսկալի բեւեռացը, եւ կենարար սուրբ արեւանդ զոր հեղեղ տատ աղբերաբար վասն իմ մեղաւորիս կտրեա զլար մարմնոյս տենչենաց. մերժեա՝ 'ի չար հեշտութեանց եւ 'ի ցանկութեանց աշխարհիս. բեւեռեա ՚ի հոգիս եւ 'ի կամս իմ զերկեւղքո սուրբ ո՛չ երբեք խոտորիլ յաջ կամյահեակ, այլ միշտ հաստատիլ ՚ի սէր առտուածութեանդ, եւ մտաբերել զանձառելի մարդասիրութեան եւ տնօրէնութեան քո խորհուրդ, զի նոքօք զարգացեալ ՚ի գործո բարեմասնութեան զկաստ եւ առաքինի վարուք կատարեցից զընթացը իմը ըստ հաճոյից կամաց քոց Քրիստոս եւ ընդ քեզ լինիլ ժառանդակից երանական փառացն յաւիտենից :

Դ վերայ սուրբ տեղլոյս են հնգետասան մշտավառ կանթեղք, եւ այլ բազում մտմակիր աշտանակք եւ շարան կանթեղք, եւ ջահք : Յաջ կողմն սորա կայ փոքր սեղան մի եւ կից ընդ նոյն սեղանոյ դուռն մի յորմէ երթեւեկեն յոյնք ՚ի սենեկաց իւրեանց ՚ե գողգոթա եւ սոքա ամենայնքն

թէպէտյառաջագոյն մեր, բայց այժմ 'իձե-
 ռըս յունաց են՝ որպէս ասացաք: Իսկ 'ի ձա-
 խակողմն խաչելութեան է վէմն պատառեաչ
 որ 'ի ժամ խաչելութեան Վրիստոսի՝ չհան-
 դուրժեալ չարչարանաց արարչին իւրոյ՝ իր-
 բեւ զգայուն եւ բանական յերկուս ճեղքե-
 ցաւ 'ի տես յիմարեալ եւ կուրացեալ տի-
 րասպան ազգին հրէից առ ՚իյանդիմանու-
 թիւն անհաւատութեան նոցա. բայց նոքա-
 կարծ բագոյն եւս գոլովքան զվէմն՝ չզգա-
 յին երբէք եւ ոչ ինչ. այլ յամառեալ 'ի-
 նոյն կուրութեան՝ կորեան ամենեքեան ՚ի-
 միասին: Օգուշ լե՛ր ով եղբայր չգուցէ
 եւ դու յամառեսցիս 'ի մեղս՝ քարացուցա-
 նելով զսիրտ քո չգալ յապաշխարութիւն,
 զի մի ընդ նոսին կորիցես զյաւիտենա-
 կան կորուստն: 'Ի վերայ սոյն աստու-
 ծահրաշ վիմիս՝ կճեայ սրբատաշ քար մի
 ելեալ կայ ծակեալ երկարութեամբ՝ որ
 'ի նոյն ծակէ տեսանեն զ'իներքոյ եղեալ
 պատառեալ վէմն. եւ 'ի վերայ ծակի նոյն
 քարէ կայ յերկաթէ շինեալ երկար փական
 զոր 'ի մի կոյս արարեալուխտաւորքն՝ համ-
 բուրեն զսուրբ տեղին: Կից ընդ սմա է

սեղան մի փոքր լատինաց, որ ունի զար-
 մանալի պատկեր մի յղութեան սուրբ Աստ-
 ուածածնի՝ զարդարեալ կանթեղօք եւ
 զարդուք. եւ հետ անտի է մի եւս լայնա-
 դիր սեղան տարածման պատկերաւ, որ ա-
 ռաջի նորա 'ի վայր յատակն սոսկալի սուրբ
 տեղին տարածման եւ է բոլորաձեւքառակուսի
 մանր կճշայ քարամբք յատակեալ. ուր ա-
 նօրէն ղինուորքն՝ տարածեալ զտէրն մեր 'ի-
 վերայ կենսունակ սուրբ խաչին, քարշելով
 ամենայն զօրութեամբ, բեւեռեցին զամենա-
 օրհնեալ բազուկսն անխնայաբար 'ի տես Տի-
 րամօր սուրբ կուսին: Յիշեա դու աստ զա-
 ղէկիզութիւն սրտի ամենօրհեալ մօրն՝ որ
 զմիածին որդին տեսեալ առաջի աչաց իւ-
 րոց այնպիսի անհնարին տանջանքը բազկա-
 քարշ բեւեռմամբ արդեօք զո՞րպիսի կսկիծ
 չքզգայր անդ սուրբ կոյսն 'ի հոգիս եւ 'ի-
 սիրտս իւր: Ահա աստ կատարեցաւ բանն
 Աիմէօնի՝ որ ասէր, 'եւ ընդ քո իսկ անձն
 անցցէ սուր քանզի ոչեթէ ընդ անձն, այլ
 ընդ սիրտն էանց սուրն կսկծանաց մահ-
 ուան կուսածին որդւոյն իւրոյ. Նոյն ցաւն
 էր որ յուշոյ թափեալ զինքն՝ իբրեւ զմու-

եալընդ երկիր տարածէր . ո՞չ մեծի աղեւաիցս . չլինի երբէք յաշխարհի ցաւ՝ ըստ այս ցաւոյ համեմատ որդին կոկծայր 'ի ցաւոց քարշելոյ բազկացն եւ բեւեռելոյ , եւ մայրն աղէխարշեալ ընդ կիրս սիրելի որդւոյն՝ մահ անձին խնդրէր , եւ ոչ գտանէր : Այժմ եւ դու ո'վ անձնոյ բարեպաշտ 'ի միտ ած աստ զայնպիսի անցս որդւոյն եւ մօրն եւ լեր նոցացաւակից գոնէ յորդահոս ջերմեռանդ արտասուօք եւ աստուահածոյ բարի ընթացիւք , զի ընդ նոսին եւ անձառելի աստուածային ուրախութեանն արժանի լինիցիս միշտ եւ հանապազ :

Այս տարածման սուրբ տեղին՝ հանդերձ երկու սեղանօքն եւ կճեայտակ կէս հրապարակաւն են լատինաց . 'ի վերայ սոյն սուրբ տեղւոյ կախեալ կան տասն մշտավառ կանթեղք , եւ այլ կանթեղք եւ աշտանակը ; Եաստ եւս լուսամուտ մի՝ որ հայի 'ի փոքր մատուռն Արիամու եգիպտացւոյ որ է արտաքոյ սրբոյ Յարութեան . զորմէ յիշեցաք յառաջադոյն . կայ աստ եւս աստիճան միջերկոտասան ոտիւք՝ որ իջանէ առաջի մեծ դրան ոթքոյ տաճարիս : Դ ներքոյ

սուրբ գողցոթայի՝ քսան ոտնաշափ հեռի
 յոտից կողմանէ պատանատեղը ոյն գտանես
 դուռն մի՝ յոր մտեալ տեսանես զմթագործ
 տեղի մի վիմափոր, ուր է սեղան մի մըշ-
 տավառ կանթեղաւ՝ յունաց . 'ի յետուստ սոյն
 սեղանոյ՝ յերեսս որմոյն կայ վիմափոր ծակ
 մի իբր պատուհան՝ կանթեղավառ, ուր են ոս-
 կերք եւ գագաթ նախահօրն Ծդամայ, որ է
 ուղղակի ՚ի ներքոյ գաղգոթայի . այսինքն
 խաչելութեան տեղոյն ՚Քրիստոս ՚ի վրայ գլխոյն
 Ծդամայ բարձրանալով ՚ի խաչ, ազատեաց
 զնա ՚ի յաւիտենական դատապարտութենէ
 սատանայի խորտակելով զգլուխ նորին անդ
 ՚ի վերայ սուրբ Խոաչին, ՚ի ձախակողմն սո-
 րա է եւս նոյնպէս տեղի մի վիմափոր կան-
 թեղավառ՝ զորմէ ասեն Լինիլ գերեզման
 ՚Մերքիսեդեկ քահանայի, որ ՚ի լեառն ձի-
 թենեաց քահանայ օծեալ ՚ի ձեռն հրեշ-
 տակայ . ապա աստ եկեալ բնակէր ճգնու-
 թեամբ անտես ՚ի մարդկանէ . աստէն ել-
 եալ ընդ առաջ ՚մերահամու ՚ի դառնալին նո-
 րա ՚ի յալթութենէ . մատոյց նմա հաց. եւ
 գինի՝ յօրինակ ամենապատռական մարմոյ

Եւ արեան տեառն մերոյ , զոր ասա պատարագելոց էր 'ի փրկութիւն ամենայն աշխարհի . եւ էառ տասանորդս յաւարէ նորա ,

Ա երձ առ տեղիս կայ մթագոյն վայր մի եւս՝ ուր է մառանն յունաց . աստ առեն յոյնք գոլքանի ինչ գերեզմանք քրիստունեայ թագաւորաց : Ալեալ աստի երթաս 'ի դուռն սրբոյ տաճարիս . 'ի ներքուստ դրան է բարձր ինչ տեղի սենեկաձեւ՝ ուր նստին այլազգի դռնապանք , յորժամ դուռն բացցի . զի արքունական հրովարտակաւ են նոսքայազգաց յազգս , եւ բանալիք դրան մընան միշտ ընդ նոսա . իսկ երբեմն 'ի հանդիսաւոր աւուրս՝ բդեշն , դատաւորն , եւ մեծամեծք քաղաքին եկեալ հանդերձ զօրականօք բազմին աստանօր առ 'ի ըլինելոյ շփոթ ինչ կամ խռովութիւն 'ի մէջ ազգաց եւ ուխտաւորաց :

Դուռն սրբոյ տաճարիս փակ լինի . եւ յորժամ հարկաւորիցի բանիլ , որում եւ պիտոյանայցէ յելից ազգաց զլիսաւորաց , նոյն ազգի երկրորդ թարգմանն՝ որ է յատուկ կտրգեալ վասն դրան բացման սրբոյ տաճարիս հարութեան , ազդ առնէ միւս եր-

կուց աղքաց երկրորդ թարգմանաց, եւ եւ
ըեքեանքն 'ի մի եկեալ աղդ աւնեն դռնաւ
պանից, եւ եկեալ դռնապանքն՝ բանան ըզ-
սուրբ դուռն ըստ կամաց երկրորդ թարգ-
մանաց, եթէ ընդ երկար, եւ թէ համա-
ռօտ, դռնապանքն ամենեւին ըստ կամաց
իւրեանց չկարեն բանալ եւ փակել զդուռն
առանց գիտութեան երից աղքաց: Յետ
այսր ամենայնի համբուրեալ զսուրբ պա-
տանատեղն եւ զսուրբ դուռն ելանես ար-
տաքս 'ի սուրբ տաճարէս Յարութեան, եւ
վերադարձեալ յաւաջին ճանապարհէն՝ գառ
'ի սեփականատունս քո 'ի սուրբ Յակոբ ինտէ-
զալութեամբ եւ խնդութեամբ:

Եթէ նորեկ ուխտաւոր իցես շրջողդ՝
'ի նոյն գիշեր աստ պարտիս մնալ, զի լիա-
պէս վայելեսցես ամենայն ջերմեռանդու-
թեամբ եւ սիրով զշնորհս սրբազնասուրբ
տնօրինական տեղեացս. եւ մանաւանդ
հաշտարար սուրբ պատարագի՝ որ մատչի
զամենայն գիշեր 'ի վերայ կենսատու գե-
րեզմանի Տեառն մերոյ 'ի փառս Հօր եւ
Որդոյ եւ Հոգևոյն սրբոյ:

Եհա այսքան են շրջագայք եւ տեղե-

կութիւնք սրբազան տեղեաց՝ որք են ՚ի մէջ
 երկնանման սրբոյ տաճարի յարութեան հիւ-
 սուսի Վրիստոսի։ Արդ՝ սրբութիւնք տե-
 ղեաց չլինին ինչ օգուտ այնմ՝ որ ինքն է
 անուուրբ։ Հապա ջանացէ՛ք ո՛վ հարք
 իմ եւ եղբա՛րք զանձն ձեր սուրբ կացուցա-
 նել։ Նախ առաջի տեառն մերոյ հիսուսի
 Վրիստոսի ամբիծ հաւատով եւ մաքուր
 գործով, եւ ապա մատչել յայսպիսի ահա-
 ւոր եւ սարսափելի սրբազնասուրք տեղիս։
 Արեցէ՛ք զսիրտս ձեր եւ անարատ վարուք
 մտէ՛ք ընդ այս տունս Աստուծոյ եւ տա-
 ճարս ամենակալին։ զե եւ ինքն Վրիստոս
 եկեալ բնակեսցի ՚ի ձեզ ՚ի հոգիս ձեր, ընդ
 հօր եւ սուրբ հոգւոյն, ըստ անսուտ բա-
 նի իւրում թէ՝ (իս եւ հայր իմ առ նա-
 եկեսցուք՝ եւ օթեւանս առ նմա արասցուք)։
 որում արժանիս արասցէ զձեզ զամենես-
 եանի միշտ եւ հանապազ։

ԴԱՅԻԽ Գ.

Ըստադու շրջագայելոյ յայլը բազան պեղիս
ոք են 'ի մէջ սրբութագիւ , և իամ ար-
քայոց հայկացիս մինչ 'ի լը հայութ հայութ յան
պետուն մերոյ :

Յարեայց և շրջեցաւ ընդ քաղաքս
'ի փողոցս և 'ի հայապարակս , և
խնդրեցից՝ զոր սիրեաց անձն իմ :
(երգ . դ . 3) :

Կամի՞ս եւ զարտաքոյ սըրոյ աթոռոյա
ըզընջագայ տնօրինական սըրազան տեղիս
շրջիլ եւ տենչ սրտիդ բարեաւէս լցուցանել
ով հետեւօդդ Քրիստոսի , գիտեմ զի կա-
միս եւ բաղձաս , որոյ վաւն եւս եկեալ
իսկ ես այսր 'ի սուրբ քաղաքս մեծաւ ջեր-
մեւանդութեամբ եւ կատարեալ հաւատով :

Ենց ուրեմն ընդ մեծ բակ վանուցն ,
եւ գնա' դէպ առ արեւելս , ուր գտանես
զերկրորդ դուռն սրբոյ աթոռոյս որում ա-

մի հրեշտակապետի դուռն . ելեալ անտի
արտաքս իսկոյն առ երեսօքդ տեսանես ըզ-
հրեշտակապետի ամենասքանչ վանուց եր-
կաթեայ փոքր դուռն . ընդ այն մտեալ
երթաս նախ գէպ ուղիղ առ կողմն՝ արե-
ւելեան , եւ անդ գտանես զսուրբ ծառն ձի-
թենի . շրջապատեալ արտաքուստ որմով .
յոր կապեալ պրկեցին զտէրն մեր 'ի ժամն
ինչ 'ի գիշերի չարչարանացն . զի այս հրեշ-
տակապետի վանքս՝ լննա քահանայապետի
տունն էր , եւյառաջ այսր բնրաւ Վրիստոս
'ի պարտիզէ կապեալ ձեռօք :

Հապա տե՛ս զի զվայելու չն մատուսցես
պատիւ սոյն սուրբ ծառոյս . քանզի ստ
եղեւ իբրեւ առաջին խաչախայտ Վրիս-
տոսի . 'ի սմա ձեռնակապ պրկեցաւ Վրիս-
տոս կեանքն մեր , վասն կենաց մերոց եւ
փրկութեան . ուստի ծառս այս օրհեալ է
քան զամենտյն տունկս . ծառս այս է պար-
ծանք իմն ազգիս հայոց՝ չնորհեալ 'ի տեառ-
նէ . որում տենչանօք ցանկան ամենայն ազգ
Վրիստոսնէից . ա՛ռ զծառս զայս ո՞վ Վը-
րիստոսասէր անձնդ , գրկեա՛ 'ի սիրտ քո ,
եւ համբուրեա ջերմէռանդն սիրով . բա՛րձ

Հասա 'ի վերայ-ուսոյդ' զի ինքն բարձօղեւ
շեւ արարչին քո :

Եստ է զերեսօք որմոյն Թվաննայագոչ
քարն այն՝ որ 'ի գալստեանն Վրիստոսի
յերուսաղեմյառուր ծաղկազարդի, 'ի տրաըն-
ջալ դպրացն եւ փարիսեցւոց թէ ասա՛ ա-
շակերտացդ զի լռեսցեն, եւ 'ի պատասխա-
նելն տեառն մերոյ, եթէ դոքա լռեսցեն՝
քարինքդ աղաղակեսցեն. իսկոյն ձայն ար-
ձակեալ աղաղակեաց ասեն, քարս այս գո-
չելով ո'վսաննայ օրհնութիւն որդւոյ դաւ-
թի. ցուցանելով թէ կարող է Եստուած 'ի
քարանց յարուցանել զայսպիսի որդիս Ար-
քահամու, որ ծանուցեալ զարարիչն իւր,
աղաղակելով քարոզեսցէ զԵստուածու-
թիւն նորա 'ի լուր ամենեցուն. եւ դու
եթէ քարանման խստացեալ իցեօ՛ նայեաց
'ի քարս այս, պատկառեա՛ 'ի սմանէ, կակ-
զացո՛ զսիրտ քո, եւ հան 'ի նմանէ զջեր-
մեռանդն արտասուս ապաշխարութեան եւ
զաղերսական ձայնս փառաբանութեան; զի
լիցիս որդի սիրելի, ո՛չ Արքահամու՝ այլ
Եստուծոյ :

'Խարճ աստի եւ մուտ ընդ միջադուռն

վանուցս՝ ուր են սենեակք եւ բնակարանք
 մայրապետաց սրբոյ աթոռոյս. որք բարե-
 ջան աշխատութեամբ աղօթամատոյց լինին
 միշտ առ Աստուած, Աստ է դուռն սրբոյ
 տաճարիս՝ որ հայի ընդ հարաւ. մտեալ 'ի
 նա՝ գնաս նախ ուղղակի յարտաքին փառա-
 ւոր սեղաննե՝ որ կոչի չարչարանաց սեղան.
 աստ եկեր զառաջին ապտակն Քրիստոս
 յանիրաւ սպասաւորէն՝ որպէս պատմէ սըս-
 բաղան աւետարանին Յոհաննէս: Հորժամ
 տէրն փառաց ընկալաւ զայս անակնունելի
 ապտակն՝ յամենասուրբ երեսս իւր հրեշ-
 տակք եւ հրեշտակապետք սկսան դողալ եւ
 սարսիլ յահէ եւրեանց՝ վասնորոյ եղաւ ա-
 նուն տեղւոյս հրեշտակապետ: Աստ է
 եւ աւազանն մլրտութեան երախսայից քա-
 ղաքացի հայոց. զի այս ոռւրի հրեշտակա-
 պետի վանքս՝ հանապազօրեայ ժամերգսւ-
 թեան եկեղեցին է քաղաքացւոց՝ ուր բնա-
 կի վարդապետ մի ըուեյիզ կամ առաջնորդ
 անուամբ: Այս արտաքին վայրս է իբր վեր-
 նատուն կանանց, ուր աղօթեն քաղաքացի
 կանայք եւ մայրապետք: Ես աստ միջադուռն
 մի՝ ուր մտեալ դառնաս 'ի ձախակողմուն, եւ

անդ գտանես զսարսափելի առաջին բանտն
 Փ. րիստոսի՝ ուր է սեղան մի պատարագա-
 մատոյց իբրեւ զլիսադրի անք ՚ի ներքոյ սե-
 ղանոյ՝ կճեայ քարիւ կերտեալ պատկելին
 Փ. րիստոսի ձեռնակապ պրկեալ՝ ՚ի սուրբ
 ծառն ձիթենի, եւ արդիլեալ անդ զի յայնմ
 ժամանակի այն սուրբ ծառն ձիթենեաց աստ
 ՚ի տեղւոջ բանտիս եղեալ է ասեն, եւ ապա
 ՚ի շինման սրբոյ տաճարիս՝ հանեալ վնա յար-
 մատոյ, տնկեալ են արտաքոյ եկեղեցւոյն:

Աստ պարտիս ՚ի միտ բերել զանձառե-
 լի մարդասիրութիւնս եւ զվիշտս տեառն
 մերոյ զոր կրեաց յայնժամ վասնքո. եւ ա-
 ռել զերմեռանդն արտասուօք. ո՛վ բարե-
 գութ Աստուած իմ Յիսուս Փ. րիստոս՝ որ
 վասն իմ ապախտաւոր ծառայիս յանձն առեր
 մարմնանալ եւ կատարել զամենայն տնօրէնու-
 թիւնս յաշխարհի. եւ ապա եկեալ այսր
 ՚ի գիշերի չարշարանաց զառաջին ապտակս
 ընկալար յամենօրհնեալ երեսս քո ՚ի չար
 ծառայէ քահանայապետին, եւ ձեռնակապ
 վշտօք արդելար ՚ի սոյն բանտի: Արդաղա-
 չեմ զքեզ տէր իմ Յիսուս յիշելով զայն
 տմենայն մարդասիրական համբերութիւնդ:

սրբազան տեղւոյս ներեալթողցես զանթիւ
յանցանս իմ, զոր մեղուցեալ եմ, ո'չ ա-
կամայ եւ տդիտութեամբ, այլ կամաւ եւ
յօժարութեամբ ընդ դէմ Աստուածային
կամաց քոց . խնայեա' յիս աղերսեմ, եւ
մի՛ անտես առներ, զի գործ եմ անարատ
ձեռաց քոց . փրկեա' զիս այսուհետեւ ,ի
փորձնաց չարին՝ եւ արժանի արա' ան-
ձառելի տեսութեանդ ընդ սիրելիս քո
միշտ եւ հանապազ

Են աստ երկու մշտավառ կանթեղք, եւ
այլ կանթեղք եւ զարդք վայելուչք . եւ
լեալ աստի երթաս յաջակողմեան դասն՝ ուր
է սեղանն սերօբէից . յայս դասի գլուխն
կանգնի ըռէյիլ վարդապետն՝ զառաւօտեան
եւ զերեկոյեան ժամս պաշտելով անխախտ
հանդերձ եկեսցէիւ . յաւուրս կիւրակէից,
եւ երբեմն 'ի հասարակ աւուրս եւս մատչի
աստ սուրբ պատարագն;

Աւագ սեղանն է յանուն հրեշտակապե-
տաց, որ ոսկեզօծ շքեղութեամբ եւ ամե-
նայն վայելչութեամբ փայլի, յերկու կող-
մունս զերեսօք որմոյն դէմ առ դէմ ունի
զերկու հրեշտակապետաց փառահեղ պատ-

կերսն . զի 'ի վերայ սոյն տեղւոյս ետես
 մարդարէն 'Դաւիթ զկոտորիչ հրեշտակն
 սուր 'ի ձեռին , եւ զարչուրեալ մեծաւ սար-
 սափմամբ էջ յաթուոյ իւրմէ՝ զկեցաւ քորձ
 եւ անկեալ 'ի վերայ մոխրոյ լայր անմխի-
 թար եւ կոծէր զանձն ասելով (Տէր իս մե-
 ղայ , եւ ոչ ժողովուրդս . ապա զիս ջնջեա՛
 յերկրէ , եւ մի զժողովուրդս վասն մելաց
 իմոց) : 'Զախակողմեան դասի սեղանն էյա-
 նուն քերօբէից . յայս դասէս մտանես 'ի
 ներքս 'ի վայրիկ մի՝ որ է իբր աւանդատուն
 ուր է գեղեցիկ սեղան մի՝ յանուն սրբոյ
 կուսին հոփիսիմեայ՝ վայելուչ եւ փառաւոր .
 աստ զգեստաւորին ամենայն եկեղեցականք
 թէ պատարագամատոյցք , թէ սարկաւագունք
 եւ թէ դպիրք . ելեալ աստի 'ի դուրս՝ տե-
 սանես զամենայն շքեղութիւնս եկեղեցւոյ .
 զիառաւոր ջահս , զշարան կանթեզս , եւ
 զայլ բազում կանթեզս եւ զզարդս , որովք
 շքեղափայլին յաւուրս տօնախմբութեանց .
 Եպա ելեալ յարտաքին դրանէ վանուցս
 յորմէ մտեր , երթաս 'ի նոր միջադուռն՝ որ
 է ընդ կողմն հարաւոյ . եւ գտանես անդ
 զի՞ եւս դուռն քաղաքին՝ որ կոչի փրկչե

դուռն . Եւ արտօբացիք ասեն պապ իւլ էլ է -
 պի Տաւութ . Ելեալ անտի արտօբս՝ գնաս
 սակաւ ինչ 'ի հարաւ , Եւ զտանես անդ վեց
 ոտք քարեայ աստիճան մի . Ելեալ 'ի վեր
 տեսանես զամենափառաւոր սարսափելի վա -
 նըս մեր փրկչայ , որ է պարծանք պարծա -
 նաց աղջիս հայոց . ունի փոքրիկ երկաթեայ
 հաստատ դուռն մի՝ որ հայի 'ի հիւսիս .
 շուրջանակի սրբատաշ քարամբք ամուր պա -
 րըսպեալ . մտեալ ընդ այս նեղ դուռն տե -
 սանես նախ անդ 'ի մէջ բակին ահեղ Եւ
 զարմանալի շիրիմս սրբազան պատրիարքայ
 Եւ աւագ Լուսարարաց՝ որք կձեայ քարամբք
 զանազան յօրինուածովք փորակերտեալ կան
 հանդերձ դամբանակրովք . զի 'ի նախնեաց
 անտի սովորութիւն է զարբազան պատրիար -
 քունս , Եւ զաւագ Լուսարարս , Եւ երբեմն
 եւս զծերունազարդ բազմաշխատ եպիսկո -
 պոսունս 'ի մէջ մէծահոչակ վանուցս հան -
 գուցանել : 'Ի մէջ բակիս է փառաւոր սե -
 զան ուրացմանն Պետրոսի . Եւ զնոյն ուրաց -
 ման պատկերն ունի , որ զտեսողսն իսկոյն
 յարտասուս շարժէ : Պարտիս աստ գմտաւ

ածել զողորմելի անկումն Պետքոսի՝ որ զանձըն իւր բոլորովին՝ ի մահ մատնել խոսասանայր ընդ Քրիստոսի, եւ ապա զծանօթութիւնն եւս ուրանայր, եւ այն եւս երդմամրէ եւ նզովիւք:

Ավ ամբարտաւան ինքնահաւանութիւն մարդկայինս տկար բնութեան. ով անմիտ անձնապասատնութիւն, ով ձկնորսդ Պետքոս, այս են վարձք երախտեաց տեառն քում, որ զքեզ յարսց ձկանց՝ յարսալ զմարդիկ հրաւիրեաց, գլուխ առաքելոց կարգեաց, եւ վեմ կոչեաց զքեզ եկեղեցական հիմանց վասն բանի դաւանութեանդ: Ահա այսքան է սիրելիք, մարդկայինս կարողութիւն. յայսքան ասպարէզն կարէ ընթանալ մարդ եթէ զլստուած չունիցի իւրն ձեռորնտու եւ օգնական. ուրեմն եւ դու ով մարդ լիշելով աստ զփքացումն Պետքոսի ՚ի բաց թօթափեաց յանձնէ քումմէ զամենայն հպարտութիւնս. մի լինիր անձնապատան իմրեւ զնա. որ թէպէտ կանգնեցաւ վերտոին դառն արտասուօք զզման եւ ապաշխարութեան՝ եւ արժանացաւ կրկին երանութեան, բայց գուցէ դու ՚ի նոյն կազ-

մակորութեան կորնչիցիս : Համենայն առաքի-
նական ընթացս քս զԱստուած գիտեա քեզ
գործակից . հաստատեա 'ի միտս քո թէ՝ ա-
ռանց աստուծոյ եւ ոչ մի ինչբարեգոր-
ծութիւնք կատարին (Եթէ մեծանայցես
ասէ առաքեալն , յաստուած մեծանայցես ,
եւ ոչյանձն քում) :

'Իներքոյ այսմսեղանոյս է ամենագեղե-
ցիկ պատկերն Արիստոսի 'ի բանտ արգելման
կձեայ պայծառ քարիւ քանդակեալ որում
ջերմեռանդն սիրով երկրպագութիւնս մա-
տուցանեն տէրունական ուխտաւորք : Անց
աստի եւ մաւտ 'ի դուռն սքանչելի տաճարին
զի գտցես զցանկալին քո , զգանձն անդին .
զհրաշալի վէմն կափարիչ դրան կենսատու-
գերեզմանի տեառն մերոյ Հիսուսի Արհո-
տոսի : Աստ է միաւաւոր եւ վայելուչ սեղան
մի հոգւոյն սրբոյ գալստեան՝ կառուցեալ 'ի
վեռայ նոյն սքանչելահրաշ կափարիչ վիմին որ
եկեալ է այսօր ձեռամբ Նեղինէ դշխոյի . զի
կամեցեալնորա տանել զայն ընդ իւր 'ի պօլիս՝
եւ ոչ կարացեալ 'ի տեսչո թենէ աստու-
ծոյ , մնացեալ է աստ 'ի ձեռս մեր 'ի պար-
ժանս լրութեան ազդիս հայոց որում մա-

տուցեալ զարժանալայել պատիւս դառնաս
 'ի ձախակողմն սեղանոյն, որ է սարսափելի
 երկրորդ բանտն Քրիստոսի որ է նեղ եւ
 անձուկ վարիկ մի . աստ արգելին զտէրն
 մեր 'ի գիշերի չարչարանացն՝ յորժամ բեւ
 րաւ 'ի տանէ աննայի՝ այսինքն 'ի հրեշտակա-
 պետէ՝ այսր 'ի սուրբ վանս, որ էր տուն
 Կատարիայի մեծ քահանայապետի տարւոյն
 այնորիկ . եւ յետ բազում հարցափորձու-
 թեան եւ սուտ վկայութեան, եւ զհանդեր-
 ձըս պատառելոյ քահանայապետին թէ՝
 (այհայեաց, զի՞ եւս պիտոյ է մեզ վկայ),
 եղեալ յայս անձուկ բանտս անօրէն հր-
 բեայքն՝ ոչ ետուն նմա երբէք հանգստու-
 թիւն . այլ մինչեւ ցառաւոտ անտանելի իուշ-
 տանգանօք չարչարեցին անողորմաբար : Ու-
 րեմն եւ դու յիշելով աստ զանչափ սէրն
 Քրիստոսի՝ որ վասն քո կրեաց զայնքաննա-
 խատինս . պարտիս երես անկեալ 'ի մէջ
 սուրբ բանտիս աղէողորմ արտասուօք զայս
 ասել . ո՞վ մարդասէր տէր իմ բարեգութ .
 որ վասն բանտարկեալ հոգւոյ իմոյ արգե-
 լար յայսմ աղջամզջին բանտի՝ կրելով զան-
 տանելի չարչարանս եւ զվիշտ :

Եհա այժմ 'ի սրտէ գոչեմ աղերսական
մաղթանօք, զի նոյն անտանելի չարչարա-
նացդ եւ սրբազնասուրբ տնօրինական տեղ-
ւոյս շնորհիւն փրկեա' եւ ազատեա' զ'ի բանտ
մահու արգելեալ հոգի բաղմանեղ ծառայի-
քո 'ի ձեռաց ամենաչար սատանայի. եւ ար-
ժանի արա անձառելի փառաց Աստուածու-
թեանդ ընդ կամարարս քո:

Ելեալ աստի երթաս 'ի յետուստ կողմն
սեղանոյն՝ ուր է փոքր մատուռ մի իբր ա-
ւանդատուն. աստ զգեստաւորին պատարա-
գամատոյգք, սարիաւագունք եւ դպիրք: Աստ
է եւ կանթեղավառ սեղան մի յանուն ամե-
նասուրբ Երրորդութեան. եկեալ անտի 'ի
մեջ սուրբ տաճարիս, տեսանես. շուրջանակի
զղարմանաշէն պատկերս, զշարս կանթե-
ղաց, զջահս եւ զայր բազում կանթեղս, եւ
փառաւոր զարդս: 'Ի հարաւային կողմանէ
դէմ առ դէմ սրբոյ վանուցս փրկչն՝ է սուրբ
Աիօն վերնատունն բաղմախորհուրդ, որ
այժմ 'ի ձեռս այլազգեաց է. քանզի 'ի վա-
ղուց անտի վասն շնչին ինչ պատճառի իւ-
րացուցեալ են ինքեանց մահմետականք. եւ
բնաւին անտեղեակ գոլով աստուածային

Խորհրդոց սրբազն տեղւոյն՝ միայն ՚1, էպի
Տաւութ անուամբ պաշտեն մեծաւ զգու-
շութեամբ զգերեղմանս Դաւթի մարդարէ-
ին, Սոլոմոնի, եւ այլոց բազմաց որք են
անդ :

Ի՞այց ծանի՞ր գու՝ զի նոյն սրբազն
տեղին երկրորդ է սրբոյ Յարութեան, եւ
երկրպագելի վայր անօրինական . սերումէք
եւքերօմէք զարհուրեցան յայն տեղւոջ կա-
տարեալ սարսափելի եւյանհասանելի խոր-
հրդոց : Ի՞անզի անդ աւանդեաց տէրն մեր
զանձառելի խորհուրդ սուրբ պատարազին .
անդ կատարեաց եւ զոտնալուային խոնար-
հակերպ հանդէս ; անդ եկեր զվերջին սուրբ
ընթրիսն հանդերձ երկոտասան առաքելովքն՝
որոյ վասն ասէր . (Յանկանալով ցանկա-
ցայ ուտել զայս պասէք ընդ ձեզ՝ մինչչեւ
չարչարեալ իցեմ) . Լուր եւ զայլ մեծամեծ-
սըն, անդր էջ եւ Նոդին սուրբ հրեղէն
լեզուօք ՚ի սուրբ առաքեալսն եւ հրազի-
նեաց զնոսա ըստ խոօտման Տեառն մերոյ
թէ . (Ես երթայց եւ առաքեցից զմիմիթա-
րիչ Նոդին սուրբ, որ յիշեցուսցէ ձեզ
զամենայն) . անդ արքեալ սրբազն առա-

քեալքն անմահական բաժակաւն, եւ ապա
արրուցին ամենայն տիեզերաց զնոյն իսկ
բաժակն շնորհած ուղևոյն սրբոյ:

Եթոաքոյ սուպոր փրկչի վանուցս յարեւ-
մտեան կողմանէ ևն գերեզմանատունք ա-
մենայն բրիստոնեաց ազդաց. ուրոյն ուրոյն
որոշալք. կից ընդ վանքիս է բաժինն մեր,
եւ է մեծ քան դմիւսոցն. ունի իք եւս աստ
պարտէզ մի ձիթենեաց՝ զէմ առ գրան սըս-
րոյ վսնուցս: Հարեւելեան կողմն գերեզ-
մանատան յունաց՝ որ է մերձ սուրբ Ախօնի,
է տեղի ինչ աւերակ, եւ մարդաչափ որմ
մի. եւ 'ի մէջ որմոյն են քանի ինչ խաչա-
նշան քարինք, ուր ասեն Լինիլ տեղի ննշ-
ման չիրամօր սուրբ Եստուածածնի. զի
անդ էր ասի եւ տուն նորս յայնմ ժամա-
նակի, կից ընդ տանն Հովսէփս արեմա-
թացւոյն՝ որ ինքն է սուրբ Ախօն վերնա-
տունն:

Ծրջեալ ընդ այս սրբազան տեղիս՝ զատ
յառաջին ճանապարհն, եւ յառաջոյ դժան
քաղաքին՝ յորմէ ելեր յառաջադոյն, իջանես
'ի վայր զէպ առ արեւելս. 'ի ճանապարհի
կայ փոքր դուռն մի քաղաքի՝ որ կոչի դուռ-

ուն աղբեմաց . եւ արսքացիք ասեն , ոկտի
կ Արշակ . աստի մուծին դտէրն մեր
՚ի զիշե ին չարչարանաց ՚ի քաղաքն վասն ա-
նարդանս սռնլոյ նվա , անցեալ յառաջոյ
նորս , եւ զսո ՚ի վայր իջեալ իբրեւ տասն
բարէ , գտանես անդ կամուլջ մի վարր եւ
խօնարհ . եւ սոսչի նոյն կառլիք ՚ի ձանա-
պարհէ վայր քար մի սանսնիշ , որ անտի
անցուցին կտէւն մեր ՚ի զիշե ի չարչարանաց
՚ի վերոյ սրածայր իշից շհամարելով ար-
ժակի անցանլոյ ՚ի կամ չւն , զր կոչէին
յաղթութեան չանապարհ . տեսանելով աստ
ոյն քայս զէւ րծրութիւն սրտից թշուառ
հրէիցն թողեալ իսկոյն զբնութիւնն իր՝
կակացաւ ՚ի նուրբը ոտից սրաշն իրոյ ,
որ Դշտն չաղացն կայ միշեւ բայժմ . տ-
հա յայնձամ կատորեցաւ մարզականիւնն
Շօրոյ թէ (Վաղցուաւան նմա խիճք հե-
ղեղատի . (Յ. թ . 33) ասեն թէ ե .
զէակորոս տեսոնելքարն աստ կատարե-
ցին հրէայքն թափչոք , ՚ի ձգելն յաշտարա-
կէ տաճարին :

՚ի վերայ սոյն տեղոյս է շինուածք մի
քառանկիւնի սրածայր զորմէ աւեն լինիլ

գերեզման Անգեայ եւ Օքաքարիայ մարգարէիցն . 'ի ձախակողմն սորին է այր մի՝ որ արտաքուստ ունի քանի ինչ պատուհանաւնման մանր սեամբք շինեալ տեղիս . 'ի մէջ սոյն այրիս տրգել զինքն տեառնեղբայր Յակոբոս առաքեալն 'ի կիշերի չարչարանաց տեառն մերայ . եւ ո՞չ ել աստի , մինչեւ յարուցեալ Քրիստոս 'ի մեռելոց . եւ երեւեալ նմա աստ մսիթարեաց . որպէս վկայէ առաքեալն Պօղոս յասելն . (Եւ ապա երեւեցաւ Յակոբայ առաքելոյ . ա . կոր . ՃԵ . . 7) եւ 'ի յաջակողմն սորաէ արձանն Աբիսողոմայ , որ է բոլորակ եւ ծրածայր ինչ արուեստիւ շինեալ :

Սատի երթաս ՚ի ձորն գեթսեմանի , 'ի վայրն սարսափելի , 'ի տեղին ամենացանկալի . ո՞չ , աստ էառ տէրն մեր սկիզբն փըրկառիթ չարչարանաց իւրոց . հողք եւ քարինք սոյն ձորոյս սարսափելիք են եւ հրաշլիք : Հառաջ քան զիջանել 'ի սուրբ Աստուածածինն փոքր ինչ 'ի վեր ելեալ դէպ 'ի հարաւ , եւ անտի դարձեալ յարեւմտեան կողմն գտանես անդ զսոսկալի քարընկէց տեղին աղթից Տեառն մերոյ . ուր կայ քա-

նի ինչ քար նշանաւոր, զոր համբուրեն տէ-
րունական ուխտաւորք :

Ահա աստ է ոք արարիչն երկնի եւ երկ-
րի անկեալ յերկիր երկիւղահոս քրտամբ
արեան գոչէր առ հայր երիցս անգամ տըն-
րալի աղերսանօք ասելով . (Աբբա՛ հայր
եթէ հնար ինչ իցէ անցոյինէն զայս բա-
ժակ . եթե ո՞չ արբից զսա , եւ եղիցին
կամք քո) :

Աստ մատուցեալ հրեշտակն անզօր՝ զ-
րացուցանէր զտկարացեալ զօրացուցիչն իւր՝
եւ ամենայն արարածոց : Ո՞վ սարսափելի
սրբազն տեղւոյս . ո՞վ անձառելի խոր-
հրդոց՝ որք աստ կատարեցան : Ամենազօ-
րըն Աստուած տկարանայ իրեւ զմարդ
վասն փրկութեան մարդկան . ամենակարողն
Աստուած կարօտանայ աստ արարածոցն
զօրութեան , զի զմարդկային ամենատկար
ընութիւնս յաղթօղ հանդիսացուցէ ընդ
գէմ անմարմին թշնամւոյն :

Ո՞վ անբաւ մարդասիրութեան . ո՞վ մե-
ծի բարերարութեան . փառակիցն ո՞ր եւ
չոգւց ամենազօր էութիւնն իրեւ զոր-
կար ոք աղերսանօք ինդքէ 'ի ո՞րէ զան-

ցանիլն բաժակին. եւ այն ոչ եթէ եւ եթ
բանիւ բերանոյ, այլ Երես անկեալ յերկիր
սարսագմամփ դողացուցանէ զերկին եւ
շերիիր ամենասքանչ խոնարհութեամբն իւ-
րով.

Երկիր դողայ, երկինք սարսամփն, եւ
հրեշտակը զարհուրին. Եւ զու շսոսկան
յանձին քում. շանկանիս տակաւին յերկիր՝
ով յամսռեալդ խստութեամբ մեղաց. Մրդ՝
զգուշութեամբ կաց, զի տեղիդ՝ յորում
չոջիս եւ կառ, տեղի ամենսսորբէ, ան-
կի՞ր յերկիր ըստ տեառն քում, պատառեա-
զսիրտ քո, հա՞ն ՚ի խորոշ նորա զջերմեռան-
դրն արտասուս աղաջնարութեան, գոչեա-
աղէտալի կոկծանօք առ մարմնացեալ բանն
Եստուած ասելով ով բար' բար փրկիչ իմ
Յիսուս Քրիստոս՝ որ վասն բազմամեղ ծա-
ռայի քո՝ ՚ի սոյն սրբազնասուրբ տեղիս կը-
րեցեր զերիիւղ մահու, գոչեցեր առ հայր
աւելքասկան ձայնին, ոռոգեցեր զերկիր ար-
տասոօք եւ ոլուն ոլուն քուամբք սուրբ
արեան քո. եւ ապա արիացեալ ՚ի բաժակէ
հրեշտակին՝ միսիթարեցեր զառաքնալս հայ-
րական գորովապութ սիրով. եւ յետ ամենե-

ցուն ինքնին մատնեցար 'ի ձեռս արեանար-
բու անօրէն հրէիցն , որը կապեալ զար-
ձակիչ կապելոց իրանւ զդառն անմշշ
տարին 'ի սպանումն :

Երդ՝ աղաջեց եւ աղերսեմ առ քեշ 'ի
խորոց սրոի կեանք իմ Քոիստոս , յիշելով
զնոյն սռսկալի տօրէնութիւնս , զ' ոպսնս
եւ զշարչորսնս .քո կամքոր . արձակեա' զիս
զեսդ .լիս 'ի կապմաց մահու 'ի կեմնս քո
յափտենական . եւ մի' ամօթալի կացուցա-
ներ զիս յատենի յաւուր ահեղ դատաստա-
նի , զոր ունիս տեսանել 'ի սլբազան վայրս
այս 'ի Վեթամանի . անտես արա' տէր ըզ-
րազմատեսակ յանցանս իմ , յորմամ կայցես
այսր անթիւ զօրօք բազմութեամբ հրէշ-
տակաց , եւ անձառելի փառօք՝ հատուցա-
նել իւրսքսնշիւրոց ըստ գործոցն իրաւամբք
եւ արդարութեամբ , եւ ո՛չ սղորմաւթեամբ
եւ գիտութեամբ . զի յայնժամ փակեսցին
զրունք ողորմութեան , եւ բացցին ատեանք
արդարութեան եւ ճշմարտութեան . եւ կա-
ցո' զիս 'ի դասն յաջակողմեան լնդ սուրբս
եւ ընդ սիրելիս քո վասն անսւանդ քուժ
սրբոց ,

Ամց ընդ տեղայսէ պարտէղ մի լատինաց շրջապատեալ որմնվ, ուր ընդ առաջ ելեալ Քրիստոս անօրէն զինուորացն եւ հրէից եկելոց յլմբոնել զնա՝ իբրեւ քաջ հովիւ հարցանէր թէ (Օ՞ս խնդրէք) եւ առքա ասեն (Օ՞սիսուս նազովոնցի) եւ յասելն Քրիստոսի թէ (Ես եմ, յետոյեւ որս չըբան եւ զարկան զգետնի) :

Աստ եհատ Պետրոս զունկն Մաղքոսի . եւ Քրիստոս դարձեալ բժշկեաց զնա՝ ի ցուցանել զանոխակալ ներողամոռութիւն իւր . Աստ կալեալ կապեցին զէյիսուս, եւ տարին առ Աննա քահանայապեա :

Աստ կան եւս քանի ինչ հնատունկ ծառք ձիթենեաց, զորոց ասի թէ ընդ անցանելըն աստի Քրիստոսի յաւուր ծաղկազարդի, յերկիր խոնարհեալ սոցա իբր յերկըրպագութիւն արարչին ամենայն արարածոց, ի պատիւ գալստեան նորա, եւ դարձեալ կանգնեալ են :

'Ի վեր կոյս սորտ է վէմն այն տափուրակ՝ ուր էած Յիսուս ընդ իւր զերիս ընտրեալ առաքեալսն՝ զՊետրոս, զՅակոբոս, եւ զՅօհաննէս . որոշեալ զնոսա ի միւս աշխ-

կերտացն 'ի ցուցանել նոցա զանհարին
արտմութիւնս իւր եւ զկամաւոր յանձնառու-
մըն չարչարանաց եւ մահու . զի որք արժա-
նացանն պեսութեան անձառելի փառացն
ասպուածութեան յաւուր պայծառակերպու-
թեան , լիցին ականատես եւ այսմ սոսկալի
հանդիսի անպատմելի տիրութեան :

Աստ 'ի ննջել երից առաքելոցն 'ի յոյժ
արտմութենէ՝ յանդիմանեցաւ Պետրոս 'ի
տեառնէ . որ զմեռանիլ խոստանալը յառաջա-
գոյն ընդ Վրիստոսի , եւ այժմ միայն քը-
նոյն ո'չ կարեր զդէմ ունիլ . որով գուշա-
կէր յայտնապէս զտկարութիւն իւր եւ ըզ-
նշան ուրացութեանն : Ուստի իրաւամբ յան-
դիմանիւր 'ի տեառնէ արթուն կալ եւ մի
մտանել 'ի փորձութիւն :

Աւրեմն եւ դու արթուն կաց եւ զգոյշ
լե՛ր , զի մի լուիցես զյանդիմանութիւնն
տէրունեան թէ՝ ո'վ պետրէ ո'չ կարացեր
ժամ մի արթուն կալ վասն իմ . նա մանա-
անդ վասն հոգեոյ քո յայսմ աշխարհի՝ զի
զյաւիտենականն ընկալցիս հանդստութիւն
եւ զանտրտում ուրախութիւն . քանզի հա-
մայն կեանք մարդոյ՝ որ յայսմ աշխարհի , է

իրրեւ ժամ մի առաջի տեսոն. ըստ Դաւ-
թի թէ՛ (Նողար ամյացա տեսան որպէս
օր երէկի զի էանց) :

Աստի՛ մէջնեց աւ Քրիստոս իրրեւ քս-
ըլնեց մի. եւ հկաց յաղօթս ըստ բանի
սրբազն աւետարսնչացն : Աստի՛ ևս սա-
կաւ ինչ յառաջ ընթացեալ դեպ ընդ ա-
րեւ. լո՛ տեսանես զլէմ մի փոքր ինչ մի-
ջափարեալ իրրեւ յենարան . ուր ասի թէ՛
յեցեալ է ամենօր հնեալ սուրբ Աստուա-
ծածին յաւուր քրիոծման սրբոյն Ատ փւնա-
նոսի նախասարկաւային եւ առաջին մարտի-
րոսին . Տի տեսանել զբարեյօժար կատսրու-
մըն նորա ՚ի սէր ասոռուածորդւոյն իւրոյ .
զի դէմ յանդիման նոյն վիմին ՚ի քաղսբա-
կողմն կոյս ՚ի ստորոտ զառ ՚ի վէր ճանա-
պարհին զնասյ ՚ի քաղաքն է տեղի կատոր-
ման սրբոյն՝ ուր պատկն մարտիրոսաց երա-
նելին Ատեփաննոս ՚ի մատաղ հասալի իւ-
րում բարետենչ փուփաքմնօք յանձն Հառ
զգանաղէտ սահն քրիոծման սքանչելի
ներաղամտութեամբ զթողութիւն ինզրե-
լով ՚ի տեսառնէ խոտասրբտ սպանողացն՝
Յօրինակ վարդապետին իւրոյ Ծիսուսի, ա-

սելով. (Մի՞ համարիր դոցա զայս մեղս) որոյ մաղթ մնքն սրտեռանդ՝ արդիւնառուեաց զ՞նզոս հալսածին և կեղեցւոյ նւ զիամակի ըլն սպանման իւրոյ ՚ի ոյս ճշմարտութեան սուրբ հաւատոյ եւ ՚ի կոչումն առաքելութեան :

Եսոի դառնաս գեպ ՚ի տաճարն սուրբ Վատուսածածնի. իջեալ ՚ի վերուստ հնգիւտասան աստիճանաւ ՚ի բակն, յառաջ քան զմոն ՚ի սուրբ տաճարն. ընթանաս ՚ի կողմն արեւելից՝ սոր է վիմափոր մմագոյն տեղի մի լատինաց, որ ունի քանի ինչ հընաշեն փոքր սեղանս.

Եսո այն վայրն է, ուր նախ եկալ տէրն մեր ՚ի սուրբ վերնատսնէն հանդերձ մետասանիքն, աւանդեսց զսկոյ պատուիրանն, զվերին կտակն աստուած ոյին, և զալ ամենայն վսեմ և հոգեկեցւոյ բանազոր գրէ մի առ մի սրբազան աւետարանին Հանանէս. աստ էին թմրեալ ուժերին առաքեալ քն ՚ի խոր տրտմութեան, մինչ եկըն ։ Եղայ մատնիչ հանդերձ արիւնարբու կատաղի գնտակն զինուորաց։ Եսո Եւսազ թմեաց ասեն՝ Քրիստոս փոքր ինչ յեա

պատուիրանին, եւ ապա առեալ զերիս սիրելի աշակերտան գնաց ՚ի տեղին տափառակ:

Ելեալ աստի մտանես յամենագեղեցիկ տաճարն սուրբ Աստուածածնի, որ ունի քառասուն եւ մի աստիճանս . իջեալ ընդ կէսն աստիճանաց, գտանես անդ յերկու կօղմունս զերկու փառաւոր կանթեղավառ եւ աշտանակաւոր սեղանս . յաջակողմեանն է Տայր Յովսէփայ, առն Ամարիամու Տիրամօր սուրբ կուսի . անդ է եւ գերեզման նորա, եւ է մեր . իսկ ձախակողմեանն է երկու փոքր սեղան՝ սրբոցն Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սրբոյ ծնողի բանին . եւ գերեզմանք նոցա եւս են անդ, որ է յունաց :

Ապա իջեալ՝ ի վայր գտանես ՚ի միջի անդ զսրօբէասպաս սրբազնասուրբ գերեզման ամենօրհնեալ սուրբ Աստուածածնի՝ որ ցանկալի է, ո՛չ թէ քրիստոնէից միայն, այլ եւ հեթանոսաց . զի ամենն քեան եւս տենչանօք բաղձան սոյն ամենափափաքելի սուրբ գերեզմանիս . Չեւ եւս մտեալ ՚ի նա, է արտաքուստ փառաւոր վերափոխման սեղան

մի մեր, հանդերձ կանթեղօք, մոմեղինօք
եւ այլ վայելուչ զարդուք:

Ըորժամ կամիս մտանել ՚ի սարսափելի
գերեզմանս այս սրբազն՝ ա՛ծ զմտաւ ըզա
մաքուր վարս; Եւ զնուրբ կուսութիւնս ա-
մենօրհնեալ տիրամօրն, եւ ապա ըստ արա-
ժանւոյն սրբեալ զսիրտ քո յամենայն աղա-
տեղութենէ մեղաց, եւ ՚ի բաց հանեալ
զամենայն հեշտութիւնս եւ զցանկութիւնս
աշխարհի, սրտաբուղլս դառն արտասուօք
եւ ջերմագին սերտ սիրով, ծնրադրական
խոնարհութեամբ երես անկեալ ահիւ եւ
դողութեամբ մուտ ՚ի ներքս ասելով:

Ո՞վ ամենամաքուր տիրամայր սուրբ
աստուածածին, որ ՚ի կէտ յղացման ՚ի մօ-
րէդ սրբեցար կուսութեամբ, եւ ապա ծը-
նար հրաշափառապէս, սնար փափիկու-
թեամբ, եւ եղեք տաճար եւ բնակարան
ամենասուրբ երրորդութեան. աւետեգն
գաբրիէլի յղացար ՚ի հոգւոյն սրբոյ զան-
տանելին երկնի եւ երկրի զորդին միածին
հօրն հաճութեամբ եւ հովանաւորութեամբ.
Եւ իննամսեայ ժամանակաւ կրեալ զնա յա-
մենասուրբ որովայնի քրում, ծնար անձու

ռազես զկենաբործով ամենեցուն, զիբը-
 կեն տեղելերայ, զազստիշ մե, 'ի յաւիտե-
 նական տանգանաց, եւ զուրանութիւնն եր-
 կի եւ երկի զըմն աստուած. ւնուցեր
 զնա սրբութեամբ, ըսրձ'ր 'ի վէրսյ ամե-
 նօրհեալ բազիսցդ գոտւանք, գիեցու-
 ցեր մաքուր կաթսմբդ, համբուր'ցեր ա-
 մենասարս շրմամքդ, եւ ընծայեցեր զնա
 պուղ կենաց ախսրհի. եւ հեա լումն ա-
 մենայն փրկառիթ տնօրինութեանց, եւ սըր-
 տատուցր կս'ծանաց առաջի խաչի սիր'լի
 որդւցդ միանի, եւ համբուրձման նորս առ
 հայր փառօք 'ի յերկինս, վլրսիսնեցը եւ
 գու ամենասուրբ կոյսդ, ամրիծ աղաւ-
 նիդ, անմել տատրակդ 'ի կենց ալցյս աստի
 հրաշափառ հանդիսիւ, եւ հոգեզուրճ ու-
 բսիութեամբ գասուց երկնայնոց վլյր ե-
 ջելու ընդ կուս սծըն որւոյիդ քո աստու-
 ծոյ եւ տեսուն մերոյ, թառւցեալ սլացեալ
 արինսից անձառելի փառօք մինչ 'ի յա-
 թառ աստուածութեանն. անդ բազմեալ
 հայեար հուզ առ երրորդութիւնն անհա-
 սանելի բարձրաթեամբ՝ միշտ բարեխօս վա-
 սըն աղյի մարդկան.

ՎՀա այժմ մերացեալ ապիկար ծառայս
որդւոյ քո՝ անկանիմ առաջի քո առտ՝ 'ի մէջ
սուրբ գերեզմանիդ. Երկիխոպագանեմ. ա-
զանեմ եւ աղերսեմ. շնորհիւ սրբադան տեղ-
ւոյս Է. 'ի սէր առտուածորդւոյդ Նայեա'յիս
'ի բազմամեց ամենաքաղցր ակամի քո, եւ
բարեառան առ միաձին սիրելի որդեզ՝ զի
փրկեցէ զիս յամենայն մեռելոտի գործ ոյ
աշխարհիս, եւ սրբեալ տաճարոց և սցէ լի-
նիլ բնակարան ամենասորը աստուածու-
թեանն ընդ սրբոցն միշտ:

Ո նի սոյն սուրբ գերելմանս զերկու վի-
մափր փրաքը զրունս, մինչ յարեւմտէ, յեր-
մէ մասնես, եւ մին 'ի հիւսիսդ: 'Ի մէջ
գերեզմանիս կախեալ են բուն եւ վեց մշտա-
վառ կանը 'ղը. Երեքտսասնն մեւ, եւ եւ-
րեքտսանն յունաց. ումն աշտանակը կան
անդ, չորսն մեր, եւ չորսն յունաց. ումն
ծաղկաւ նը, չորսն մեր, եւ չորսն յունաց.
զպատկերն եւ զծած կոցն 'ի վերայ սուրբ գե-
րելմանի, 'ի ժամ սուրբ սրբադան մերոյ
մէք դնեմք, եւ 'ի ժամ բւնաց պատորա-
զի յոյնք դնեն. յաջակողմեան ծած կռքքն
թէ 'ի մէջ սուրբ գերեզմանի, եւ թէ արտա-

Քոյ որք են յերեսս որմաց Հանդերձ պատ-
 կերօքն՝ են մեր : Եւ ձախակողմանքն՝ են
 յունաց . թէ 'ի շրջանակս սուրբ տաճարիս,
 եւ թէ 'ի վերայ փոքր զմբեթի սրբոյ գերեզ-
 մանիս եղեալ Համայն կանթեղք՝ աշտա-
 նակք՝ ծաղկամանք՝ եւ այլ ամենայն զարդք,
 որովք զարդարեն 'ի հանդիսաւոր աւուրս
 են Համահաւասար երկոցունցս : Ան 'ի մէջ
 տաճարիս տասն շաբան կանթեղք , հինգն
 մեր , եւ հինգն յունաց : Են եւ վեց զարմա-
 նալի ջահք , երեքն մեր , եւ երեքն յունաց :
 'Ի հիւսիսային կողմն սուրբ գերեզմանիս
 է սեղան մի փառաւոր կանթեղավառ , որ է
 ասորւց շնորհիւ սրբոյ աթոռոյս՝ որք եր-
 բեմն պատարագեն անդ : Եստի գնացեալ 'ի
 յետ կըս սրբոյ . գերեզմանիս տեսանես
 փոքր տեղի մի յունաց : ուր կայ երկու փո-
 քը սեղան . անդ զգեստաւորին պատարագա-
 մատոյքը յդւնաց . 'ի ձախակողմն սուրբ գե-
 րեզմանիս է եաժ յոյժ փոքր տեղի մի՝ ուր
 եւ զգեստաւորին մեր պատարագամատոյքը
 միշտ . զի 'ի վերայ սրբոյ գերեզմանի օք
 ըստ օրէ մատչի անմահ պատարագն՝ թէ
 մեր , եւ թէ յունաց . յարեւմտեան կողմն սըս-

բոյ տաճարիս կայ ջըհոր մի երկուց ազգացս
եւ 'ի դլուս ջըհորոյն է մթագոյն տեղի մի՝
եւ հին սեղան մի՝ մեր, ուր երբեմն զըպ-
տիքպատարագեն շնորհիւ սրբոյ աթուոյս :

Յոյնք ունին եւս երեք փոքր սեղանս .
մին՝ 'ի դրան կողմն տաճարիս 'ի ներքոյ աս-
տիճանաց . եւ երկուսն՝ 'ի յաջակողմն, ա-
ռաջի սենեկի ու յիշի իւրեանց . զի երկու
սենեակք են 'ի մէջ տաճարիս . մին՝ մեր,
որ է 'ի ներքոյ աստիճանաց . եւ մինյունաց,
որ է 'ի յաջակողմն տաճարիս, ուր ննջեն լու-
սարաք երկու տղացս . զի 'ի գիշերի մի-
այն լուսարարք մնան անդ . իսկ ու յիշեքյա-
ռաւօտու գնացեալ մնան անդ մինչ 'ի լուսն
իւրաքանչիւր պատարագի, եւ ապա վերա-
դառնան 'ի վանս . նախ յոյնք պատարագեն՝
ապա մեք . 'ի փառս ամենօրհնեալ տիրամօր
սուրբ կուսի, եւ ծնելոյն 'ի նմանէ բանին
Աստուծոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քը-
րիստոսի' որ է օրհնեալ յափտեանս :

ԳԼՈՒԽ Դ.

Յաղոցս ելանելը՝ 'ի սուրբ լեռուն համ-
բարձման, և ապա մտեալ՝ 'ի ժաղացն 'ի ուշ-
ըանե սուրբ Ասպոտածածնի ։ Հրջագայելով
Հրբաղան պելիս՝ գոլ՝ 'ի սուրբ Յակոբ :

Մաղուք 'ի յարկս նորա, և երեխը-
պադցուք 'ի տեղւոջ ուր կացեալ
են ոտք նորա։ (Աաղ. Ճա. 6)։

Ունիս եւս՝ արդեօք իղձ սիրելիս յեր-
կինս 'ի վեր ելանել, ե'կ ցուցից քեզ ըզ-
դուռն յորմէ եմուտ առաջնորդն քո Վրիս-
տոս, եւելառ չայր յերկինս, եւ եցոյց
մեզ հեաեւելոցս իւր՝ ճանապարհ ուղիղ եւ
անմոլար :

Երդ՝ ով ոք կամիցի յայս դուռն մտա-
նել՝ յանձին ցուցցէ զնմանութիւն վարուցն
Յիսուսի՝ զխոնարհութիւնն, զհեզութիւնն,
զարիութիւնն, զարդարութիւնն, զսրբու-
թիւնն . եւ զայլ ամենայն աստուածածոյ բա-

բեմասնութիւնս, որովք փայլեցաւ նայաշ
խարհի իսրեւ զարեգակն պայծառ. եւա-
շակերտելոցն իւրոց՝ զնոյն ճանապարհ ըն-
թանալ պատուիրեաց, զի այնու ելեալ ժա-
մանեսցեն 'ի տեղին, յոր ինքն եմուտ եւ
բաղմեցաւ իսրեւ իշխան եւ տէր ամենեցուն.
Հապա ե'լ 'ի վեր յառաջոյ դրան սուրբ
Աստուածածնի 'ի լեառն ձիթենեաց դէպ
'ի հարաւային կողմն՝ որ տանի զբեզ ուղ-
ղակի, 'ի գլուխ լերինն՝ ուր է ամենասքանչ
տեղին համբարձման տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի: Այտեալ յարտաքին դրանէնու-
րա գտանես զմեծ բակ իմն, եւ 'ի միշի գըմ-
բեթ մի փոքր շոջապատեալ. սոյն գմբեթ
թէպէտ 'ի մեր վիճակի է. զի ունիմք 'ի
ձեռս մեր հաստատուն հրովարտակս. բայց
այժմ երեք ազդք հաւասար տիրեն. եւ 'ի
համբարձման աւուրլատինք մատուցանեն անդ
զպատրագն, եւ մեք զսպասն տարեալ ան-
դըս 'ի ժամ վերաբերման՝ դնեմք սրբազն
տեղւոցն համբարձման, եւ անտի կրկին վե-
րաբերեմք 'ի պատարագատեղին մեր՝ որ է
յաջակողմն նոյն գմբեթի. զոր զարդարեմք
յայնմ աւուր խաչիւ՝ աւետարանաւ եւ տէ-

բունական պատկերաւ, եւ ամենայն հանդիպավայել զարդուք իբրեւ զսեղան, շրջապատեալ ունելով՝ ի վերուստ զգեղեցկայարմար վրանս խորանաձեւ. եւ այս երկիցս ՚ի տարւոջ. այսինքն՝ յաւուր համբարձման տեառըն մերոյ. եւ յերրորդում կիւրակէի մեծի պահոց :

Խսկ ՚ի ձախակողմն սոյն գմբեթիս յոյնք մատուցանեն պատարագ ըստ մերում կերպի. ՚ի մէջ մեր եւ յունաց պատարագեն ասորիք եւ ղպտիք. եւ ամենեքեանքս վրանայարկ եմք. զի չկայ անդ շինուածք վասն անյարմարութեան ազգաց՝ բաց ՚ի միոյ գըմբեթէ :

Արդ՝ յորժամ մտանես ՚ի մէջ գմբեթին, ո՛չ այլ ինչ գտանես անդ, եթէ ոչ զըորեք կուսեայ կոփածոյ քարամբք շրջապատեալ քար մի միայն՝ յորոյ վերայ է շափուտիցն Յիսուսի ՚ի ժամանակէ համբարձման: Քար եւ եթ եւ ո՛չ ուկի, կամակն պատուական, բայց ընտիր քան զամենայն քարինս՝ որք են յերկրի. քար, եւ ո՛չ այլ ինչ. սակայն մաքուր եւ պատուական քան զամենայն քարինս լուսափայլս եւ ազնուագոյնս: Ո՛չ քարին

տամբ զայս ամենայն գովութիւնն եւ զպատիւ, այլ 'ի վերոյ նորին ոլացելոյն 'ի վեր 'ի յերկինս՝ Յիառուսի Քրիստոսի. որ 'ի նըշան եւ 'ի հաստատութիւն ոմանց երկմտելոց եթող քարոզող 'ի վերայ երկրի զայս սուրբ եւ սքանչելի քարս ոտնակոխ հրաշափառ համբարձմանն իւրոյ :

Աստ ետ Քրիստոս զվերջին օրհնութիւնն սրբազն առաքելոցն . աստ եդ զամենազօր աջ իւր 'ի վերայ նոցա եւ զօրացոյց զնոսա . աստ աւանդեաց զձեռնադրութիւնս իննեակ աստիճանաց եւ երից քահանայութեանց . ըստ սրբազն աւետարանչին թէ (Եդ ձեռու 'ի վերայ նոցա եւ օրհնեաց ըշնոսա, եւյետ օրհնելոյն ։ մեկնեցաւ 'ի նոցանէ, եւ վերանայր փառօք յերկինս) աստ շնորհեաց զառաջին իշխանութիւնն կրկին՝ զոր կորոյս նախահայրն 'ի դրախտին . (Ահա ետու ձեղ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս . որպէս ետ ինձ հայր, նոյնպէս ետու եւ ես ձեղ) ասելով : Աստէն առաքեաց զառաքեալս 'ի քարոզութիւն հեթանոսաց, եւ 'ի մլրտութիւն հաւատացելոց յանուն որ եւ Որդուոյ եւ ոգուոյն սըս-

բոյ . աստ վճարեաց զկատարումն ամենայն
փրկառիթ տնօրէնութեանց մարդեղութեա-
նըն իւրոյ :

Երդ՝ զո՞րպիսի երկրպագութիւնս պար-
տիս աստ մատուցանել . կամ որով ջերմե-
ռանդութեամբ ունիս մատչիլ 'ի համբոյք
սոյն սրբաշան տեղւոյս . ո'չ այլ ինչ, այլ
միայն հրաժարեա՛ 'ի հեշտութեանց աշխար-
հի , եւ վերացո՛ զմիտս քո յերկինս 'ի վեր,
եւ լե՛ր երկնախն վարուք եւ սրբութեամբ ,
եւ մի՛ երկնային՝ ստորաբարշ մեղկութեամբ .
առատացո՛ զարտասուս աշացդ . բեւեռեա՛
զսիրտ քո 'ի սէր եւ յերկիւղն Աստուծոյ . եւ
անկի՛ր 'ի վերայ երեսացդ ասելով :

Ո՞վ մարդացեալդ վասն իմ միածին Որ-
դի , որ յաղագո փրկութեան մերոյ իջեալ
յերկնից 'ի ծոցոյ Նօր՝ կատարեցեր զամե-
նայն կենսառիթ տնօրէնութիւնս . ծնար,
յայտնեցար , մկրտեցար , մատնեցար , չար-
չարեցար , խաչեցար , Թաղեցար , յարեար ,
եւ ապա հրաշավառ զօրութեամբ եւ աստ-
ուածային ամենակարող իշխանութեամբ
համբարձար աստի առ հայր 'ի յերկինս յոր-
մէ իջեր . Արատ բանի քում թէ՝ (Ո՞վէ ոք

ելն, եթէ ո՞չ որ էջն, 'ի վերսւստ։)

Երդ՝ անկեալ առաջի քո ժտելով
հայցեմ՝ արտասուագին պաղատանօք Աստ-
ուած իմ՝ Հիսուս։ յիշելով զայս ամենայն
մարդասիրութիւնս քո՝ գթա՛ եւ ողորմեա՛ ինձ
խղճալոյս, եւ թող զբաղում յանցանս ա-
մենապարտիս, եւ արժանի արա՛ 'ի վերջ-
նում աւուր մեծի գալստեան քո վերանալ
աստի ընդ քեզ ՚ի յերկինս եւ դասիլ ընդ
սրբոցն յարազուարձ ուրախութեամբ։

Ելեալ աստի երթաս դէպ առ արեւե-
լոս, եւ ո՞չ ինչ հեռի գտանես զլեառն Պա-
լելեա՝ ուր ժամադիր եղեւ Հիսուս աշակեր-
տացն՝ յառաջել քան զինքն զկնիյարութեա-
նըն։ 'Ի բարձունս հրաւիրէր զաշակերտսն
իւր՝ զի 'ի կատար ամենայն առաքինութեան-
ցըն կիրթ լիցին փութալ միշտ ժամանել.
ո՞չ միայն աշակերտքն այնոքիկ՝ այլ եւ ամենայն
հետեւեալքս զկնի շաւղաց սուրբ հաւատոյ
նորա։ Իսկ այժմ մեք աշակերտեալքս եւ
ո՞չ զկնի գոնէ կարեմք գնալ, ապա վայ-
մեզ եւ եղուկ բիւր բերան։

Տեղիս այս է բացօթեայ. զի չունի շին-
ուածս, միայն փոքր ինչ քարամբք պատեալ

շուրջանակի . 'ի միջի են ջրհորք ցամաք , եւ
ինքն է այժմ երից ազգաց . աստ ժողովե-
ցան նաև առաքեալք , եւ եկեալ Վրիստոս
էառ աստի զնոսա եւ տարաւ 'ի տեղին համ-
բարձման՝ եւ անտի համբարձաւ յերկինս :

'Ի սուրբ համբարձման վայրեն գան այսր
ուխտաւորք իբր տասն րոպէիւ , եւ աստ
մատուցեալ զվայելուչ երկրպագութիւնս ,
գնան աստի իբրեւ ժամ մի 'ի Յեթանիա 'ի
գերեզմանն Պազարու , ուր Վրիստոս կո-
չեաց զ' ազարոս 'ի գերեզմանէ , եւ յարոյց
'ի չորեքօրեայ մեռելութենէ : Անդ է վիմա-
փոր տեղի մի 'ի ներքոյ երկրի՝ յոր իջանեն
ճրագաւ , ուր է գերեզմանն . պարտիս անդ
'ի միտս բերել զանձառելի մարդասիրու-
թիւնն Վրիստոսի , եւ զքաղցրահոս ար-
տասուս նորա՝ որ վասն անհնարին մեղօք
մեռեալ հոգւոց մարդկան իբրեւ զչորեքօրեայ
հոտեալ մեռեալն . յոգւոց հանեալ արտաս-
ուեաց թախճագին , եւ մեծահառաչ ձայնիւ .
աղաչելով զհայր՝ յարոյց 'ի յաւիտենական
մեռելութենէ . այսինքն 'ի ձեռաց դժոխոց
եւ սատանայի :

Աւեմն եւ դու յիշելով զայսպիսի ան-

չափ բարեգթութիւնս նորա՝ զո՞րպիսի գու-
հունակութիւնս հարկիս մատուցանել սերտ
սիրով եւ ջերմեռանդն արտասուօք՝ զի վա-
սըն քո արտասուս եւս հոսեաց Քրիստոս
աստ յամենաբաղցր աչաց իւրոց :

Աստի իբրեւ տասն րոպէ գնացեալ
գտանես վէմքար մի թաղեալ 'ի մէջ երկ-
րի յորոյ վերայ նստաւ Յիսուս մինչեւ
եկեալ 'ի Բաթանիա, ուր ընդ առաջ եկն
Արթա, եւ գնացեալ կոչեաց եւս զԱր-
քիամ զքոյր իւր . որպէս պատմէ սրբազն
աւետարանիչն Յօհաննէս . այսր եկեալ տէ-
րունական ուխտաւորք՝ մատուցանեն զջեր-
մեռանդ երկրպագութիւնս :

Աստի յետս դարձեալ դաս 'ի գալիլեա
եւ անտի իջեալ 'ի վայր՝ եւ անցեալ յառա-
ջոյ դրան սուրբ Աստուածածնի՝ ելանես 'ի
վեր 'ի դուռն քաղաքին՝ որ կոչի սուրբ Աս-
տուածածնի դուռն . եւ արարացիք ասեն
պապ իւ Ալթ Աէրիեմ. մտեալ 'ի դուռն
եւ փոքր ինչ յառաջ գնացեալ տեսանես զմեծ
փոս իմն՝ տեղի աւերակ, եւ այժմ աղբա-
նոց՝ ուրէ պրօպատիկէ աւազանն . որ անդ
դնիւր ւազմութիւն հիւանդաց վասն ջուր

ցըն յուզման, եւ բժշկութեան, որ լիներ
անդ՝ իձեռն հրեշտակի. բայց այժմ ո՛չ
ջուր՝ եւ ո՛չ հրեշտակ է անդ. զի յայնժամ
խաչափսյոն անդ էր, եւ ՚ի զօրութենէ
նորա լինէր այն հրաշք. իսկ յորժամ բար-
ձին զայն անտի, ջուրն ցամաքեցաւ, եւ
հրեշտակն ո՛չ եւս երեւեցաւ:

Աստ բժշկեաց տէրն մեր զերեսուն ու-
թամեայ ամենապերախտ անդամալոյն այն
չար՝ զարբանեակն սատանայի, որ եհար
զառաջին ապտակն Քրիստոսի. ո՞վ մեծի
ապերախտութեանս. ո՞վ անաստուած լո-
բութեանս. լստ նարեկացւոյն: Որ չարա-
շուք ծնգեցեալ կայր անդ ՚ի մէջ յետին
թշուառութեան, եւ ամենողորմն Յիսուս
գթացեալ ՚ինա՝ միով բանիւ իսկոյն բժշկեաց
եւ պստուիրեաց մի՛ եւս մեղանչել. բայց
ամենաչարն այն ո՛չ ինչ վերջացաւ ձեռներէց
լինել այնմ ապտակահարութեան ՚ի գիշե-
րին չարչառանաց +

Օդոյշ լե՛ր ո՞վ եղբայր չգուցէ եւդաւ
ապերախտ գտանիցիս տեառն քում, մե-
ղանչելով ընդ դէմամենասուրբ կամաց նո-
րա: զի որ ոք մեղանչիցէ ընդ դէմ կամա-

ցըն աստուծոյ՝ ապտակահար լինի նմա . զարք
հուրեա՝ յանհնարին տանջանացն դժոխոց ,
եւ մի՛ հանէր 'ի սրտէ քումմէ զերկիւղ
տեառն երբեք . աստ է եւ մի դուռն յեր-
կոտասան դրանց սողոմնեան տաճարին .
բայց 'ի քրիստոնէից արգելեալ է մտանել
անդր՝ զի գանածեծ լինի յոյժ :

Աստի փոքր ինչյառաջ գնացեալ դեպ
'ի հիւսիս , 'ի յաջակողմդ կոյս տեսանես ըզ-
հոյակապ դմբեթաւոր շինուածք մի՛ որ է
տուն հօվակիմայ եւ Աննայի ծնողաց սուրբ
կուսին . 'ի մէջ սորա է տեղին սուրբ ծը .
նընդեան ամենօրհեալ տիրամօրն . որ ուրա-
խութիւն ծնաւ երկնի եւ երկրի , եւ ծառ-
կենաց եղեւ 'ի մէջ աշխարհի՝ յորմէ բու-
ռաւ պտուղն կենաց , Տէրն մեր հիսուս Ք.ը-
րիստոս : Տեղիս այս սուրբ եւ մաքուր վայր
է , եւ է այժմ 'ի ձեռս լատինաց :

Աստի գնալով 'ի վեր սակաւ մի ու-
ղեղ ծանապարհաւ գտանես զնորաշէն փուշ
պսակի վանքն լատինաց , որ է հրապարակն
ապարանից Պիղատոսի . որպէս ասէ Ո՞ ար-
կոս աւետարանիչն , եւ զինուորքն տարին
զնա 'ի ներքս ՚ի կաւիթն՝ ուր հրապարակն

Էր . տեղիս այս է սրբազնասուրբ եւ ամենամաքուր . զի աստ կրեաց Քրիստոս ըզ բաշում՝ չարչարանս . աստ է տեղին ձաղեցման ուր կապեալ զտէրն մեր 'ի սիւնն անօրէն զինուորքն հարին յոյժ զանազան գանիւմինչ կիսամեռ լինել նմա , եւ ամեապատուական արեամբն աւազան . կազմել անդ 'ի յատակս սեան : Աստուածաբանք վճռեն՝ եթե չլինէր աստուածային զօրութիւնն անհնար էր աստ չմեռանիլ Յիսուսի , զի անթիւ եւ անտանելի գանիւ ձաղեցաւ յանօրինաց . չմնաց երբէք տեղի յամենասուրբ անձին որ չլիցէր արեամբ չափ վիրաւորեալ . ուստի զայս տեսեալ Յսայի յառաջագոյն ասէր . (Յեսաք մեք զնա , զի ո'չ գոյր նորա տեսիլ , այլ ամենեւին անտրգեալ . ծդ . 2) :

Աստ յիշեաց զամենօրհնեալ մայրն իւր նազելի՝ որ չեւ եւս էր գիտակ չարչարանաց իւրոց , այլ 'ի տան կայր միամտաբար . եւ աստ կոչեաց զնա առ ինքն աղիողորմկսկը ծանօք եւ լալագին ողբովք . որպէս պատմեն 'ի զիշերի աւագ ուրբաթու :

ապա եւ դու ո՞վ եղբայր ցաւակից

լեր այժմ ընդնմա , յոգոց հա՛ն , լա՛ց , ող-
բա՛ , զղջմամբ եւ դառն արտասուօք . եւ խոռ
նարհեցուցեալ զծունը սրտիքո՞ գոչեա՞ առ
նա լալագին դիմօք ասելով :

Ո՞վ ամենագութ Տէր իմ Յիսուս որ
վասն մեղաց իմոց զայնպիսի անտանելի չար-
չարանս նկրեցեր , եւ անհնարին ցաւօք վի-
րաւորեցար , եւ ամենամաքուր արեամբդ ինձ
աւաղան կազմեցեր՝ զի նովաւ մաքրեցաց 'ի
մեղաց . իսկ ես ո՛չ յիշելով զայսչափ մար-
դասիրութիւնս քո՞ ապերախտ գտայ առ բաւ-
րերար Տէրդ իմ , բազմացուցանելով օրըստ
օրէ զմեղս եւ զանօրէնութիւնս անթուելիս .
այժմ անկեալ առաջի քո իբր ծառայ ան-
պիտան՝ աղաչեմ զքեզ ամենափրկի՛չ շնոր-
հիւ փրկառիթ չարչարանացդ եւ պատուական
արեանդ աղատեա՞ զիս զբազմամեղս 'ի մե-
ղաց եւ 'ի ձեռաց ամենաչար սատանայի . եւ
տուր ինձ հետեւիլ միշտ ամենասուրբ կամաց
քոց չարչարանօք եւ վշտօք . զի հաղորդ գը-
տայթ անձառելի փառաց քոց 'ի միւսանգամ
գալստեանդ :

Աստ է եւ սրբազան տեղին նախատա-
նաց , ուր նախատեցին զքրիստոս ծալու եւ

կատականօք . զի եղեալ 'ի գլուխ նորա լզ-
 պսակն փշեայ , եւ զեղեգն յաջոյ ձեռին նո-
 րա նստեցուցետլ 'ի վերայ քարին՝ որ է այժմ
 'ի մէ սրբոյ յարութեան . կատակեցին զնա-
 ասելով (Ոչ լե՛ր թագաւոր հրէից) եւ
 առեալ զեղեգն յաջոյ նորա անխնայ ծե-
 ծէին զսնեօրհեալ գլուխ նորա : Ծու-
 ծէին , զո՞ . զո՞րն փսուաց , զարսրին եր-
 կնի եւ երկրի . կատակէին , զո՞վ . զերկըր-
 պագեալն 'ի հրեշտակաց եւ 'ի մարդկանէ .
 ո՞վ ծովացեալ մեղաց իմոց . ո՞վ մեծի ա-
 նօրէնութեան իմոյ . մինչեւ ցայս վիճուկ
 բերեալ ձգեաց զսնեակարողն Ըստուած ,
 ո՞վ անհասանելի խորհրդոյս . ո՞վ անքըն-
 նելի տնօրէնութեանս . Ըստուած՝ փոխանակ
 մարդկան չարչարի . արարին՝ ընդ արարա-
 ծոց ծաղը կատականաց լինի 'ի մէջ մարդ-
 կան՝ զի զմարդկայինս բնութիւն աղատեսցէ
 'ի ծառայութենէ մեղաց . եւ 'ի կապանաց
 ամենաչար թշնամոյն :

Հապա պարտիս աստ զարժանավայել
 երկրպագութիւնս մստուցանել ահիւ եւ գո-
 ղութեամբ եւ ջերմեռանդն սիրով յիշելով
 զանհնարին վէրս փշեղէն պսակին Վարիս-

տոսի : Այն սրբազն տեղիս ունի զամբանափառաւոր : Հոյակապ եկեղեցի մի քանի ինչ գեղեցիկ սեղանօք , զարդարեալ ամենայն վայելչութեամբ՝ կանթեղօք ջահիւք եւ այլ ամենայն զարդուք :

Ելեալ աստի եւ փոքր ինչյառաջ գընացեալ տեսանես զապարանս պիղատոսի 'ի ձախակողմի՛ որ ձմերանոց է այժմ արքունական զօրաց . յառաջագոյն կից է եղեալ այս ընդ տեղոյ փշեայ պսակին ըստքանի աւետարանին . բայց յետոյ որոշեալ է , 'ի մէջ անկանելով ճանապարհն : 'Ի մէջսոյն ապարանի՝ է երրորդ բանտն «Ք. րիստոսի , զոք կանթեղավառ պահեն այլազգիք . ոմանք ասեն թէ եւ տեղին ձաղանաց է աստ : Ըստի եւս փոքր ինչյառաջ է լայն կամար մի 'ի վերայ ճանապարհին՝ որ է քարայատակ կապաթայն՝ յորոյ վերայ կացուցեալ պիղատոս զտէրն մեր՝ եցոյց 'ի խոնարհ անդ եղեալ հրէից ասելով . (Ահա այրու ցձեզ)

Ըստի փոքր ինչյառաջ է խաչաձեւ ճանապարհ մի՝ յորոյ հիւսիւսաին կողմն փոքրօ ինչ 'ի վեր՝ է ապարանն հերովդէի , ուր տարին զէյիսուս յապարանից պիղատո-

սի . զի անդ եւս կատակեալ՝ յետս դարձուցին . եւ է այժմ՝ ի ձեռս այլազգեաց :

Աստի սակաւ ինչ յառաջ գնացեալ գտանես ՚ի ձախակողմդ աւերսկ բաղանիս մի՝ որ է տեղի ինչ աղետալի . զի աստ եհաս աստ ուածամայրն իբրեւ զարծիւ առ որդին իւր միածին . աստ հանդիպեցան միմեանց արեգակն եւ լուսին . աստ անկան զպարանոցօքն միմեանց՝ մայր եւ որդի :

Ո՞Շ անհնարին աղետիցս . ո՞վ կարէ արդեօք պատմել զցաւալի կսկծանս՝ որք իղեն աստ . մայրն՝ սրտատոչոր, սրդին՝ վիրաւոր . մայրն՝ արտասուօք ճմլեալ, որդին՝ ցաւօք եւ արեւամբ լցեալ . ո՞չ այլ ոք, մին ։ Աստուածամայր, որ հրաշիւք ծնեալ . եւ միւսն՝ աստուածորդի, ՚իյերկնից իջեալ :

Երդ՝ վայ մեզ զի այս ամենայն աղետալի անցք վասն մեր անցին ընդ մայրն, եւ ընդ որդին . ապա եւ դույիշելով զայսոսիկ՝ զորպիսի՞ դառն արտասուս պարտիս բղևել՝ ո՞չ թէ միայն յաչաց, այլ եւ ՚ի սրտէդ . զի գոնէ նովաւ հաղորդ գացիս կրից նոցացակցաբար աստ, եւ ՚ի հանդերձելումն անձառելի փառացն . Ի՞ալանիքս այս յառաջա-

Դայն եկեղեցի ասեն լինիլ.

Ասա դառնայ ճանապարհն դէպ 'ի հարաւ, եւ ընդ դառնալն առաջի որմայ բաղանւոյս ընկողմնեալ կայ կարմրագոյն սիւն մի' որ է նշան իմն . զի աստ տկարացեալ Յիսուս՝ զօրացուցիչն ամենայնի 'ի ծանրութենէ կենսատու սուրբ խաչին՝ անկառ 'ի վերայ երեսաց իւլոց . ուստի կալեալ զպահակ կիւրենացի Աիմօնն՝ ետուն զսուրբ խաչն 'ի յուս նորա, զի մի' 'ի ճանապարհի մեռեալ Յիսուս՝ չկարացեն զչար կամրս իւրեանց կատարել, այսինքն՝ 'ի խաչ հանել:

Ո՞՛չ ամենազօրդ Յիսուս՝ որ վասն ապերախտ ծառայի քո 'ի յանձն առեր զայս ամենայն անտանելի կիրս, եւ այնչափ կրեցեր զչարչարանս՝ մինչ զի բնաւին անկարացեալ քայլափոխ առնել. անկար աստ 'ի վերայ սրօբեասարսափ երեսացդ, եւ ուշաթափեալ չկարեիր եւս 'ի վեր ելանել 'ի վերայ ոտիցդ.

Երդ՝ աղաչեմ բարերար, նոյն ամենայաղթ չարչարանացդ շնորհիւ յիշեա' եւ զիս զբաղմամեղս եւ կանգնեա' 'ի յաւիտենական

գլորմանէ , եւ արժանի արա՛քոյին սուրբ ար-
քայութեանդ :

Ղարձեալ փոքր ինչյառաջյարեւմուտս
ելանես 'ի վեր , ուր է խաչաձեւ ճանապարհ
մի եւս , որ յարեւմտից կողմն նորա է տեղին
վճռոյ . զի անդ է սիւն մի կանգնեալ , յորոյ
վերայ ասեն՝ դնէին զվճիռ մահապարտաց
գրեալ 'ի տախտակս . եւ անտի առեալ զին-
ուորքն զնոյն վճռագիրն տանէին 'ի գողգո-
թա ընդ մահապարտաց . զոր եւ առ Տէրն
մեր արարին իսկ :

Եստ էրյառաջագոյն աւագ դուռն սրբոյ
քաղաքիս . բայց այժմյետս տարեալ են զայն
դուռն՝ որ կոչի դամասկոսի դուռն . եւ Ե-
րաբացիք ասեն պապ իլ ամուտ . վասն որոյ
գերեզման Նեղինէ դշիոյին՝ կնոջն Երգա-
րու 'ի ներքուստ սոյն դրան է այժմ , եւ 'ի
ձեռս այլազգեաց . զոր կանթեղավառ պահեն՝
կարծելով զայն՝ մին 'ի սրբոց իւրոց :

Իսկ դու 'ի սոյն խաչաձեւ ճանապարհի
հարաւակողմն ընթանաս՝ ուր է մութ կոչե-
ցեալ կրպականոցն , եւ հակեալ անտի յարեւ-
մուտս՝ զաս 'ի բանտն Պետրոսի առաքելոյն
ուր եղաւ շղթայապիրկ՝ մատնեալ 'ի ձեռս

չորից չորրորդաց զինուորացն . եւ 'ի գիշերին յայնմիկ լոյս մեծ ծագեալ 'ի բանտին' հը-ըեշտակ տեառն իջեալ ելոյծ՝ ըզկապա-նըս նորա՝ եւ հանեալ անտի էած մինչեւ 'ի դուռն քաղաքին՝ որ ինքնին բացաւ նմա ուստի ուղղակի գնաց անտի 'ի տունն Ա ար-կոսի աւետարանչի՝ ուր աղօթէին ստէպ վա-սըն նորա :

Աստ է եւս արտաքին դուռն մի սրբոյ յարութեան , յոր մտեալ ելանես 'ի միւս դրանէ 'ի շուկայն , եւ անտի գաս ուղղակի 'ի սուրբ Յակոբ : Կան եւ այլ բազումու-տատեղիք 'ի մէջ սրբոյ քաղաքիս . որպէս տու-նըն փարիսեցւոյն՝ յորում եգիտ թողութիւն Ա ագդաղենացին , որ այժմէ 'ի ձեռս տաճ-կաց եւ այլ բազումք , թէ արտաքոյ եւ թէ ներքոյ քաղաքիս : Բայց ոմանք 'ի ձեռս այլազ-գեաց . եւ ոմանք եւս ամայի գոլով թողաք յիշել զնոսա . բաւական համարեալ միայն զայ-նոսիկ՝ որք առ այժմ 'ի ձեռս քրիստոնէից են . մանաւանդ թէ սոքա են աղբիւրք յոր-դառատք ջրոյն կենդանութեան . զի արբեալ-քըն 'ի սոյն կենդանի աղբերաց՝ չլինին եր-բէք եւս կարօտ այլոց :

ԳԼՈՒԽ Ե.

Յաղագո գնալը 'ի սուրբ ԲԵՐԵԿԵՄ ե-ծա-
նօթո-նի-ն սրբաղան պեղեաց՝ որ 'է ԱՀագայս
սրբայ Երո-սաղեդի, և ոմանց վանուց սրբու-
թուոյս :

Եկայք երթիցուք մինչև յԲեթեհեմ,
և տեսցուք զի՞նչ է բանս այս՝ որ եղե,
զոր տեր եցոց մեզ (Ղուկ. բ. 15):

Ե'կ սիրողդ քրիստոսի՝ ապայց զքեզ
'ի մի եւս վայր ամենացանկալի եւ գերամա-
քուր, որ մայր է ամենայն տնօրինական սրբ-
բազան տեղեաց, եւ սկզբնական պատճառ
փրկութեան մերոյ, որոյ եւ եթ սառւերին
յոգւոց հանեալ ամենայն բաղձանօքցանկայք
սրբազան մարգարէն Դաւիթ ասելով. (Ա
տայր ինձ ըմպել 'ի ջրհորոյն Ըեթեկէմի :)
Նախագիտելով թէ 'ի Ըեթեկէմէ բղիսելոց
է ջուրն կենդամի առ 'ի արբուցանել զամե-
նայն աշխարհ. ապա եւ դու ո՞րչափ եւս

առաւել պարտիս բաղձալ՝ ճշմարտութեան այնմ ջրոյ կենդանութեան՝ որ 'ի վախճան ժամանակին բղխեալ աստի լիացոյց զտիեզերս ամենայն՝ կոչելով զհամայն հաւատացեալս իւր յասելն. (եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իսկեւ արբցէ):

Հապա՛ տո՛ւր ինձ ձեռս, Ե՛լ յերուսաղէմէ, եւ ընթա՛ դեպ առ հարաւ իրրեւ ժամ մի. անդ տեսանես զհնաշէն հոյակապ սուրբ Եղիայի վանքն յունաց. որ ունի եկեղեցի մի քանի ինչ սեղանով. տեսեալ զայն՝ ա՛նց եւ գնա՛ ժամ մի եւս, իսկոյն հասանես 'ի սուրբ քաղաքն Դաւթի՛ որ ինքըն է Շամբէհէմ. մտեալ 'ի նա, եւ գընացեալ փոքր ինչ 'ի մէջ քաղաքին՝ դառնաս յարեւելս, յայն ժամ ընդառաջ ելանէ քեզ բաղձալին քո՝ զարմանասքանչ սուրբ տաճարըն ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Վըրիստոսի. մո՛ւտ նախ ընդ արտաքին երկաթեայ փոքրիկ դուռն երկնաշաւիլ, ուր տեսանես փոքր հրապարակ մի՝ մեր. անդ է եւ երկրորդ դուռն մի տախտակեայ՝ յորոյ վերայ է գրեալ հայերեն գիրն, զոր յիշատակեցաք յառաջագոյն:

Ա տեալ ընդ այս գուռն՝ տեսանես զմեծ
 հրապարակն բարձրայարկ՝ որ կառուցեալ է
 'ի վերայ յիսսուն զարմանալի միաձոյլ կճեայ
 սրբատաշ սեանց՝ որք զմիտս տեսողաց իսկոյն
 յապուշ կրթեալ 'ի հիացումն վարանեն .
 շրջելով 'ի մեջ սոյն հրաշալի սեանց՝ հասա-
 նես յամենագեղեցիկ տաճարն , որ ունի ե-
 րիս դրունս 'ի միջոյ սեանց . մին՝ 'ի հիւսի-
 սային կողմն , որ է մեր . եւ երկուքն՝ 'ի հա-
 րաւակողմն , որք են յունաց . մտեալ 'ի մեր
 դրանէ՝ տեսանես զբարեվայելուչ հոյակապ
 վիճակն մեր , որ է յոյժ բարձր զարմանալի
 սեամբք կառուցեալ մեծամեծ լուսամոք , եւ
 ունի զերկու փառաւոր եւ գեղեցիկ սեղանս
 ամենայն վայելչութեամբ զարդարեալ . որոց
 մին՝ է մկրտութեան անուամբ , որ առաջի
 նորա պաշտեն մերայինք՝ միշտ զերեկոյեան
 եւ զառաւօտեան ժամերգութիւնս . եւ միան՝
 որ կէպ առ դրան սուրբ այրին է՝ թըլ-
 փատութեան անուամբ . ուր զգեստաւո-
 րին միշտ պատարագամատոյցք , եւ այլքն .
 յայս սեղան միանգամ 'ի տարւոջ Ասորիք
 եւ 'կ պտիք պատարագեն շնորհիւ սրբոյ ա-
 թոռոյս

՚ Ւ մէջ ։ սոյն առաջարիս ունին դուռն մի
 լատինք՝ յորմէ երթեւեկեն ՚ի սուրբ այրն :
 ՚ Ա ձախակողմն մեր եկեղեցւոյ կիսական-
 գուն բարձր է վիճակն յունաց կանթեղօք
 եւ ջահիք զարդարեալ . յետուստ կողմանէ
 նորին ունին եւալ սեղանս , եւ մեծ հրա-
 պարակս . անդ կայ դուռն մի եւս սուրբ
 այրին՝ յորմէ իջանեն յոյնք երկոտասան աս-
 տիճանաւ մատուցանել զսուրբ պատարագն՝ ՚ի
 յայրն . բայց մեր եւ լատինաց դուռն ՚ի
 սուրբ այրն իջանելոյ՝ է՝ ՚ի մէջ մեր եկեղեց-
 ւոյ . յորոյ ճակատն կայ երկու փոքր պատ-
 կեր ծննդեան մէն մի կանթեղաւ . մին՝ մեր .
 եւ մին՝ յունաց . իջեալ աստի ՚ի վայր երկո-
 տասան աստիճանաւ՝ գտանես զցանկալին
 ամենեցուն , զբնակարանն հրեշտակաց , եւ
 զառիթն փրկութեան ամենայն տիեզերաց ,
 զվայրն սուրբ ծննդեան տեառն մերոյ Յի-
 սուսի Վրիսագուի . զայրիկն այն օրհնեալ ,
 ուր ծնաւ փրկիչն մեր Վրիստոս , ուրյայտ-
 նեցաւ կեանքն մեր Յիսուս , ուր երեւեցաւ
 ՚ի մէջ աշխարհի Եստուածն ամենայնի՝ միա-
 ծինն հօր , անդրանիկ որդին Ա արիամու-
 կուսին :

Ուրեմն՝ պարտիս՝ աստ զուարձախառն եր-
կիւղիւ, սուրբ սրտիւ, մաքուր հաւատով
՚ի ծունր իջեալ ջերմեռանդն արտասութ մատ-
չել յերկրպակութիւն սոյն սրբազնասուրը
տեղւոյս ասելով. ո՞վ մանկացեալդի վասն իմ
Ծիսուս Քրիստոս. որդի Ըստուծոյ եւ որ-
դի կուսի՝ որ վասն փրկութեան մե-
րոյ յանձն առեր մարմեանալ ՚ի սուրբ կու-
սէն, եւ ծնանիլ աստ անձառապէս.

Երդ՝ երես անկեալ աղաչեմ եւ աղեր-
ւեմքաղցր անուն Ծիսուս ամենամաքուր ծը-
նընդեանդ եւ յայտնութեանդ շնորհիւ, եւ
մօրդ անարատ կուսի բարեխօսութեամբն
մանկացո՛ զիս զծերացեալս եւ զհնացեալս
մեղօք, եւ սրբեալ յամենայն աղոյ մե-
շաց, արժանացո՛ արդար հոգւով եւ մա-
քուր վարուք ժամանել յերկնից արքայու-
թիւնդ եւ ժառանգել զանձառ բարիսդ՝ զոր
պատրաստեալ ես ՚ի սկզբանէ աշխարհի սըր-
բոց քոց յաւիտեանս :

Առարբ տեղիս ծննդեան է կիսագնտակ
ամենախառաւոր սեղան մի ամենայն շքեղու-
թեամբ զարդարեալ. զպատկեր սեղանոյն
որ է ծննդեան, մինչ մեք պատարագեմք

զմերն դնեմք . Եւ մինչյոյնք պատարագեն զիւրեանցան դնեն . Նմանապէս եւ զաշտանակսն , եւ զծածկոցան :

Խ ճակատ սոյն սեղանոյս են երկու պատկեր . մին մեր , եւ մին յունաց . իսկ ներքոյ սեղանոյն է բաց , եւ կճեայ քարիւ արուեստագործեալ , եւ է 'ի միջի փոքր փոսիմն , որ է իսկ տեղի ծննդեան Տեառն մեռոյ , 'ի ներքոյ սորա է գերեզման նախամօրն Եւայի . որ երկրորդն Եւայ՝ լուծիչն երկանց . ամենօրհնեալ Տիրամայրն ծնանելով աստ զորդին միածին բանն Աստուած՝ ելոյծ զերկունս մահունորին , եւ ազատեայ 'ի կապանաց իւրոց 'ի կեանսն յափիտենից :

Են աստ շուրջանակի վեշտասան մշտավառ կանթեղք . վեցն մեր . վեցն յունաց . եւ չորսն լատինաց . Լատինք պատարագելոյ մասն չունին 'ի տեղւոց ծննդեան . 'ի մէջ սուրբ այրիս յանդիման սրբոյ տեղւոյն ծընդնդեան՝ է ամենասքանչ մասուրն օրհնեալ . ուր իջանես երեք աստիճանաւ , որ շինեալ է իմրեւ օրօրոց՝ կճեայ սրբատաշ սպիտակ քառամբ . հինգ կանթեղ ունի մշտավառ , եւ

այլ եւս կաթեղք եւ զարդք վայելուչք . եւ
է լատինաց :

Աստ եւս պարտիս ջերմեռանդն սիրովեւ
յորդահոս արտասուօք զարժանավայելերկը-
պագութիւնս մատուցանել՝ յիշելով զանչափ
խոնարհութիւնս մարմնացելոյն աստուծոյ ,
որ մինչեւ 'ի խանձարուրս պատիլ եւ 'ի մսուր
դնիլ յանձն է առ վասն փրկութեան մերոյ :

Ի յտջակողմն սորա է զարդարեալ փոքր
սեղան մի եւս լատինաց . 'ի մէջ սուրբ այրիս
են երեսուն եւ երեք մշտավառ կանթեղք .
մետասանն մեր . մետասանն յունաց . եւ մե-
տասանն լատինաց . յաջակողմեան պատկերքն՝
մեր են . եւ ծածկոցքն՝ լատինաց . եւ ծախա-
կողմեանն՝ միայն յունաց . սուրբ այրս ծը-
նընդեան վիմափոր է բոլորովին՝ որոյ վերայ
է տեղին յունաց՝ զորմէ յառաջագոյն եւս
ասացաք :

Ի մէջ սուրբ այրիս է գաղտնի դուռն մի
լատինաց , յորմէ երբեմն երթեւեկեն լա-
տինք 'ի վանս իւրեանց , որոյ ճանապահն է
վիմափոր եւ մութ . զի 'ի ներքոյ գետնի է .
ուր են գերեզմանք անմեղ սուրբ մանկանց
կոտորելոց 'ի Յեթէհէմ 'ի ժամանակի ծը-

Նընդեան Տեառն մերոյ . եւ են անդ ուրեք
ուրեք սեղանք :

Եպա ելեալ կրկին 'ի դրանէ մեր եկե-
շեցւոյ , երթաս դէպ ընդ առաջին միջա-
դուռն : Ի մէջ սեանց 'ի հարաւակողմն է
դուռն վանուց յունաց . եւ 'ի հիւսիսակողմն՝
լատինաց՝ յորոց մտեալ իւրաքանչիւրքն գնան
'ի վանս իւրեանց . ունին այլ եւս մէն մի յա-
տուկ արտաքին դուռն 'ի վանս իւրեանց՝ յո-
րոց երթեւեկեն 'ի քաղաքն . կամարք սրբոյ
տաճարիս ծննդեան՝ թէ 'ի ներքուստ՝ եւ թէ
'ի վերայ սեանց՝ են 'ի կարծրագոյն փայտից
բոլորովին :

Ելեալ 'ի նոյն առաջին տախտակեայ դը-
րանէ 'ի հարաւային կողմն գտանես զդուռն
մեր վանուց . յոր մտեալ տեսանես 'ի մէջ
քակին զուարձալի պարտեզ մի վանուց շըջա-
պատեալ . եւ կից ընդ պարտիզի է մեծ
դուռն մի երկրերան՝ յոր մտեալ գտանես հը-
նաշէն տեղի մի լայն եւ արձակ 'ի վերայ
քանի ինչ սեանց կառուցեալ . եւ է անդ
սեղան մի հին . զի յառաջագոյն եկեղեցի է
եղեալ սոյն տեղիս . վասն որոյ կոչի այժմ
անուն նորա Վրրորդութիւն :

Ի ծննդեան ճբագալուցի երեկոյի՝ համայն
 ուխտաւորք եւ եկեղեցականք հանդերձ սըր-
 մազան պատրիարքաւ՝ որք դան՝ ի սուրբ ա-
 թոռէն՝ ի կատարել զմրաշափառ տօնա-
 խըմբութիւնս ծննդեանտեառն մերոյ Ծիսու-
 սի Վրիստոսի. ՚ի լրանալ սուրբ պատարա-
 գին, առեալ զժամարարն մեծաւ հանդիսիւ եւ
 քաղցր ծննդեան շարականաւեւ դոյդ բուրվա-
 ռաւ ՚ի մէջ սեանց բերեն այսր. եւ աստ կա-
 տարեալ զխօրհուրդ սեղան օրհնութեան.
 Ճաշակեն զբարութիւնսն աստուծոյ ՚ի միա-
 սին մեծաւ ուրախութեամբ, թէ միաբանք
 եւ թէ տէրունական ուխտաւորք՝ արք եւ կա-
 նայք. Նմանապէս եւ առաւօտեան զկնի ամե-
 նափառաւոր հանդիսի եւ անմահ պատարագի,
 զսրբազան պատրիարքն շքեղ զգեստիւք՝
 հանդերձ ամենայն ուխտիւք վեր հանեն ՚ի տա-
 նիս մեր վանուց. եւ անդ օրհնեալ զսեղանն
 ճաշակեն զբարութիւնսն որպէս յերեկոյեան,
 եւ կոհանան զաստուծոյ. զայնմ երեկոյի եւ
 առաւօտու ուրախութիւնսն վայելօղքն քաջ
 եւ կարեն պատմել բարեսէր ընթերցողացդ.

Ըստի ելանես քսան եւ հինգ աստիճա-
 նաւ ՚ի վեր ՚ի վանս մեր, եւ աեսանես զգես-

Ղեցիկ սենեակս վանուց . գնա' սակաւ ինչ
եւս շըջելով՝ դտանես զվերին փառաւոր ե-
կեղեցին մեր՝ որ է յանուն սուրբ Աստուա-
ծածնի . եւ ունի երիս սեղանս վայելուչս
ամենայն շքեղութեամբ զարդարեալ . յաջա-
կոլմեանն՝ սուրբ Ստեփաննոս . աւագ սե-
ղանն՝ սուրբ աստուածածին . եւ ձախակող-
մեանն՝ սուրբ Յակոբ :

'Ի յաջակողմն դասին է փոքր տեղի մի
երբ աւանդատուն : Երտաքոյ սոյն դասին է
եւ աւազան մի նորաշէն եւ գեղեցկատեսիլ
տէրունական պատկերաւ փորակերտեալ սըր-
բատաշ կճեայ քարամք շինեալ . մատուցեալ
աստ զվայելուչ երկրպագութիւնս՝ ելանես 'ի
դուրս խաղաղութեամբ . յարեւելից կողմն
սրբոյ ծննդեան վանուց՝ ոչ ինչ հեռի՝ է
վիմափոր մատուռ մի քանի ինչ պատկերօք
եւ կանթեղօք . վասն սորա ասեն լատինք
թէ՝ է տեղին քառասնօրէի . բայց ամենե-
փին անյարմար իմն է . զի 'ի սուրբ այրին
ծննդեան կատարեաց զօրէնս քառասնօրէի
մաքուր սրբութեամբ աստուածամայրն . թուի
թէ 'ի փախչիլնյեգիպտոս յերեսաց Ներով-
դէի՝ յայսմ այրիս թագուցեալ իցեն քանի

Բնչ օր հայր Յովսեփի եւ սռւրբ Արյան հանդերձ մանկամբն Հյիսուսիւ վասն ահին և բովդէի . տեղիս այս այժմ 'ի ձեռս լատինաց է :

Եստի իբրեւ կէս ժամ'ի վայր դէպյարեւելս՝ է սռւրբ տեղին հովուաց . ուր 'ի գիշերի ծննդեան Տեառն մերոյ իջին անթիւ բազմութիւնք երկնային զօրաց . եւ օրհնութեամբ աւետեցին զծնունդն Վրիստոսի գիշերապահ արթուն հովուացն . ասելով թէ (Եհաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ՝ որ եղեցի ամենայն ժողովրդեան . զի ծնաւ ձեզ փրկիչ այսօր՝ որ է օծեալ տէր 'ի քաղաքի Դաւթի . եւ այս նշանակ ձեզ՝ գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս եւ եղեալ 'ի մառւր :

Եստ ասացին զփառք 'ի բարձունսն, վերին զուարթունքն՝ զոր օր ըստ օրէ երգէ հանրական եկեղեցի հաւատացելոց . եթէ եւ դու կամիս ո՞վ հաւատացեալդ քրիստոսի . զի ծագեսցին 'ի վերայ քո փառքն աստուծոյ աստ, եւ 'ի հանդերձելումն . նմանեա'ց հովուացն այնոցիկ հոգեւոր արթնութեամբ . հսկեա' զգիշերն աղօթիք առ Եստուած :

եւ պահեա՝ զՀոգիս քո մաքրութեամբ եւ
սրբութեամբ :

Տեղիս այս է եւս՝ վիմափոր՝ հնաշէն ե-
կեղեցի մի յունաց : ԽԱԵԹԼԵՀԵմէ մինչ 'ի
յովհաննու ծնունդն է երկու ժամ . դէպ առ
արեւմուտս . Նմանապէս եւ յերուսաղէմէ եւս
է երկու ժամ . է անդ 'ի մէջ գիւղին զեղեց-
կաշէն եւ փառաւոր վանքն ծննդեան սրբոյն
Յօհաննու կարապետին եւ մկրտչին Քրիստոսի
որ է լատինաց , եւ զարդարեալ է ամենայն
շքեղութեամբ . ունի քանի ինչ փառաւոր
սեղանս . եւ սուրբ տեղին ծննդեան՝ է յա-
տուկ վայր մի , յոր իջանեն աստիճանաւ ,
ունի կիսագնատակ վայելուչ սեղան մի . 'ի
ներքոյ սեղանոյն է փոս իմն՝ իբր ծննդեան
տեղը քրիստոսի . որ է տեղի իսկ ծնըն-
դեան սրբոյն կարապետի . ունի կանթեղս
մշտավառս , եւ է կճեայ քարամբք արուես-
տագործեալ . կայ անդ եւս քաղցրաձայն եր-
գեհօն . յարեւելից կողմն սորին փոքր ինչ
հեռի է տեղի մի աւերակ . մեծ եւ երեւելի՝
որ ասի տուն Եղիսաբեթի . ուր եկն սուրբ
Կոյսն յետ յղանալցյն զարարիչն երկնի եւ
երկրի աւետեօքն Կաբրիէլի յողջունել զլյ-

շեղիսաբէթ զազգական իւր . որ եւ նայդաց եալ էր զտատրտկն անապատի՝ զմկրտիչն Յօհաննէս : Անդ էր՝ որ ցնծաց մանուկն Յօհաննէս խայտալով յորովայնի մօր իւրոյ , եւ երկիր եպագ տեառն իւրոյ յորովայնէ յորովայն . տեղիս այս մեր է , բայց այժմ է աւերակ , եւ չկայ 'ի մէջ նորա բնտկիչ :

Աստի վայր իջեալ դէպ առ հարաւ իրր ժամ մի երթան յանապատն Յօհաննու՝ ուր ճգնեաց մկրտիչն Յօհաննես զերեսուն ամս , մարախ եւ մեղք ուտելով միայն :

Ի մէջ վեցերբորդ շաբաթու մեծի պահոց , մինչեւ երեք օր գան ուխտաւորք մեր այսր յերկրպագութիւն սուրբ տեղեացս հանդերձ կառաւարիչ վարդապետօք եւ զօրականօք , ըստ վաղեմի սովորութեան սըսոյ աթուոյս :

Աստի մինչ 'ի լիէմէ իրբեւ եօթն ժամէ առ արեւմուտս՝ ուր ունիմք փառաւոր վանք մի՝ որպէս եւմիւս ազգ . զի 'ի ծովէ եկեալ ուխտաւորքն հանգստանան անդ գիշեր մի , եւ անտի գան յԵրուսաղեմ . 'ի մէջ վանուցըս է վայելուչ եկեղեցի մի երեք սեղանաւ , սուրբ Գէորգ անուտմբ , ուր նստի

Վարդապետ մի, հոգալ զհոգան երթեւեկաց :

Եստի երեք ժամ է Յոպպէ՝ որ անդ եւս ունիմք հռչակաւոր վանք մի, եւ 'ի միջի գեղեցիկ եւ հրաշագործ եկեղեցի մի՝ երեք սեղանաւ, սուրբ Արքողայոս անուամբ այսր ելանեն նախ եւյառաջ ծովային ուխտաւորք, եւ հանգստացեալ աստ քանի ինչ օր՝ գան 'ի Ուէմլէ, եւ անտի յլըրուսաղէմ որպէս եւ միւս ազգաց : Անան աստ միշտ երկու վարդապետք . մին՝ Ուէյիզ անուամբ, եւ միւն՝ ժամարար . զիյաւուր կիւրակէի սուրբ պատարագ մատչի միշտ :

Ի Յոպպէէ մինչ 'ի պէրութ ութ աւուր ճանապարհ է 'ի յամաքէ . անդ եւս ունիմք վանք մի, հանդերձ միով փառաւոր եկեղեցեաւ . ուր սուրբ պատարագ մատչի յաւուր կիւրակէի . անդ եւս մնայ վարդապետ մի յօթեւանել զեկեալս :

Ի Պերութէ մինչ 'ի Աաղարէթ է չորս օր դէպի առ արեւելս . է անդ գեղեցիկ վանք մի լատինաց՝ որ ունի եկեղեցի մի փառաւոր եւ հռչակաւոր . քանի ինչ սեղանաւ ամենայն շքեղութեամբ զարդարեալ . անդ է

տեղին այն սուրբ՝ ուր ետ ողջոյն հրեշտակապետն Գրաբրիէլ. վասն որոյ ասի սկիզբն սրբազն տեղեաց . տեղին ողջունի է իբրեւ տեղին ծննդեան սրբոյն Յօհաննու մկրտչի՝ յոր իջանեն աստիճանաւ : Յամաքային ուխտաւորք ուղղակի գան յայս սուրբ տեղիսյերկըռպագութիւն . զի 'ի վերայ ձանապարհի նոցա է . բայց ծովային ուխտաւորք՝ եթէ դէպ լիցի , գնան . թէ ո'չ չէ՛ պարտ անպատճառ գնալ :

Յոյնք եւս ունին աստ եկեղեցի մի 'ի վերայ այն աղբեր , ուր ասի՞թէ երեւեալ հրեշտակապետն կրկին ողջունեալ է զկոյսըն սուրբ յետ երեւելոյ 'ի սենեկի իւրում . մեք եւս ունիմք աստ տեղի վանուց , բայց այժմ աւերակ է , զի չկայ անդ բնակիչ 'ի մէնջ :

Ի 'Աղարեթէ մինչ 'ի կանա գալիլեա է երկու ժամ՝ ուր կայ եկեղեցի մի յունաց . անդ են եւս թակոյկն կճեայք՝ յորս գոյափոխեաց Վրիստոս զջուրն 'ի գինի , որք կան մինչեւ ցայսօր :

Եստի երկու ժամ է եւ միւս Գալիլեա , որ ասի հեթանոսաց գալիլեա , ուր բազ-

մացոյց Տէրն մեր զհացն , յօրինակ անապական մարմնոյ իւրոյ :

Երեք ժամ է 'ի Կաղարեթէ լեռոն թափօր , ուր այլակերպեցաւ Վրիստոս անձառելի փառօք Աստուածութեանն եւյայտնեաց զխորհուրդ ամենասուրբ երրորդութեան . բայց այժմ չկայ անդ երբեք շինութիւն ինչ :

Չորս ժամ է 'ի թափօրական լեռնէ մինչ 'ի ծովն Տիբերիա՝ ուր բազում երթեւեկութիւնս եւ հոգեկեցոյց քարոզութիւնս եւ պանչելագործութիւնս առնէր Տէրն մեր , որպէս պատմեն սրբազան աւետարանիչքն . զթերահաւատութիւնն առաքելոց անդ 'ի նաւին յանդիմանեաց եւ հաստատեաց զնոսա 'ի հաւատս . անդ ազատեաց զՊետրոս 'ի մըրըրկածուփալեաց ընկղմանէ , եւ հրամայեաց նմա գնալ 'ի վերայ ջուրց ծովուն յօրինակ անվտանգ անցանելոյ 'ի ծովէ կենցաղոյս յերկնային նաւահանդիսան :

Օկնի յարութեանն Վրիստոսի անդը Դիմեցին սրբազան առաքեալքն յորսալ զձուկըն յօրինակ որսալոյ զմարդիկ 'ի կեանս , եւ անդ երեւեալ նոցա Ծիսուս հրաշագոր-

ծեաց՝ ի յորս՝ բազմութեան ձկանցն, եւ ՚ի
տես նորաստեղծ ձկանն ՚ի վերայ կրակետղ
կայծականցն, եւ հաց սուրբ ընդ նմա, ո-
րով յագեալ լիացան ամենեքեան մեծաւ խըն-
դութեամբ եւ ջեռմեռանդն գոհութեամբ:

՚Ի տիբերական ծովէ մինչ ՚ի դամասկոս
է չորս օր, ուր եւս ունիմք վանք մի փա-
ռաւոր եւ հոչակաւոր. զի ՚ի ցամաքէ եկեալ
ուխտաւորքն ուզշակի անդր գան. Եւ անդ
նստեալ քանի ինչ օր՝ գան ՚ի սուրբ երուսա-
ղէմ. է անդ եւս փառաւոր եկեղեցի մի ե-
րեք սեղանաւ՝ յանուն սրբոյն Արդմի զօ-
րաւարին. կայ անդ սքանչելագործ պայծառ
պատկեր մի սրբոյն Արդսի. անդ եւս մը-
նան միշտ երկու կարգաւորք, մին՝ առաջ-
նորդ, եւ միւսն՝ ժամարար:

՚Ի դամասկոսէ մինչ յԵղիպտոս է տասն
օր գէպ առ արեւելս, ուր եւս ունիմք վանք
մի փառաւոր, եւ ՚ի միջի վայելուչ, հոյա-
կապ եկեղեցի մի. երեք վարդապետ մնան
միշտ անդ. մին՝ առաջնորդ, եւ երկուքն
ժամարար:

ՅԵղիպտոսէ մինչ յԵղեքսանդրիա է չորս
օր, անդ եւս ունիմք վանք մի փառաւոր

Հանդերձ եկեղեցեաւ կայ անդ եւս վարդապետ մի . Աղեքսանդրիոյ մինչ'ի յորդանան՝ ուր մկրտեցաւ Քոհոտոս , թէ ծովուեւ թէ ցամաքաւ է տասն օր . 'ի շրջանակս սոյն սուրբ Զրոյն յառաջագոյն ունէաք փառաւոր վանքս , բայց այժմ աւերակ է եւ անբնակ վասն որոյ չունի սովորութիւն սուրբ աթոռն առաքել անդր զտէրունական ուխտաւորսն մեր . յոյնք՝ թէպէտըստ վաղեմնի սովորութեան իւրեանց ամ յամէ տանին զուխտաւորս իւրեանց անդր անխոչեմութեամբ բայց չվերադառնան երբէք առանց վնասու . թող զվտանգն եւ զնախատինս երթեւեկութեան . թէպէտ մէք ո՛չ երթամք վասն վտանգի , սակայն մտօք եւ հոգւով մատսւցանեմք միշտ զերկրպագութիւնս նմա տեսականաբար :

Քանզի գետս այսյորդանան եղեւ մայր ամենայն գետոց՝ որք ենյերկրի . գետս այս սրբեալ 'ի տեառնէ՝ եղեւ սրբիչ մեղաց ամենայն մարդկան . գետս այս սուրբ՝ եղեւ ընդունակ ամենասուրբ երրորդութեանն . մկրտութեամբ որդւոյ , հովանաւորութեամբ եւ վկայութեամբ հօր , եւ աղաւնակերպիջ-

մամկ հոգւոյն սրբոյ . վերջապէս գետս այս
եղեւ մեզ սկզբնական ծնօղ հոգեւոր , զի
՚ի տեառնէ ուսաք լինիլ անհնարին մտանել
յարքայութիւն չծնելոյն ՚ի սմանէ . ըստ բա-
նին թէ (Որ ոք ո՛չ ծնցի ՚ի ջըոյ եւ ՚ի
հոգւոյ , ո՛չ կարէ մտանել յարքայութիւնն
աստուծոյ) :

Ուստի ջուրս այս է օրհնեալ եւ սրբեալ
զի եղեւ մեզ պատճառ փրկութեան ՚ի սկզբ-
նական մեղաց . աստ ջաղջախեաց Վրիտոս
դգլուխ աներեւոյթ վիշապին . աստ խորտա-
կեաց զըռնութիւն սատանայի . աստ ելոյժ
զկնիք դատապարտութեանյանցանաց մերոց .
աստ արձակեաց զմեզ յառաջին կապանաց
մեղաց , եւ գրեաց զամենեսեանս յորդէգրու-
թիւն հօրն իւրոյ երկնաւորի . եւ աւտյայտ-
նեաց յառաջադոյն զանհասանելի խոր-
հուրդ ամենասուրբ երրորդութեանն՝ յոր
մկրտիմք եւ դաւանիմք միշտ եւյաւիտեանս :

Ա եց ժամէ ՚իյորդանան գետոյ մինչեւ
յերիքովն այն դժոխակերպ՝ յերկիրն Սոդո-
մայ եւ Գոմորայ . որ այժմ ասի Ա եռեալ
ծով . ուր հուր յերկնից իջեալ ծ ծմբախառն
բնաջինջ արար զչնգեսին քաղաքսն զայնոսիկ

Հանդերձ ամենավատթար բնակչօքն իւրովք .
որք Աստուածընդդէմ գարշելի վարուք
իւրեանց շարժեցին զարդարացասումն բար-
կութիւնն Աստուծոյ 'ի վերայ ինքեանց . Եւ
հրամաշ կորեան զյաւիտենականն կորուստ :

Եհա քեզ կենդանի եւ վայելուչ օրինակ
քրիստոնէական կենցաղավարութեան . զի
որք ծննդեամբ սուրբ աւազանին ունին դի-
մել 'ի վերինն սուրբ Երուսաղէմյանձառելի
փառսն արքայութեան , որպէս 'ի յորդանա-
նէ յղգալին երուսաղէմ' ընդ առաջ ելանեն
նոցա յընթացս կենցաղոյս երիքովանման
անդնդախոր վիհ կորստեան՝ զանազան ա-
ռիթք մեղաց . բայց քաջ արանց եւ ընտրելոց է
միայն զայն ամենայն անցս հոգեկորուստս
ընդ ոտիւք կոխեալ անվտանգ իմն ժամանել
'ի նաւահանգիստն խաղաղութեան :

Ենդ է եւ կինն Պ ովտայյաղ արձան փոխ-
եալ արդ առցեն օրինակ եւ զայս բարեպաշտք
զի մի' յետս ընդ կրունկն դարձեալ 'ի սուրբ
պատուիրանէն շնորհական նոր օրինացս հո-
յիլ 'ի սուտ հեշտութիւն ցանկութեան
կենցաղոյս իբրեւ զկինն զայն աշխարհասէր
սառեալ յաստուածային սիրոյ անպիտանաս-

ցին . եւ իրը զխոտան ինչ՝ ի բաց ընկեսցին
յայնմ սուրբ ամանոյ արքայութեան :

Ծերիքովէ մինչ՝ ի ձորամէջն այն չորս
ժամէ՝ ուր քաջն Սամփսօն կղակաւն իշոյ
կոտոր եալ զհաղար այլազգիսն , եւ ապա ջուր
բղնեցոյց Աստուածային զօրութեամբ ՚ի կը-
զակէն յայնմանէ յօրինակ ամենազօր յաղթու-
թեան Տեառն մէրոյ խաչին խորհրդով ան-
մարմինն բելիարայ , եւ բղնման ՚ի սուրբ կո-
շէ նորա աղբերն շնորհաց յարբումն ամե-
նայն բարետենչ հաւատացելոց իւրոց : Եւ
աստի մինչ յԵրուսաղէմէ երկու ժամ :

Թափէտ են եւ այլ բազում՝ ուխտատե-
ղիք ՚ի տեղիս տեղիս ՚ի շրջանակս սրբոյ քա-
ղաքիս Երուսաղէմի . բայց այժմ գոլով ա-
մայի եւ անբն ակ՝ զանց արարաք զնոքօք , ՚ի
ձեռին ունեցելով քս բաւականանալով միայն՝
որք են առատահոս աղբիւրք շնորհաց եւ ո-
ռոգիչք ամենայն տիեզերաց :

Արդ՝ մնայ մեզ այսուհետեւ գուն գոր-
ծել միշտ ունիլ միայն գործս երուսաղէմա-
վայելս . ըստ սրբութեան տեղւոյս եւ վարս
սուր քս եւ մաքուրս ստանալ . փայլել ՚ի մէջ
աշխարհի իբրեւ զարեգակն պայծառ՝ հաւա-

տով եւ աստուածահաճոյ առաքինական բարեմաւնութեամբ, զի՞ նոքօք կարասցուք արժանապէս վայելել զշնորհս սոյն ըընաշխարհիկ ամենափափաքելի սրբազնասուրբ տեղեաց տեառն մերոյ Ծիսուսի Քրիստոսի մարմնացեալ բանին աստուծոյ. եւ արժանի լիցուք վերինն Երուսաղէմի, եւ անձառելի փառաց որդւոյն միածնի տնօրինեցելոյն 'ի սոյն սուրբ քաղաքիս Երուսաղէմի՝ ընդ սրբոց հրեշտակացն յարազուարձ ուրախութեամբ միշտ եւ յաւիտեանս ժամանակաց Ամէն :

(831)

ԳԼՈՒԽ Զ.

ՆՕՐԱՆՅԱՆ-ՂԻ-ՆՔ շՏԵՂԱՔԱՅԼ ՀԱՆԴԻՒԻՉ Ե-
ՂԱՔԻՐԻՉ ՄՐԲՈՅ ՄԱՆՈՒՅՍ . Ն այլ ՄՐԲԱՊԱՆ
ՄԵՂԱՅ ԲԱԿ 'Ի ԱՌ-ՄՐ ՅԱՐՈ-ՂԵՆԵ .

Քեզ վայերէ օրհնութիւն Աստուած
ի սիօն , եւքեզ տացին աղօթք
յերուսաղէմ : (Աաղ . կդ . 1)

“Աախ” յաւուր կաղանգի , որ է սկիզբն
տարւոյ , հանդէս մեծ կատարի ’ի սուրբ
Յակոբ . տէրունական շարականաւ , զոյգ
բուրվառաւ , եւ ’ի պատարագին՝ զոյգ
կոչնակաւ , պատարագամատոյցն եպիսկոպոս
լինի , եւ սպասն դնի ’ի սուրբ գլխադիրն .
յամենայն հանդիսաւոր աւուրս՝ թէ սուրբ
պատարագն յաւագ սեղանն լինի , սպասն
դնի ’ի սուրբ գլխադիրն . եւ թէ պատա-
րագն մատչի ’ի սուրբ գլխադիրն . սպասն
դնի յաւագ սեղանն :

Ի ճրագալուցի երեկոյին զոյդ կոչնակ հարկանի . եւ նախատօնակ լինի : Ի խթման երեկոյի ոմանք երթան 'ի սուրբ Ծննդեան . եւ անդ կատարեն զփառաւոր հանդէս սրբոյ ծննդեան . եւ ոմանք մնացեալ 'ի սուրբ Յակոբ՝ նմանապէս առնեն զմեծ հանդէս զոյդ կոչնակաւ . եւ զկնի պատարագին տանին ըզպատարագին զգեստիւք եւ ծննդեան շարականս երգելով 'ի սեղանատունն , եւ օրհնեն զսեղանն :

Ի գիշերի ծննդեան զկնի հանդիսաւոր պատարագին . եթէ սրբազն պատրիարգն 'ի սուրբ Յակոբ մնացեալ իցէ՝ հանդիսաւ տանին 'ի վեհարանն . 'ի հետեւեալ օրն՝ որ յունվարի Եօթն՝ հանդիսաւոր պատարագ մատչի յաւագ սեղանն . 'ի թափորի մանկունք եղանակեն քաղցր ձայնիւ ասելով . (Վրիստոս ծնաւ եւյայտնեցաւ) :

Յաւուր ութօրէի զկնի առաւօտեան սեղանոյն՝ գնացեալ ամենայն եկեղեցականք 'ի սրբազն պատրիարգն , եւ օրհնեն զպատրիսարգարանն հոգեւոր զուարձութեամբ ըստ նախկին սովորութեան :

Իսուրբ Աարդսի ուրբաթ երեկոյի եւ
 շաբաթ առաւօտու, եւ յաւուր տօնախմբու-
 թեան սրբսյն Վ ինասայ առնեն զփառառ որ
 նախատօնակս, եւ զսուրբ պատարագն ՚ի
 ներքս ՚իսուրբ Վ ինաս եկեղեցին մատու-
 ցանեն: Ի Տեառն ընդ առաջի երեկոյին հար-
 կանի զոյդ կոչնակ, եւ զգեստաւորեալ ա-
 մենեքեան ելանեն ՚իսուրբ էջմիածնի դրա-
 նէ արտաքս ՚ի մեծ բակն փառաւոր հանդի-
 սիւ. պատրաստ ունելով յառաջագոյն զջորս ա-
 ւետարանաբարձս, եւ զմի խաչակիրս՝ զգես-
 տաւորեալ եւ սաղաւարտ եղեալ ՚ի զլուխս,
 զերկուս խաչվառս, զերկուս բուրվառաւոր
 սարկաւագունս առաջի սրբազան պատրիարքին,
 եւ զմի եւս առաջի խաչակիրին, զերկուսքղան-
 ցաբարձս յաջմէ եւ յահեկէ սրբազան պատրի-
 արքին, տասն մոմակիրս, չորսն առաջի սրբա-
 զանին, չորսն ՚ի մէջ աւետարանաբարձից, եւ
 երկուքն՝ առաջի խաչակիրին. եւ ամենեքեան
 կերպասիւք շքեղազարդեալ. ՚ի մէջ բակին ըն-
 թեռնուն զկիրքսն եւ զաւետարանսն, եւ տեառ-
 նազրեալ զանդաստանն ամենայն փառաւորու-
 թեամբ՝ մտանեն յաւագ դրանէն ՚ի ներքս, եւ
 պաշտեն զժամերգութիւնս: յայսմ երեկոյի, եւ

զկնի առաւօտեան մեծահանդէս պատարագի՝
փառօք հանեն 'ի վեհարանն զսրբազան
պատրիարքն եւ օրհնին 'ի նմանէ , սոյն կար-
գըք եւ պատրաստութիւնք թափօրի՝ յամենայն
նուագո հանդիսի լինին , աւետարանաբարձք,
խաչակիր , բուրվառաւորք , քղանցաբարձք ,
եւ մոմակիրք . թէ 'ի սուրբ Յակոբ , և թէ
'ի սուրբ Յարութիւն :

Ի բուն բարեկենդանի ուրբաթ օրն՝ զկնի
առաւօտեան ժամերգութեան ըստ նախնեաց
սովորութեան երթան 'ի սուրբ աստուածածնի
վանս ասորոց որ է տուն Արքուսի աւետա-
րանչին , զորմէ յառաջադոյն եւս ասացաք .
Համայն միաբանութեամբ եւ տէրունական
ուխտաւորօք . որ մերձ է սրբոյ աթոռոյս իմր
հինգ բոպէ . 'ի հիւսիւսակողմն վանքին մերոյ
'ի մէջ հայաբնակ թաղիս . անդ մատուցանեն
զսուրբ պատարագն փոքր ինչ ատենախօսու-
թեամբ վասն սուրբ տեղւոյն :

Ի սուրբ Խորոսի ուրբաթ երեկոյին կէս-
քըն յեկեղեցականաց գնան 'ի փառաւոր ե-
կեղեցին սրբոյն Խորոսի հանդերձ ուխտա-
ւոր կանամբք . եւ անդ կատարեն զհանդիսա-
ւոր նախատօնակս . եւ կէսքն՝ ընդ ուխտա-

ւոր արամբք ՚ի սուրբ Յակոբ պաշտեն զժա-
մերգութիւնս : Եսկ յառաւօտու՝ արք երթան
՚ի սուրբ Ծարոս , եւ մատչի անդ փառաւոր
պատարագ , եւ կանայք մնան ՚ի սուրբ Յա-
կոբ՝ ուր եւս լինի անմահ պատարագ ՚ի սուրբ
Դվինադիբն :

“Եմանապէս եւ ՚ի տօնախմբութեան սըս-
բոյն Ա երկեռիոսի զինաւորին երթան անդք
սոյն կերպիւ , եւ երկոսին տօնախմբութեա-
նէս եւս փոքր ինչ ատենախօսութիւն լինի
անդ :

Ի ծաղկազարդի երեկոյին դրան բացէքի
հանդիսաւոր խորհուրդ կատարի ՚ի սուրբ
յակոբ գեղեցիկ ատենախօսութեամբ :

Յաւուրաւագ հինգշաբաթի՝ յեօթն տեղ-
ւոջ սուրբ պատարագ մատչի յառաւօտուն .
՚ի կանանց վերնատան , որ ՚ի սուրբ Յակոբ
՚ի սուրբ Ծարոս . ՚ի Հոգին սուրբ . ՚ի սուրբ
Փրկիչ . ՚ի սուրբ Հոբեշտակապետ . ՚ի սուրբ
Յօհաննէս , յոր ՚ի բակն սրբոյ Յարութեան .
եւ ՚ի սուրբ Աստուածածինն : Ո կնի այսց
եօթն պտտարագաց՝ սկսանին զճաշուն ՚ի սուրբ
յակոբ , եւ ապա մեծահանդէս պատարագ
մատչի յաւագ սեղանն :

Խակ յերեկոյի՝ սրբազան պատրիարքն ըշ-
դենու զգեստ եւ զղենջակ եւ երկոտասան
մեծամեծ վարդսպետք շուրջառաւ նստին յեր-
կոտասան աթոռս 'ի բեմի աւագ սեղանոյն .
եւ սրբազան պատրիարքն 'ի ծունկո իջեալ
խոնարհ կերպարանօք իբրեւ սպասաւոր ոմն
'ի միջի նոցա , զմիոյ միոյ ստոն լուանայ իւ-
րաքանչիւրոցն՝ յօրինակ Քրիստոսի :

Օոյնք՝ զայս խորհուրդ ոտնալուային՝
յարտաքին բակն սրբոյ յարութեան կատա-
րեն . եւ լատինք առաջի կենսատու դերեզ-
մանին Քրիստոսի . բայց կարի խոնարհու-
թեամբ , մինչեւ զոտսն համբուրել լուացե-
լոցն :

Խակ 'ի սուրբ զատկի երեկոյին մեծաւ
հանդիսիւ իջուցանեն զսրբազան պատրիար-
քըն յեկեղեցին հրաշափառիւ՝ պատրաստ ու-
նելով միանգամայն զամենայն թափօրականսն
որպէս յառաջագոյն ասացաք . եւ ապա
ելանեն արտաքս 'ի մեծ սակն՝ որպէս 'ի
տեառնդառաջի երեկոյին . եւ զկնի աւետա-
րանաց եւ գրքաց տեառնագրեալ զանդաս-
տանն . մտանեն 'ի ներքս , եւ պաշտեն զժա-
մերգութիւնս :

Եսկ յառաւօտու ըստ վաղեմնի սովորութեան, զկնի հասարակ ժամերգութեան, մեծահռչակ եւ փառաւոր հանդէս կատարի ՚ի սուրլւ ։ պատարագամատոյցն եւ թափօրապետն սրբազան պատրիարքն լինի. ՚ի մեջ պատարագի գեղեցիկ ատենախօսութիւնս՝ առնէ, եւ զվերջին օրհնութիւնն այս սիրով աերունական ուխտաւորաց. եւ զկնի բազմահանդէս պատարագին՝ մեծ եւ փառաւոր թափօր լինի ամենայն շքեղութեամբ. երկուասան եպիսկոպոսք, կամ վարդապետք եպիսկոպոսական զգեստուք պճնազարդեալ, խաչ եւ գաւազան ունելով ՚ի ձեռս իւրեանց. եւ մն ացեալ վարդապետք, եւ կամ ուխտաւոր քահանայք զգեստաւորեալք բեհեղեայ եւ ծիրանեայ կերպասիք, ՚ի ձեռս իւրեանց ունելով զզանազան պատուական մասունք սրբոց արծաթապատեալ. զպաց, ասորւոց, եւ հափէշից համայն կարդաւորք միանդամայն չուրջառ առեալ, սարկաւագունք եւ դպիրք կերպասեայ շապկօք, ուրարօք եւ վզնոցովք զարդարեալ. եւ սրբազան պատրիարքն ՚ի ձեռն աւեալ ըզսուրբ խաչն՝ որ ունի զմեծ մասն ՚ի կենաց

փայտէ, նովաւ խաչակնքէ զժողովուրդն, ունելով 'ի վերայ զլիսոյ իւրոյ եւ փառաւոր ամպհովանի. եւ ամենայն զարդք եկեղեցոյ, կանթեղք, ջանք, մամեղէնք, ծածկոցք, շուրջառք, եւ այլքն ամենայն իւրեւ զարեդակն շողշողեալ փայլին յայն օր:

Եսսպիսի ամենափառաւոր հանդիսիւ եւ քաղցր շարականաւ երիցս շրջին 'ի թափօր 'ի մէջ սրբոց յակորեանց ամենասքանչ տաճարիս. եւ ապա եկեալ առաջի աւագ սեղանոյն, եպիսկոպոսազգեստք 'ի բեմն եւ եւալ հանդերձ թափօրապետիւ, եւ այլքն 'ի վայր առաջի սեղանոյն 'ի ծունկս իջեալ տէր ողորմեա՛ երգեն աղիողորմ ձայնիւ. եւ ապա տէր ուղղեա՛ սսէ սրբազն պատրիարքն վասն բարեյաջուղութեան ճանապարհորդութեան ջերմեռանդ ուխտաւորաց, եւ արձակին խաղաղութեամբ եւ հոգեզուարձ արտասուօք, զի այսօր սկսանին երթալ ուխտաւորքն յիւրաքանչիւր քաղաքս իւրեանց. աւելի քան զայս աւուր մեծ հանդէս չունի սուրբ աթոռս :

Յաւուր նոր կիւրակէի պիառաւոր պատարագ մատչի յաւագ սեղանն . 'ի գիշերի համբարձման՝ ուսանք յեկեղեցականաց գնացեալ 'ի սուրբ լեաւն համբարձման , պաշտեն զերեկոյեան եւ զառաւօտեան ժամերդութիւնս , եւ մնացեալքն զկնի զառաւօտեան ժամն պաշտելոյ 'ի սուրբ Յակոբ վնացեալ անդր հանդերձ սրբազան պատրիարքաւ , մատուցանեն զհանդիսաւոր պատարագս 'ի վեճակս մեր . զկնի պատարագին տեառնազբեալ զանդաստանն առաջի դրան գմբեթի , վերադառնան խաղաղութեամբ .

Յաւուր երկրորդ ծաղկազարդի թէ յերեկոյի եւ թէ յառաւօտու ամենայն ուստիւք երթան 'ի սուրբ հրեշտակապետ՝ զժամերգութիւնսն անդ պաշտեն , եւ զսուրբ պատարագն յաւագ սեղանն մատուցան են . նմանապէս եւ յաւուր տօնախմբութեան հըրեշտակապետաց ըստ այսմ կերպի լինի . իսկ յաւուր տօնախմբութեան ուիսիսիմէ կուսին՝ թէպէտ ժամերգութիւնք ըստ այսմ կարգի լինին . 'ի սուրբ հրեշտակապետ , բայց սուրբ պատարագն 'ի սեղանն

սրբոյն Հոլիվսիմեայ մատչի . որ 'ի պահա-
րանն :

Ի Հոգւոյն սրբոյ գալստեան երեկոյի
գնան 'ի սուրբ Փրկիչ ամենայն ուխտիւք ե-
կեղեցւոյ , եւ անդ կատարեն զժամերգու-
թիւնս եւ զնախտօնակս մեծաւ հանդիսիւ .
Եւ յառաւօտու զկնի ժամերգութեան 'ի
սուրբ Յակոբ , գնացեալ կրկին անդր ամե-
նայն փառաւորութեամբ մատուցանեն զան-
մահ պատարագն , եւ ապա տեառնադրեալ
զանդաստանն՝ դառնան 'ի սուրբ Յակոբ .
զի սուրբ Փրկիչն դէմ առ դէմ է Աիօն
վերնատան՝ ուր էջ Հոգին սուրբ յաւուր
Պէնտէկոստէի :

Յառաջին կիւրակէի յարութեան՝ ա-
մենաիառաւոր տօն . կատարեն 'ի սուրբ
Յակոբ՝ ամենասուրբ Երրորդութեան ,
զոյգ կոչնակաւ եւ հանդիսաւոր պատարա-
գաւ :

Եեկեղեցւոյ տօնի թէ յերեկոյի եւ թէ
'ի պատարագի զոյգ կոչնակ եւ փառաւոր
հանդէս լինի 'ի սուրբ Յակոբ . երբեմն եւս
ձեռնադրութիւն լինի . եւ առաջին պատա-
րագը նորընծայից յաւագ սեղանն՝ մատչին

մեծահանդէս փառօք՝ զոյդ կոչնակաւ եւ
զոյդ բուրվառաւ :

Ի վարդավառի՝ յաստուածածնի, եւ 'ի
սուրբ խաչի ուրբաթ երեկոյեանս 'ի սուրբ
էջմիածին նախատօնակ լինի, եւ յառաւօ-
տեանս սուրբ պատարագն անդ մատչի :

Ի վարդավառի շաբաթ երեկոյի զոյդ
կոչնակ, եւ զկնի համբարձիին հանդիսաւոր
նախատօնակ լինի 'ի պատիւ տեառնեղբօր
սրբոյն Յակոբայ. զի յայն օր նստաւ յաթոռ
պատրիարքութեան. թէ յերեկոյի, եւ թէ
յառաւօտու զկնի ամենափառաւոր ժամեր-
գութեան եւ պատարագի հանդիսիւ տանին
զսրբազան պատրիարքն 'ի վեհարանն :

Ի սուրբ Աստուածածնի վերափոխման ե-
րեկոյի ամենայն ուխտիւք երթան 'ի սուրբ
Աստուածածին, և եւ զսրբազան պատրիարքն
հրաշափառաւ իջուցանեն 'ի վայր, եւ ամե-
նայն փառաւորութեամբ կատարեն զժամեր-
գութիւնն. եւ ապա ոմանք մնացեալ անդ
վասն գիշերային ժամերգութեան, եւ այլքն
գան 'ի սուրբ Յակոբ. եւ յառաւօտու զկնի
ժամերգութեան՝ կրկին գնացեալ մատուցա-
նեն զանմահ պատարագն 'ի վերայ սրօմէ-

ասպաս գերեզմանի սուրբ Աստուածած-
նի փառաւոր հանդիսիւ , եւ տեառնագ-
րեալ զանդաստանն՝ վերադառնան խաղաղու-
թեամբ :

Համենայն տօնախմբութիւնս սուրբ Աստ-
ուածածնի , թէ յաւետման , թէ 'ի ծննդեան
սուրբ կուսին , թէ յերից ամաց ընծայման ,
եւ թէ յայլս՝ 'ի սուրբ Աստուածածինն լինի
հասարակ պատարագն փառաւոր հանդիսիւ :

Ե վերացման սուրբ խաչի երեկոյի , եւ
'ի սուրբ պատարագի զոյդ կոչնակ՝ հանգի-
սաւորի պատարագ , եւ խաչվերաց լինի , եւ
զսրւազան՝ պատրիարքն հանդիսիւ տանին 'ի
վեհարանն :

Ե վարագայ սուրբ խաչի ուրբաթ երե-
կոյի երթան ամենայն եկեղեցականք եւ գը-
տանեցեալ ուխտաւորք՝ 'ի զպտոց սուրբ
Գևորգայ վանքն՝ որ յարեւմտեան կողմն է
մեր վանոց՝ հինգ րոպէ միջոցաւ , եւ է մերձ
մեծ վանուցն յունաց . եւ անդ առնեն հան-
դիսաւոր նախատօնակ սրբոյն Գևորգայ . եւ
յառաւօտու՝ զկնի ժամերգութեան՝ գնացեալ
անդր կրկին , մատուցանեն փառօք զուրբ
պատարագն , եւ սակաւ ինչ առենախօսութիւն

լինի անդ վասն տեղւոյն եւ վարուց սրբոյն
Գևորգայ :

Իսկ յաւուրս աւագ տօնից, թէ յերե-
կոյի, եւ թէ 'ի սուրբ պատարագի զոյք
կոչնակ հարկանի . 'ի Ղաւթի մարգարէի, եւ
յորդւոց որոտման երեկոյեանս՝ զսրբազան
պատրիարքն ամենայն փառաւորութեամբ ի-
շուցանեն յեկեղեցի՝ հրաշտիառ ասելով.
եւ յետ ժամերգութեանցն՝ թէ յերեկոյի,
եւ թէ յառաւօտու նմանապէս հանդիսիւ
հանեն 'ի վեհարանն . 'ի Ղաւթի մարգարէի
տօնախմբութեան օրն՝ յաւագ սեղանն մատ-
չի սուրբ պատարագն մեծաշուք հանդիսիւ՝
զանազան զարդուք եւ պայծառ զգեստուք .
պատարագամատոյցն եպիսկոպոս լինի . 'ի
սուրբ Ատեփաննոսի օրն՝ յանուն նորա կա-
ռուցեալ սեղանն մատչի սուրբ պատարագն ,
եւ յայն օր՝ թէ յերեկոյի եւ թէ յառաւօտու
սարկաւակունք եւ դպիրք կատարեն զբոլոր
ժամերգութիւնս . եւ համայն սարկաւագունք
սաղաւարտ եղեալ 'ի դլուխս , եւ 'ի ձեռս
իւրեանց ունելով զանազան բուրլառս եւ
բազմարուեստ տապանակս՝ շարադասեալ
կանգնին յատեան առաջի դրան սուրբ Ատե-

փաննոսի , 'ի փառք 'ի բարձունաէն մինչեւ
 'ի պատարագն . Եւ զկնի պատարագին ամե-
 նեքեան 'ի միասին ուրարօք գնացեալ աջ
 առնեն 'ի սրբազան պատրիարքէն եւ 'ի խոր-
 հրդականաց , եւ օրհնին 'ի նույանէ արժա-
 նաւոր ընծայիւք :

Ե Պօղոս Պետրոսի օրն 'ի սեղան սըր-
 բոյն Պետրոսի մատչի սուրբ պատարագն ,
 եւ սպասն դնի 'ի սեղան սրբոյն Պօղոսի .
 որք են 'ի վերայ երկուց դասուց խորանաց .
 իսկ յորդոց որոտման օրն 'ի սուրբ զլխա-
 դիրն մատուցանէ զսուրբ պատարագն սըր-
 բազան պատրիարքն . Եւ զկնի հաշտարար
 սուրբ պատարագի՝ մեծ թափօր լինի փա-
 ռաշուք հանդիսիւ իբր երկրորդ աւուր զատ-
 կի . յայս չորս աւուրս աւագ տօնից եւս՝
 մեծ եւ փառաւոր լինի հանդէսն սրբոյ ա-
 թոռոյս , որպէս եւ միշտ հոչակ հարկանի
 ընդ ամենայն տիեզերս . 'ի փառս անուան
 ամենասուրբ Երրորդութեան . 'ի պատիւ սըր-
 բոց Յակովեանց սրբազան առաքելոցն ,
 եւ 'ի պարծանս լքութեան ազգիս հայոց :

Ե շրջանս միոյ տարւոյ երիցս անգամ
 նախատօնակ լինի 'ի սուրբ աթոռս վասն

այսմաւուրաց, եւյայնոսիկ աւուրս զայսմաւուրն սրբազան պատրիարքն ընթեռնու, զկնի այսմաւուրին սրբազանն միայն շուրջառ առեալ, Խաչ եւ գաւազան 'ի ձեռին, եւ մնացեալքն մոմ եւ եթ ունելով 'ի ձեռս իւրեանց՝ կատարեն զնախատօնակս. Նախ՝ 'ի միեարվար 21, 'ի սուրբ գլխադիրն վասն որդւոցն որսաման. Երկրորդ՝ 'ի յովիս 11, 'ի սուրբ Կարապետի սեղանն վասն ծննդեան սրբոյն յօհաննու Լարապետին. Եւ Երրորդ՝ 'ի հոկտեմբեր 23, յաւագ սեղանն վասն սրբոյն Հակոբայ տեառնեղբօրն:

Ի ծննդեան եւ յառաջաւորի պահս՝ եւ 'ի մեծի պահոց մինչեւ վեցերրորդ շաբաթն ատ ենախօսութիւն լինի 'ի սուրբ աթոռա՝ Երեք օր 'ի շաբաթն. Խսկ զծաղկազարդի եւ զթաղման քարոզն, եւ զաւագ ուրբաթու կտակն քաջաքարող Երեւելի վարդապետք կամ Եպիսկոպոսք Ճառեն գերիմաստ բանիւք 'ի միսիթարութիւն ջերմեռանդ ուխտաւորաց:

Ի գալստեան նոր ուխտաւորի փոքր ինչ ծանուցումն լինի 'ի սուրբ գլխադիրն վասն բարի գալստեան նոցա, եւ նախապատրաս-

տութեան յարժանաւոք երկրպագութիւն
սրբազան տեղեաց :

Յաւուրս դրան բացման սրբոյ հարու-
թեան՝ սրբազան պատրիարքն սակաւ ինչ ա-
տենախօսութիւն առնէ վասն կամաւոր ոլոր-
մութեան եւ բարեմաղթութեան յաղագս
նոյն դրան բացման պատճառ եղեալ բարե-
սէր անձանց :

Կոչնակք եւ զանկք սրբոյ աթոռոյս ըստ
այսմ կարգի հարկանին . նախ յառաւօտու-
ելեալ ժամ մի յառաջ քան զժամերգութիւ-
նը . փոխանորդն աւագ լուսարարի՝ հար-
կանէ զվերին երկու կոչնակսն սեղանոյ , ո-
րոց մին՝ 'ի թաղս աքեղայից է , եւ միւսն՝
մեծամեծ վարդապետաց . զինի սոյն կոչ-
նակաց , կարգաւ հարկանէ եւ զդրունս ամե-
նայն վարդապետաց՝ եւ մանաւանդ պաշտօ-
նատեարց . յետ սակաւուց հարկանէ զվարի
երկաթեայ կոչնակն վասն առաջին սաղմա-
սի , եւ 'ի գալն սալմոսասաւցից 'ի կանոնա-
գլուխն՝ հարկանէ եւ զտախտակեայ կոչնակն
վասն երկրորդ սաղմասի . զի անխափան
երկու կանոն սաղմոս ասին յառաւօտեան 'ի
սուրբ աթոռս , 'ի գալն եւս 'ի կանոնագլ-

լուիս երկրորդին՝ քարշէ զզանկն՝ որ է նշան
սկսման ժամերգութեան . յասելն ժամօրհ-
նողին, տէր եթէ զշրթունս՝ դոյ եւ այլ
զանկ, զոր հարկանեն փոխասաց դպիրք
երիցս . նմանապէս եւ 'ի լցաք առաւօ-
տույին :

Աթէ պատարագ լիցի 'ի սուրբ Յա-
կոբ, նախ՝ զմեծ զանկն քարշէ, ապա հար-
կանէ զտախտակեայ կոչնակն . եւ 'ի ճաշու-
յին, վասն առաջին ողորմեայի՝ միանգամ
հարկանէ փոխասացն զզանկն . երկրորդին՝
երկու անգամ . եւ երրորդին՝ երեք անգամ .
եւ 'ի մէջ պատարագի, յառեք կերեքին, եւ
'ի օրհնեալ հայր սուրբին, եւ 'ի սուրբ սուր-
բին եւս հարկանեն երիցս երիցս . իսկ ե-
թէ պատարագն արտաքոյ սուրբ Յակոբայ
լիցի, թէ 'ի սուրբ Աստուածածին հասա-
րակ, թէ 'ի սուրբ Յարութիւն, եւ թէ
յայլ ուրեք, մի միայն տախտակեայ կոչնա-
կըն հարկանի, զանկըն ո'չ քարշին եւ ո'չ
հարկանին . զկնի պատարագին հարկանէ սե-
ղանապետն զվերի երկու կոչնակսն սեղա-
նոյ, եւ գնացեալ բոլոր միաբանք 'ի միասին
Ճաշակեն զպարգեւսն Աստուծոյ կրօնաւու-

բական պարկեցտութեամբ . Եւնոյն աւուր
պաշտօնատէրն , եւ կամ սարկաւագ ոմն ե-
լեալ 'ի վեր տեղի ինչ իրը ամպիօն՝ ըն-
թեռնու 'ի լուր ամենեցուն զաւուր պատշա-
ճի ճառսն սրբոց համեստ ներդաշնակու-
թեամբ . Եւ ապա բերանալիր օրհնութիւնս
տուեալ համայն ազգիս հայոց՝ երթան խա-
ղաղութեամբ 'ի սենեակս իւրեանց 'ի պա-
րապումն հոգեւոր ընթերցման :

Յերեկոյեան ութուկէս ժամու հարկա-
նեն զերկաթեայ կոչնակն վասն սաղմոսի ,
եթէ օրն չիցէ տէրունի . զի 'ի տէրունա-
կան աւուրս երեկոյեան սաղմոս ո'չ լինի .
'ի կէս սաղմոսին հարկանեն եւ զտախտա-
կեայ կոչնակն , եւ 'ի կանոնագլխին քարշեն
զզանկն . 'ի լրանալ սաղմոսին ընթեռնու
պաշտօնատէրն եւ զայսմաւուրն ըստ ամսա-
թուոյն . զկնի այսմաւուրին շարական ասի
ըստ ընթերցեալ սրբոցն , թէ յատուկ իցէ ,
եւ թէ մարտիրոսաց . եւ ապա 'ի սկսանիլն
զես առ աստուած կարդացին՝ հարկանէ ըզ-
զանկն փոխասայն՝ երիցս . նմանապէս եւ
'ի խաղաղականին . յաւարտ ժամերգութեան
հարկանին կոչնակըն եւ երեկոյեան սեղա-

նոյ. եւ ըստ առաւօտեան կ սրբի ճաշսկեն զբարութիւնսն Ըստուծոյ՝ բայց այժմ առանց ձառքի. ապա գոհացեալ երթան խաղաղութեամբ։ Ի սեղանատան յատուկ է աեղի սրբազն պատրիարքին, եւ փոխանորդին. իսկ այլքն կարգաւ նստին ըստ աստիճանաց իւրեանց։ Ի մետասաներորդ պահու քարշեն նախ զզանկն, եւ ապա հարկանեն զերկաթեայ կոչնակն վասն եկեսցէի. յսկսանիլն՝ հարկանէ փոխասացն զզանկն երիցս. եւ 'ի լրանալ եկեսցէին գնացեալ իւրաքանչիւրոք 'ի սենեակս իւր՝ ննջէ կրօնաւորական զգուշութեամբ։

Համայն միաբանք սրբոյ աթոռոյս, թէ եկեղեցականք, եւ թէ աշխատաւորք, թէ 'ի մէջ սրբոյ աթոռոյս, թէ սրբոյ Յարութեան, թէ սրբոյ Օննդեան, եւ թէ յայլ շրջակայ վանս սրբոյ աթոռոյս՝ լինին իբրեւ երկերիւրք, որք զցայդ եւ զցերեկ աղօթամատոյց լինին վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, եւ հանգստութեան քրիստոնէից. եւ մանաւանդ վասն բարեկեցութեան համայն ազգիս հայոց, եւ երախտաւորաց՝ պտղաբերից գերահրաշ մայր սուրբ աթու-

ոյս . Եւ յաջողութեան բանից եւ գործոց
նոցա , նաեւ յաղագս համօրէն հաւատով
'ի Քրիստոս Ննջեցելոցն Խնդրեն յԱստու-
ծոյ , շնորհել զերկնից արքայութիւնն . որ
եւ ինքն բարեգութն Եստուած վարձատ-
րիչն ամենեցուն՝ վարձատրեսցէ զնոսա 'ի
միւսանգամ գալստեանն իւրում ամէն .

Եւ յաջողութեան բանից եւ գործոց
նոցա , նաեւ յաղագս համօրէն հաւատով
'ի Քրիստոս Ննջեցելոցն Խնդրեն յԱստու-
ծոյ , շնորհել զերկնից արքայութիւնն . որ
եւ ինքն բարեգութն Եստուած վարձատ-
րիչն ամենեցուն՝ վարձատրեսցէ զնոսա 'ի
միւսանգամ գալստեանն իւրում ամէն .

Եւ յաջողութեան բանից եւ գործոց
նոցա , նաեւ յաղագս համօրէն հաւատով
'ի Քրիստոս Ննջեցելոցն Խնդրեն յԱստու-
ծոյ , շնորհել զերկնից արքայութիւնն . որ
եւ ինքն բարեգութն Եստուած վարձատ-
րիչն ամենեցուն՝ վարձատրեսցէ զնոսա 'ի
միւսանգամ գալստեանն իւրում ամէն .

Եւ յաջողութեան բանից եւ գործոց
նոցա , նաեւ յաղագս համօրէն հաւատով
'ի Քրիստոս Ննջեցելոցն Խնդրեն յԱստու-
ծոյ , շնորհել զերկնից արքայութիւնն . որ
եւ ինքն բարեգութն Եստուած վարձատ-
րիչն ամենեցուն՝ վարձատրեսցէ զնոսա 'ի
միւսանգամ գալստեանն իւրում ամէն .

Եւ յաջողութեան բանից եւ գործոց
նոցա , նաեւ յաղագս համօրէն հաւատով
'ի Քրիստոս Ննջեցելոցն Խնդրեն յԱստու-
ծոյ , շնորհել զերկնից արքայութիւնն . որ
եւ ինքն բարեգութն Եստուած վարձատ-
րիչն ամենեցուն՝ վարձատրեսցէ զնոսա 'ի
միւսանգամ գալստեանն իւրում ամէն .

ԳԼՈՒԽ Ե.

Ծանօթութեանք ամենափառասը հանդիպից և լատօրից սրբոյ Յարութեան . Աւ յապիկացելոյն մեջ, և Աւ երից աղջայս ՚ի մասին . նաեւս շաբանական հասարակ լատօրից .

Զգեցիր զ Փառաքո Երուսաղէմ,
Քաղաքու սրբոյն (Եսայ . ծր . 1)
Զփառաւորիչս իմ փառաւորեցից .
և որ արհամարհէն զիս անարդէցի (= . Թագ . բ . 30)

Եռաջին հանդէս օրբոյ Յարութեան
սկսանի ՚ի վարագայ սուրբ Խաչին . ուստի
՚ի նոյն շաբաթ երեկոյի յութերրորդ ժամու
հարկանի կոչնակ ՚ի սուրբ Յակոբ, եւ
առ հասարակ ամենայն ուխտք եկեղեցւոյ
հանդերձ սրբազն պատրիարքաւ ըստ կարգի
երթան ՚ի սուրբ Յարութիւն փառաւոր շը-
քով . յորժամ մտանէ սրբազն պատրիարք
՚ի ներքս, աւագ լուսափար ազք եպիսկոպու

յետոյս դրան շուրջառ տայ սրբազան պատ-
 րիարքին, եւ 'ի ձեռս խաչ եւ գաւազան . ե-
 թէ այլ եպիսկոպոս իցէ Հանդիսապետն,
 այլ ոք տայ զշուրջառն . կարգեն եւ զեր-
 կուս քշանցաբարձօ՝ յաջմէ եւ յահեկէ . 'ի
 պատրաստի լինին անդ աւետարանաբարձքն՝
 խաչակիրն, բուրվառաւոր սարկաւագունք,
 եւ մոմակիրք ըստ Հանդիսադրութեանն սբր-
 դոյ աթոռոյն . և եւ ապա յառաջ եկեալ նա-
 խասարկաւագն ասէ բարձր ձայնիւ՝ եւ եւս
 խաղաղութեան', եւ թափօրտպետն՝ օրհ-
 նութիւն եւ փառք' . եւ ժամասացքն սկսա-
 նին ըստ դասու զհրաշափառն քաղցր ձայ-
 նիւ . փոքր ինչ յառաջ գնացեալ թափօրտ-
 պետն՝ առնու 'ի ձեռանէ սարկաւագին ըզ-
 բուրվառն, եւ խնկարկէ զսուրբ պատանա-
 տեղն, զսուրբ գողգոթայն, զվարդապետ-
 սըն եւ զուխտաւորսն՝ որք պարառեալ կան
 շուրջանակի . ապա տուեալ զբուրվառն սար-
 կաւագին, եւ զգաւազանն աւագ լուսարա-
 րին, եւ ինքն 'ի ծունկս անկեալ 'ի վերայ
 գորդին՝ զոր սփռեն յառաջագոյն . համբուրէ
 զսուրբ պատանատեղն Վրիստոսի, եւ ե-
 ղեալ առնու կրկին զիւաչն եւ զգաւազանն,

եւ սկսանի խաչակնքելով զգողովուրդն գիմել 'ի սուրբ գերեզմանն նոյն հրաշամառ հանդիսիւ . զոյտ զոյտ գնալով վարդապետք՝ սարկաւագունք եւ դպիրք դաս առ դաս :

Ե հասանիլ թափօրապետին 'ի մէջ սեանց ասի շարական , առաքեցար 'ի հօրէ բանդ Շատուած" : Ելորեւ ժամանեն 'ի դուռն կենաւատու գերեզմանին թափօրականքն պարառեալ կարգ առ կարգ՝ աւետարանաբարձքն առաջի դրան սուրբ գերեզմանին դասակարգեալ յաջմէ եւ յահեկէ . եւ թափօրական մէծ խաչն առաջի դրան աշխարհամատրան տաճարին կանգնի :

Յայնժամ սարկաւագունք մտեալ նախ խնկարկեն զսուրբ գերեզմանն . եւ ապա թափօրապետն մտեալ խնկարկէ , եւ տայ ըզբուրվառն 'ի սարկաւագն . եւ սարկաւագունք խաչանիշ խնկարկեալ վիսի հրեշտակին ըստ մշտնջենական սովորութեանն՝ ելանեն արտաքս . թափօրապետն ելեալ 'ի սուրբ գերեզմանէ , նստի յաթոռն . որ զկնի արտաքին դրան սուրբ գերեզմանի եղեալ է . եւ ապա մտեալ ամենայն վարդապետք կարգաւ . 'ի սուրբ գերեզմանն եւ համբուրեալ

զնա մեծաւ զգուշութեամբ արտաքս ելա-
նեն՝ խոնարհելով թափօրապետին . յայնժամ
սկսանին շուրջ զգերեզմանաւ դառնալով ե-
լանեն 'ի վերնատունն մեր, սիօնի որդիք
զարթիք ասելով . եւ սկսանի հարկանիլ
զյս կոչնակն մեր . իբրեւ հասանէ թափօ-
րապետն 'ի գլուխն սանդղոց վերնատան՝ ա-
սի շարական, ուրախ լեր սուրբ եկեղեցի .
եւ եկեալ յատեանն թափօրապետն ասէ 'ի
մէջ տաճարիս, եւ պահպանիչ . եւ ապա ըս-
կըսանին զժամերգութիւնն, եւ յաւարտիլ
նորա վերադառնան նոյն հանդիսիւ 'ի սուրբ
Յակոբ :

Իսկ յիններրորդ պահու զիշերոյ հարկա-
նի կոչնակ 'ի սուրբ Յակոբ, եւ ըստ երե-
կոյեան կարգի գնան 'ի սուրբ Յարութիւն .
Ժամերգութիւնն պաշտի 'ի վերնատան, եւ
ճաշուն ասի առաջի դրան սուրբ գերեզմա-
նին . լուացումն եւ ընտրեալն եւս անդա-
նօր կատարի . սպասն դնի 'ի վերայ հրեշ-
տակի վիմին . 'ի ժամանակս գրքին եւ վերա-
բերման ելեալ պատարագամատոյց եպիս-
կոպոսն նստի յաթոռն՝ որ դնի առաջի
դրան սուրբ գերեզմանին . յաւարտ սուրբ

պատարագի՝ տանին զպատարագիչն ՚ի սեռ
նեակ ոէյիլին՝ որ զշնորհս ասելով, ուր
եւ զգեցեալ էր յառաջագոյն զգեստն. եւ
անդ ասացեալ զպահպանիչն, դառնան խա-
ղաղութեամբ ՚ի սուրբ Յակոբ:

Սուրբ Յարութեան հանդէսն յամենայն
նուագի ըստ այսմ կերպի լինի. բայց յա-
ռուր գիւտ խաչի, թէ յերեկոյի, եւ թէ
յառաւօտու ժամերգութիւնն եւ սուրբ պա-
տարագն ՚ի սուրբ Լուսաւորիչ լինի. իսկ
յորժամ երգեն զհարցի երրորդ տունն
այսինքն՝ ուստի բուրելովն, սարկաւագունք՝
զոյգ բուրվառաւ իջեալ ՚ի զիւտ խաչ՝ խըն-
կարկեն զտեղի սուրբ խաչին. եւ ելեալ
՚ի վեր՝ գան յատեան. եւ այս երիցս անգամ
ըստ կրկնութեան նոյն տան շարականի.
Նմանապէս եւ ՚ի վերաբերման իջուցեալ
սարկաւագն զսկիչն մեծաւ հանդիսիւ՝ դնէ
՚ի տեղւոջ սուրբ խաչին, եւ խնկարկեալ
կրկին՝ վերաբերէ առ պատարագիչն:

Օկնի պատարագին զգեստաւորեալ
թափօրապետն, շքեղափայլ զգեստուք, թէ
պատրիարք իցէ եւ թէ եպիսկոպոս ոմն.
Վարդապետքն եւ կամ ուխտաւոր քահանայք

Հասարակ շուրջառօք, սարկաւագունք եւ
դպիրք շապկօք, եւ ըստ առաջին կարգադ-
րութեան աւետարանաբարձք եւ այլքն ա-
մենեքեան պատրաստեալք ելանեն՝ի թափօր
նաեւս երկոտասան խաչվառք առաջի թա-
փօրականացն, եւ մեծ մի եւս՝ որ ունի
զպատկերն յարութեան. զկնի թափօրա-
պետի երթան նոյնպէս եւ քղանցաբարձք.
իսկ բուրվառաւորք առաջի նորա, եւ փառ-
ուաւոր տմակ հովանի՝ի վերայ նորա :

Իջեալ նախ թափօրապետն՝ի գիւա
խաչ ուր պատրաստեալ դնի յառաջագոյն
կենսատու սուրբ Խաչն. ընթեռնու անդ
զաւետարան մի, եւ ապա խնկարկեալ բառ-
նայ զնա անտի, եւ սկսանին քաղցր շարա-
կանաւ ելանել՝ի վեր. եւ՝ի կողմանէ սուրբ
պարտիզի կարգ առ կարգ գնացեալ շոջին
շուրջ զգերեզմանաւն Վրիստոսի երկիցս.
իսկ յերրորդ անգամին՝ ըստ առաջին կար-
գադրութեան շարակարգեալ կանգնին ա-
ռաջի դրան սուրբ գերեզմանին, թափօրա-
պետն մտեալ՝ի ներքս՝ դնէ զսուրբ խաչն
՝ի վերայ վիմի հրեշտակին, եւ խնկարկէ
զսուրբ գերեզմանն՝յեա խնկարկելոյ սար-

կաւագաց . եւ մի ո՞ն ՚ի վարդապետաց ընթեռնու ՚ի դուռն սուրբ գերեզմանի զաւետարան մի . յետ որոյ բարձեալ կրկին թափօրապետն զսուրբ խաչն դառնալով շուրջ զբերեզմանաւ՝ երթան ՚ի սուրբ պատանաւեղն . անդ եւս ընթերցեալ զաւետարան մի՝ վերադառնան կրկին ՚ի դուռն սուրբ գերեզմանին . մտեալ թափօրապետն ՚ի ներքս , եւ եղեալ զսուրբ խաչն ՚ի վերայ վիմի հրեշտակին՝ բազմի յաթոռն . յետ խնկարկելոյ զսուրբ գերեզմանն սարկաւագաց , ընթեռնանի եւս աւետարան մի . եւ ապա մըստեալ թափօրականք զոյգ զոյգ , եւ համբուրեալ զսուրբ գերեզմանն եւ զսուրբ խաչըն՝ ելանեն արտաքս . եւ ասեն քաղցր եղանակաւ տէր ողորմեա՛ . եւ զայս երդ յամենայն թափօրի առաջի գերեզմանին :

Դերեզմանիդ՝	քո համբուրման ,
գողդոթայիդ՝	տեղւոյդ զենման .
սուրբ տաճարիս՝	երկնանըման ,
արա արժան՝	զամենեսեան :

Ապա ըստ կարգի աւագ ուրբաթու խընկարկէ ՚ի գերեզմանն եւ ՚ի թափօրականս , եւ երգեն զխաչի քո քրիստոսն , եւ զայլ :

'ի լրանալ՝ սոցին՝ առեալ թափօրապետն ըզ-
սուրբ խաչն՝ եւ շրջելով զգերեզմանաւ՝
դնան 'ի սուրբ պատանատեղն, եւ անտի 'ի
Լուսաւորիչ, եւ ասացեալ անդ զպահպա-
նիչն՝ վերադառնան 'ի սուրբ Յակոբ խաղա-
ղութեամբ.

Այս է կարգ մեծ թափօրից սրբոյ Յա-
րութեան միշտ. բայց կենսատու խաչն եւ
ամպ հովանին՝ որ 'ի պատիւ նորա, մի միայն
յայս գիւտ խաչի օրն լինի. զի այս մեծ
համարի յամենայն թափօրս սրբոյ Յարու-
թեան. իսկ միւս թափօրքն հաւասարք են
միմեանց. թէ յերեկոյեան, եւ թէ յառա-
ւոտեան կարգադրութիւնքն՝ նոյն են յամե-
նայն նուագի, թէ աւետարանաբարձքն,
թէ խաչակիրն, եւ թէ այլքն ամենայն:

Յաւուր ութօրէի Աստուածայայտնու-
թեան՝ զկնի գիշերային ժամերգութեան
հարկանի կոչնակ 'ի սուրբ Յակոբ, եւ
հանդիսիւ գնացեալ 'ի սուրբ Յարութիւն
յետ ամենափառաւոր հրաշափառիւ 'ի սուրբ
գերեզմանն երթալոյ՝ ըստ երեկոյեան կար-
գի, եւ դառնալոյ շուրջ զգերեզմանաւն՝
հարկանի մեր զոյկ կոչնակն պատարագի,

եւ մատուցանէ զսուրբ պատարագն՝ կամ
սրբազն պատրիարքն, կամ եպիսկոպոս ո-
մըն մեծաւ հանդիսիւ ըստ վարագայ սուրբ
Խաչի կիւրակէին, 'ի սուրբ գերեզմանն. եւ
յաւարտիլն վերադառնան խաղաղութեամբ
'ի սուրբ Յակոբ:

Ե մեծի պահոց առաջին կիւրակէն հան-
դիսաւոր թափօրս ունիմք երեքին գլխա-
ւոր ազգքս 'ի միասին, ուստի յաւուր շա-
բաթու նախ լատինք գան 'ի սուրբ Յարու-
թիւն փառաւոր հանդիսիւ. զկնի նոցայոյնք
նոյն կարգաւ. եւ ապա մեք գամք, եւ հան-
դիսաւոր հրաշափառաւ դառնալով շուրջ
զսուրբ գերեզմանաւն որպէս զառաջինսն՝
ելանեմք 'ի վերնատունն. եւ հարկանի զոյդ
կոչնակն ըստ սովորութեան, եւ փառաւո-
րսպէս աւարտեալ զժամերգութիւնսն՝ դառ-
նամք 'ի սուրբ Յակոբ. նմանապէս եւ յա-
ռաւաւօտու եկեալ կատարեմք զժամերգու-
թիւնսն եւ զանմահ պատարագն, մեք 'ի
վերնատան, եւ նոքա 'ի վիճակս իւրեանց:

Եախ լատինք ելանեն 'ի թափօր մեծաւ
հանդիսիւ ըստ մերում կերպի, եւ ապա
յոյնք. եւ յորժամ լրանան նոքա՝ մեք իջա-

նեմք 'ի թափօր՝ 'ի վերնատանէն շքեղափայլ
հանդիսիւ, ամենայն պատրաստութեամբ,
խաչվառք, բուրվառք, քշոցք, եւայն ա-
մենայն ըստ առաջին սովորութեան. զի չիք
ինչ աւելի կամ պակաս. մի միայն յայսմ նը-
ռուագի միանգամ մտանէ թափօրապետն 'ի
սուրբ գերեղմանն. եւ այն զկնի պատանա-
տեղոյն. ո'չ խաչի քո Քրիստոս, եւ ո'չ
խնկարկութիւն լինի բաց 'ի գիւտ խաչէն,
իսկ այլն ամենայն ըստ նոյն կարգի է.

Ի չորրորդ կիւրակէի մեծի պահոց՝ որ ասի
գատաւորաց, ունիմք եւս մեծ թափօր ըստ ա-
ռաջնոյն. բայց յերեկոյի եւ յառաւօտու
ժամերգութիւնն 'ի սուրբ Առևսաւորիչ պաշ-
տի ըստ գիւտ խաչի. եւ անմահ պատարագն
'ի սուրբ գերեղմանն մատչի ըստ սովորու-
թեան. պատարագամատոյցն՝ կամ պատ-
րեարքն՝ եւ կամ եպիսկոպոս ոմն լինի. զի
յայն օր հանդէսն մի միայն մերն է. միւս աղգ-
քըն զայն հանդէս եւ թափօր յայլ կիւրակէս
կատարեն. զի համահաւասար լինելոց եմք
միշտ միմեանցս. զկնի պատարագին դառնամք
զմեծահանդէս թափօրն իբրեւ զառաջինսն,
եւ դամք խաղաղութեամբ 'ի սուրբ Յակոբ:

Դաղկազարդի՝ թէ յերեկոյի, եւ թէ
յառաւօտու ժամերգութիւնն եւ սուրբ պա-
տարագն ՚ի վերնատունն լինի. եւ զկնի ան-
մահ պատարագի՝ զդեստաւորեալ սրբազն
պատրիարքն շքեղափայլ զգեստիւք՝ եւ այլ-
քըն շուրջառաւ ըստ առաջնոյն, եւ խաչ ՚ի
ձեռին իւրաքանչիւրոցն՝ ելանեն ՚ի թափօր,
ունելով ամենեքեան՝ թէ միաբանք եւ թէ
ուխտաւորք, ՚ի ձեռս իւրեանց արմաւենիս՝
զորս տան մի միայն արանց ՚ի դուռն սուրբ
Յակոբայ յառաւօտու ծաղկազարդին:

Յերկրորդ նուազի դառնալոյ զթափօրն
դնեն զաթու թափօրապետին առաջի գը-
րան մատրանի ՚ պատոց, եւ կանգնեալ անդ
թափօրականքն դաս առ դաս՝ ընթեռնուն
զաւուր գիրքն եւ զաւետարանն. եւ ապա
տեաւնագրեալ զանդաստանն անդ՝ երթան
՚ի պատանատեղն, եւ այլն ըստ առաջին
կարգի:

Յառաջին կիւրակէի մեծի պահոց, ՚ի
ծաղկազարդի, եւ ՚ի գիւտ խաչի գիշերային
սուրբ գերեզմանի պատարագքն հանդիսա-
ւոր լինին: Բայց ՚ի միւս հանդէսսն մի մի-
այն ՚ի սուրբ գերեզմանն մատչի սուրբ պա-

տարագն , եւ այն՝ յառաւօտու զկնի երկուց
ազգաց . իսկ յայլ առուրսն ՚ի գիշերի զկնի
յունաց , որպէս եւ սովորութիւն է միշտ :

Ի շրջանս միոյ տարւոյ հինգ անգամ յա-
տուկ հանդիսաւոր պատարագս ունիմք ՚ի
սուրբ գերղմանն . նաև՝ ՚ի վարագայ սուրբ
խաչի կիւրակէն . երկրորդ՝ յաւուր ուժօրէի
սրբ ոյ ծննդեան . երրորդ՝ ՚ի դատաւորաց
կիւրակէի մեծի պահոց . չորրորդ՝ ՚ի սուրբ
Պատկի , եւ այս երից ազդացս միանգամայն .
Հինգերրորդ յաշխարհամատրան կիւրակէի :

Ի մեծի խթման երեկոյի՝ յեօթներրորդ
ժամու հարկանի կոչնակ ՚ի սուրբ Յակոբ ,
եւ երթան ամենայն միաբանք եւ ուխտա-
ւորք ՚ի սուրբ Յարութիւն՝ բայց յայն որ
՚ի գնալն հրաշափառ չլինի . ոչ մեզ , եւ ոչ
միւս ազգաց . զի յոյժ բազմութիւն լինի
անդ :

Ա իաբանք հանդերձ սրբաղան պատ
րիաբաւ ելանեն ՚ի վերնատանն . եւ նըս-
տեալ սրբազան պատրիաբքն ՚ի մէջ կամարաց
դիտէ ՚ի վայր . յութերորդ ժամու ՚ի թա-
փօր ելանեն յոյնք եւ շրջեալ երիցս փու-
թանակի կատարեն . եւ ապա մեր եւ յունաց

վասն լուսաւորեայի մտեալ 'ի սուրբ գե-
 րեզանն՝ լուցանեն զմոմս իւրեանց 'ի կան-
 թեղէ, որ մի միայն մնայ վառ 'ի մէջ սուրբ
 գերեզմանի. եւ տան 'ի ծակուց որմոց սուրբ
 գերեզմանի արտաքս՝ որ շինեալ են յատ-
 կապէս. եւ տանին իւրաքանչիւրքն 'ի մեծա-
 ւորս իւրեանց փուլմանակի. եւ ապա լու-
 սաւորին ամենեքին 'ի փառս լուսափայլ Յա-
 րութեանն Կրիստոսի աստուծոյ մերոյ՝ որ
 ամենապայծառ յարութեամբ իւրով զաշ-
 խարհ ամենայն լուսաւորեալ պայծառացոյց:
 Իսկ զպտիք եւ ասորիք առ վիմին հրեշտակին
 կանգնեալ՝ 'ի մէնջ վառեն զմոմս իւրեանց
 ըստ նախկին սովորութեան. զինի ամենափա-
 ռաւոր լուսաւորեային 'ի թափօր ելանեմք մեք
 մեծաւ հանդիսիւ. բայց յայն օր 'ի պատա-
 նատեղն ո'չ երթան վասն բազմութեան.
 իսկ զայլսն կատարեն ըստ առաջնոցն. եւ
 ապա ոմանք երթան 'ի սուրբ Յակոբ, ուր
 մատչի փառաւոր սուրբ պատարագ. եւ ո-
 մանք մնան անդ. զի 'ի վերնատունն լինի
 հանդիսաւոր ժամերգութիւն եւ սուրբ
 պատարագ. այս աւուր բազմախուռն ամ-
 բոխն, ամենաշքեղ հանդէսն եւ հոգեւո-

բական մեծ ուրախութիւնն ո'չ կարէ մարդ
պատմել, միայն թէ 'ի նոյն օր անդ գտա-
նեցեալքն եւ վայելօղքն դիտեն զճաշակ
նորին :

Իսկ 'ի սուրբ զատկի գիշերի հարկանի
կոչնակ 'ի սուրբ Յակոբ, եւ երթան առ
հասարակ ամենեքեան 'ի սուրբ Յարութիւն՝
եւ պաշտեն զժամերգութիւնն 'ի վերնատան
մինչեւ 'ի հարցն . եւ 'ի ժամանակի հարցին
զգեստաւորեալ սրբազան պատրիարքն, եւ
այլքն ամենայն ըստ առաջին սովորութեան
ելանեն 'ի թափօր զհարցի շարական՝ այսօր
մեծ աւետիքն ասելով . յերկրորդ նուազի
դառնալոյ՝ առաջի դրան զպտոց մատրանի
ասէ սարկաւագն զեկեալքս ամենեքեան, եւ
զմեծացուսցեն երգելով երթան 'ի դուռն
սուրբ գերեզմանին . թափօրապետն մոեալ
'ի ներքս՝ բազմի յաթու, եւ այլքն կանգ-
նին ըստ կարգի առաջի սուրբ դրան՝ եւ ըն-
թեռնանի անդ իւղաբերից աւետարանն . եւ
ապա կրկին դառնալով գան առաջի դրան
զպտոց մատրանի . բազմի անդ թափօրապե-
տըն յաթու, եւ 'ի տէր երկնիցի վերջին
տանի՝ զոյգ զոյգ եկեալ թափօրականք համ-

բուրեն զաջ թափօրապետին . եւ խոնարհեալ
անդ յունկս միմեանց աւետեն ասելով .
(Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց՝ օրհնեալ է
յարութիւնն Քրիստոսի) եւ ապա ասացեալ
անդ զփառք՝ 'ի բարձունսն եւ զայլս . եւ ըն-
թերցեալ զաւուր գիրքսն եւ զաւետարանսն
տեաւնագրեն զանդաստանն . եւ յետոյ գը-
նացեալ 'ի պատանատեղն , եւ անտի եկեալ
'ի սուրբ գերեզմանն՝ ըստ առաջին սովոր
բութեան երթան 'ի վերնատունն . յաւար-
տիլ թափօրին հարկանի զոյգ կոչնակ սուրբ
պատարագին , եւ ամենափառաւոր հանդի-
սիւ մատուցանէ եպիսկոպոս ոմն զհաշտա-
րար սուրբ պատարագն՝ 'ի սուրբ գերեզմա-
նըն . եւ զկնի պատարագին վերադառնան ա-
մենեքեան խաղաղութեամբ 'ի սուրբ Յա-
կոբ :

Յառաջին կիւրակէի մեծի պահոց , 'ի
ծաղկազարդի եւ 'ի սուրբ զատկի ամենայն
հանդէսք եւ թափօրք 'ի միասին են ընդ
յունաց միշտ . զի յառաջ նոքա դառնան , եւ
ապա մեք . իսկ լատինք յերեք տարւոջ մի-
անգամ ընդ մեզ 'ի միասին առնեն զհանդէ-
սըն զթափօրն եւ զզատիկն . եւ յերկուս տագ-

բիս՝ յառաջ կատարեն քան զմեղ։ Նաեւս
լատինք զլու սաւորեայն առնեն յաւագ ուր-
բաթի երեկոյին առանձնաբար եւ ո՛չ բազ-
մութեամբ։

Յաշխարհամատրան կիւրակէի՝ թէ ե-
րեկոյի եւ թէ առաւօտու ժամերգութիւնն
'ի վերնատունն պաշտի, եւ սուրբ պատա-
րագն ՚ի սուրբ գերեզմանն մատչի ըստ կար-
գի վարագայ սուրբ խաչի։ Եւ այսուհետեւ
չունիմք հանդէս եւ թափօր ՚ի սուրբ Յա-
րութիւնն մինչեւ ՚ի վարագայ սուրբ խաչն,
իսկ ըստ սովորութեան եթէ դուռն ունի-
ցիմք՝ երթամք ամենեքեանքս ՚ի սուրբ Յա-
րութիւն զկնի կատարելոյ զժամերգութիւնն
'ի սուրբ Յակոբ։ Եւ ՚ի վերնատան մատու-
ցանեմք զհասարակ սուրբ պատարագն։ զի
չլինի երբէք արգելք ինչ ումեքէ։ Եւ այս
ամենայն հանդէս եւ թափօր լինի ՚ի փառս
եւ ՚ի պատիւ տնօրինեցելոյն վասն մեր Յի-
սուսի ՚Իրիստոսի միածնի որդւոյն Ըս-
տուծոյ՝ որ է օրհնեալ ընդ Հօր եւ սուրբ
Հոգովոյն յաւիտեանս ամէն։

Հասարակ թափօրք մեր յերիս աւուրս
լինին ՚ի շաբաթու անխափան, այսինքն՝

յուրիաթի, 'ի շաբաթի, եւ 'ի կիւրակէի եւ
ըեկոյեանս . եւ այն զկնի լատինաց . զի լա-
տինք յամենայն աւուր ելանեն 'ի հասարակ
թափոր :

Ուէ մեր, եւ թէ լատինաց՝ այս է կարգ
հասարակ թափորի, նախ առաջի դրան ու-
յիզին ժողովեալ 'ի մէջ սրբոյ Յարութեան
եղեալ մեր եկեղեծականք՝ առնուն մէն մի
թափորի տետր եւ մոմ վառեալ 'ի ձեռս իւր-
եանց . եւ նոյն աւուր պատարագամատոյցն
շուրջառ առեալ միայն լինի թափօրապետ :
եւ յորժամ իջանեն լատինք 'ի սուրբ Առ-
սաւորիչ՝ մեր սարկաւագն շապկաւ եւ մէծ
ուրարաւ եւ սաղաւարտ 'ի կլուխն՝ յառաջ
մատուցեալ ասէ բարձր ձայնիւ եւ եւս խա-
ղաղութեան". եւ թափօրապետն՝ օրհնու-
թիւն եւ փառք". եւ սկսանին քաղցր ձայնիւ
շարական ըստ պատշաճի տեղւոյն՝ որպէս
եւ գրեալ է 'ի տետրն ըստ կարպի . անցեալ
յառաջոյ դրան սուրբ գերեզմանին՝ եր-
թան նախ 'ի սուրբ բանտն . եւ անդ ըն-
թերցեալ թափօրապետն զաւետարանն եւ
քում ամենազօրն, երթան 'ի հանդերձ բա-
ժանումն : սարկաւագն յառաջոյ ամենիցուն

Երթայ միշտ խնկարկելով՝ ի սուրբ տեղիս,
եւ թափօրապետն զկնի ամենեցուն՝ ի վեր
բառնալով զթափօրապետական յատուկ
տետրն, եւ այլքն՝ ի միջի դաս առ դաս կար-
դալով՝ ի միասին. եւ այսպէս յամենայն ուր-
նօրինական տեղիս գնացեալ թափօրապետն
ընթեռնու մէն մի աւետարան ըստ պատշա-
ճի տեղւոյն:

Ի հանդերձ բաժանմանէն իջանեն՝ ի գիւա
խաչ. եւ ապս ելանեն՝ ի լուսաւորիչ, եւ
անդ՝ ուրախ եւ կիւրակէ,՝ ի սուրբ կարա-
պետի սեղանն ընթեռնանի աւետարանն,
իսկ՝ ի շաբաթի,՝ ի լուսաւորչի սեղանն.
աստի ելանեն՝ ի փուշ պսակ, եւ՝ ի փուշ
պսակէ երթան՝ ի սուրբ գողգոթա. եւ անդ
զկնի աւետարանի՝ ի ծունկս իջեալ ամենե-
քեան՝ սուրբ Աստուած ասեն աղիողորմ ձայ-
նիւ երիցս անգամ. եւ ապա տէր ողորմեա
եւ երգ խաչի. եւ ելեալ թափօրապետն ասէ՝
անկեալ առաջի ամենայաղթ խաչի քո''. ի-
ջանեն ապա՝ ի սուրբ պատանատեղն. եւ
անդ երիցս անդամ խաչաձեւ խնկարկելով
սրբազան տեղւոյն շրջի սարկաւագն՝ ըստ ե-
րից տան պարգեւատուն քաղցր շաբականի,

եւ այս լինի յամենայն նուագի անխափան .
 եւ ապա դան 'ի սուրբ գերեզմանն . անդ եւս
 զկնի աւետարանի ասի տէր ողորմեա , եւ
 երգ . եւ 'ի սուրբ գերեզմանէ շրջելով
 շուրջանակի դան 'ի տեղի ուշաթափման . եւ
 անդ զկնի աւետարանի՝ ընկալ տէր առա-
 յեալ եւ հայր մեր՝ կնքեն զթափօրն . բայց
 լատինք յուշաթափման տեղին ո՛չ դան . զի
 սկիզբն առնեն յեկեղեցւոյ իւրեանց , եւ ա-
 պա ուղղակի 'ի սուրբ գերեզմանէ գնացեալ
 յեկեղեցիս իւրեանց , եւ անդ փոքր ինչ
 ընթերցեալ աւարտեն զթափօրն : Ահա այս
 է կարգն հասարակ թափօրի մեր եւ լատի-
 նաց . եթէ նորեկ ուխտաւոր ունիցիմք՝
 ըստ այսմ կարգի շրջեցանեմք զնոսա 'ի
 թափօր , ունելով ամենեքեան մէն մի վա-
 ռեալ մոմս 'ի ձեռս իւրեանց , եւ թափօրա-
 պետն յիւրաքանչիւր սրբազան տեղիս փոքր
 փոքր ատենախօսութիւնս առնէ վասն տեղ-
 ւոյն ծանօթութեան , եւ վասն արժանա-
 վայել երկրպագութիւնս . մատուցանելոյ
 ուխտաւորաց 'նոյն սրբազան տեղեաց տեա-
 ռըն մեոյ :

(194)(

Ծոյնք յառաջագոյն բնաւ չունեին զայս
թափօր, բայց այժմ շարժեալ 'ի կրից ըս-
կըսան զնորեկուստաւորսն իբրեւ զմեզ թափօ-
րիւ շրջեցուցանել. թէպէտ ո'չ որպէս զմերն
օրինաւոր կերպիւ եւ վայելուչ կարգադրու-
թեամբ :

Այս մասն մասն ունի ուստի ան-
դարձն և մասն մասն մասն ուստի ան-
դարձն ու անդարձն անդարձն մասն
յանցամբ մասն ու անդարձն անդարձն ան-
դարձն զան ու անդարձն անդարձն ան-
դարձն անդարձն անդարձն անդարձն ան-

ԳԼՈՒԽ Բ.

Օանօլու-լի-նչ ղանիաց՝ կոչնակաց և ա-ե-
ւես սրբա Յարո-լեան .

Ե չորրորդում պահու ամռան գիշերոյ՝ 'ի
հինգերորդում աշնան՝ եւ 'ի վեցերրորդում
ձմռան, հարկանէ նախ յոյնն զտախտակեայ
կոչնակն . ելանէ յայնժամեւսարկաւագննոցա
'ի բուրվառ սրբազան տեղեաց . որպէս եւ
սովորութիւն է միշտ մեզ՝ նոցա՝ եւ զպաոց,
խնկարկել զսրբազան տեղիս յերեկոյի եւ
յառաւօտու . յետ կէս ժամու յունաց կոչ
նակին՝ լատինն քարշէ զզանկն . զի լատինն
կոչնակ չունի, միշտ զզանկն քարշէ . զկնի
լատինաց զանկին, հարկանի մեր տախտա-
կեայ կոչնակն, եւ սարկաւագն յառաջագոյն
պատրաստ : գոլով, փութանակի ելանէ 'ի
բուրվառ այսու կարգաւ . նախ յուշաթափ-
ման տեղին արարեալ երեք բուրվառ՝ գիմ

'ի սուրբ գերեզմանն խնկարկելով. Երեք
 բուրվառ ՚ի դուռն արարեալ, հանէ զսա-
 ղաւարտն ՚ի գլխոյ եւ գնէ ՚ի վերայ քարի
 ձախ կողման, եւ գլուխ ՚ի բաց մտանէ ՚ի
 ներքս. Նմանապէս եւյոյնն զգտակն հանէ
 ՚ի գլխոյ իւրմէ. ինն բուրվառ առնէ ՚ի սուրբ
 գերեզմանն, եւ համբուրեալ ելանէ ար-
 տաքս, եւ խնկարկէ զվէմն հրեշտակին խա-
 չանիշ. եւ անտի ելեալ երեք բուրվառ եւս
 առնէ ՚ի դուռն՝ դառնայ յաշխարհամատրան
 անդ եւս երեք բուրվառ արարեալ՝ կրկին
 դառնայ ՚ի դուռն սուրբ գերեզմանին. եւ
 անտի խնկարկելով գայ ՚ի սուրբ պատանա-
 տեղն, անդ եւս խաչանիշ. արարեալ դառ-
 նալով զըորս կողմն նորա՝ գնայ ՚ի դուռն ա-
 դամայ գերեզմանին, երեք եւս անդ ա-
 րարեալ, ելանէ ՚ի գողգոթա. ինն բուրվառ
 ՚ի տեղին խաչելութեան արարեալ՝ դառնայ
 ՚ի տեղին տարածման. եւ անդ եւս խա-
 չանիշ առնէ իբր զպատանատեղւոյն. իջեալ
 ՚ի գողգոթայէ երթայ խնկարկելով. երեք
 ՚ի դուռն՝ աշխարհամատրան՝ որ ՚ի կողմն
 գողգոթայի է. երեք՝ փուշ պտակի. ինն՝
 զիւտ խաչի. երեք՝ գիւտ խաչի պատուհա-

նին, ուր նստաւ դշխոյն Նեղինէ . Երեք՝
Լուսաւորչի սեղանոյն . Երեք՝ սուրբ Կա-
րապետի սեղանոյն . Վեր ելեալ անտի, Ե-
րեք՝ Հանդերձ բաժանման . Երեք՝ Դունկիա-
նոսի սեղանոյն . 'ի սուրբ բանտն, թէ ներ-
քոյ, եւ թէ արտաքոյ հինգ սեղան կան, որոց
Երեք Երեք բուրվառ առնէ . 'ի լատինաց եկե-
ղեցին՝ վեց . 'ի սուրբ պարտիզեն՝ խաչանիշ .
անտի շուրջ զգերեզմանաւ խնկարկելով
գնայ 'ի մատրան ղպտոց, Երեք անդ, եւ
վեց 'ի հովսեփ արեմաթացին . անտի խըն-
կարկելով եկեալ 'ի դուռն սուրբ գերեզմա-
նին . Երեք բուրվառ դրան . բայց այժմ՝
'ի ներքս ո՛չ մտանէ . անտի եկեալ 'ի տե-
ղին ուշաթափման . Երեք բուրվառ եւս անդ
արարեալ վերջացուցանէ :

Խսկ յոյնք՝ թէպէտ ըստ այսմ կանոնի
Երթան՝ բայց սկիզբն եւ վերջաւորութիւնն
յաշխարհամատրան առնեն . մեր սարկաւագն
յորժամ զառաջին բուրվառն արարեալ 'ի
սուրբ գերեզմանն, դառնայ 'ի պատանատե-
ղըն . յայնժամ սկսանի եւ ղպտոց սարկա-
ւագն, սկիզբն առեալ 'ի մատրանէ իւրեանց
եւ ըստ մեր կարգի խնկարկեալ զամենայն

ՄԵՐԱՊԱՆ ԹԵՂԻՍ՝ ՎԵՐՋ ԱՌՆԵ ՅԻՒՐԵԱՆց ՄԱՏ-
ՐԱՆՆ :

Իսկ յորժամ՝ Հարկանին յառաւօտու իւ-
րաքանչիւրոց կոչնակըն՝ սկսանին զժամեր-
գութիւնս իւրաքանչիւրքն յիւրեանց վիճակս .
Եթէ նախատօնակ Լիցի լատինաց՝ յառաջա-
գոյն եկեալ 'ի սուրբ գերեզմանն՝ կատարեն
զկարդ ։ Նախատօնակի փոքու իմն եւ դառ-
նան . զկնի երթալոյ նոցա գան յոյնք մա-
տուցանել զպատարագն . Եթէ չունիցին լա-
տինք նախատօնակ՝ կրկին յոյնք զկնի ժա-
մերգութեան իւրեանց մատուցանեն զպա-
տարագն՝ 'ի սուրբ գերեզմանն . զկնիյունաց
մեր կոչնակն Հարկանի, եւ մատուցանեմք
զսուրբ պատարագն՝ 'ի սուրբ գերեզմանն .
Եւ ապա լատինն քարշեալ զզանկն մատու-
ցանեն զպատարագն՝ 'ի սուրբ գերեզմանն
ըստ սովորութեան :

Իսկ 'իցերեկի 'ի ժամ վեց՝ յառաջ լա-
տինն քարշէ զզանկն՝ Եթէ նախատօնակ չունի-
ցին լատինք՝ զկնի զանկին, իսկ եթէ նա-
խատօնակ ունիցին՝ որոյ վասն նշան ունին
'ի դուռն սուրբ գերեզմանին, զկնի նախա-
տօնակին Հարկանեն յոյնք զկոչնակն, եւ սար-

կաւագ նոցա ելանէ 'ի բուրվառ ըստ առաւօ-
տեան կարգի . Եւյորժամ լրացուցեալ զա-
ռաջին բուրվառն սուրբ գերեզմանի՝ Եւ դառ-
նայ 'ի պատանատեղն . Հարկանի մեր տախ-
տակեայ կոչնակն , Եւ ելանէ մեր սարկաւագն
'ի բուրվառ . Եւ զկնի մեր սարկաւագին՝ զպտոց
սարկաւագն՝ ըստ առաւօտեան կարգի . բայց
զպտիք կոչնակ Եւ պատարագ չունին :

Եթէ հանդիսաւոր օր իցէ՝ կրկին ըստ
այսմկարգի երթան 'ի բուրվառն . Թէյոյնք՝
թէ մէք , բայց զոյդ բուրվառաւ , Եւ ման-
կանց մոմով . զկնի կոչնակաց կատարեն
իւրաքանչիւրքն զերեկոյեան ժամերգութիւնս
իւրեանց : Ծիններորդ ժամու , 'ի զատկէ
մինչ 'ի խաչ լատինք քարշեն յառաջ զզանկն
եկեսցէին . Եւ 'ի խաչէ մինչ 'ի զատիկ յոյնք՝
հարկանեն յառաջ զերկաթեայ կոչնակն .
Եւյետ երկուցն հարկանի մեր երկաթեայ
կոչնակն , Եւ ասեմք իւրաքանչիւրքս զեկես-
ցեն . լատինք յամենայն օր յետ եկեսցէի
ելանեն 'ի թափօր :

Ա ասն երեկոյեան Եւ առաւօտեան՝ սեղա-
նոյն զանկ քարշեմք երեքին ազգքս Եւս .
Նմանապէս Եւ վասն աւելածութեան . զի

յամենայն ուրբաթի աւուր աւել ածեմք եւ
բեքինս եւս ըստ կարդի . զոր օրինակ՝ սուրբ
գերեզմանի աւելի կարգն հանդերձ շուրջա-
նակաւ , շաբաթ մի՛ մեր լինի . շաբաթ մի՛
լատինաց , եւ շաբաթ մի՛ յունաց . նմանա-
նապէս եւ տպատանաաեղւոյն . եւ ո՛չ կարեմք
թիզ մի յառաջ կամ յետ աւիլել յիւրաքան-
չիւր սահմանացս , զի խոռվութիւն մեծ
լինի . բաց 'ի սոցանէ՛ իւրաքանչիւրքս եւս
զվիճակս մեր աւիլեմք յամենայն ուրբաթի :

Օսուրբ գերեզմանն եւ զպատանատեղն
որոյ եւ իցէ կարգն աւելի , մաքուր ջնջա-
նաւ օրբեալ մեծաւ զկուշութեամբ՝ վար-
դեջուրս ցանեն 'ի վերայ նոցա . եւ զպատա-
նատեղն գեղեցիկ ծածկոցաւ ծածկեն մին-
չեւ յերեկոյ այնմ աւուր . նոյնպէս առնեմք
եւ մեք ուշաթափման տեղւոյն յամենայն ուր-
բաթի . զկնի զատկին 'ի նոյն շաբաթն , որոյ
եւ իցէ աւելի կարգն սուրբ գերեզմանի , ներ-
քոյ՝ արտաքոյ եւ շուրջանակի աւազով շփէ-
քանի ինչ օր՝ մինչեւ բոլոր ալտն ոտից ուխ-
տաւորաց մաքրեսցի . նմանապէս եւ զպատա-
նատեղն՝ յորոյ վիճակի եւ անկցի :

Ունիմք եւս տարեկան աւել մի 'ի մէջ

սեպ" . որ զբոլոր սրբաղան տեղիս աւելի մք՝ ներքոյ եւ արտաքոյ . բայց սուրբ գերեզմանն եւ պատանատեղն՝ որոյ կարգի եւ հան դիպեսցի 'ի նոյն շաբաթու՝ նա աւիլէ զամենայն կողմունս , նաեւ զդմբեթս , եւ զայլ ամենայն խորչս մաքուր եւ մեծ հոգածութեամբ . նմանապէս եւ իւրաքանչիւրքըս զվիճակս մեր ըստ ամենայն մասին աւիլեմք մաքրապէս 'ի նոյն օր , եւ այս 'ի տարւոջ միանգամ լինի . եւ այլ ամենայն ինչ սրբոյ յարութեան կարգաւ եւ վիճակաւէ . զի չունիմք լինչ երբէք առանց կարգի եւ սահմանի . նաեւ որ ազգ կամիցի զսուրբ յարութեան գուռն տալ բանալ՝ զիւրաքանչիւրոց ազդարութեան շղթայսն քարշէ ըստ կարգի . յորոց վերայ մանր զանկը շարեալ կան , որով իմանան՝ զի դուռն բացեալ լինի :

Եթէ մեր լիցի դուռն՝ նախ զմեր շըզթայն քարշեմք , ապա լատինաց , զկնիյունաց , եւ ապա զպտոց : Եթէ լատինաց լիցի . նախ՝ զիւրեանցսն քարշեն , ապա յունաց , ապա մեր , եւ զպտոց : Եւ եթէ յունաց լիցի , նախ՝ զիւրեանցսն քարշեն , ապա լա-

տինաց՝ մեր եւ ղպտոց . ղպտիք չկարեն բա-
նալ զդուռն , զի միայն երկու հոգի ունին
'ի ներքս . եթէ հարկաւոր լիցի նոցա դու-
ռըն՝ մեք տամք բանալ . յորժամ դուռն փակ
լիցի՝ երկու պահապանք մնան միշտ 'ի ներ-
քուստ դրան , մեր եւ յունաց . եւ երբ գայ-
ցէ ոք արտաքս վասն իրի իմիք՝ զօր աղդ
եւ խնդրեսցէ՝ զնորին շղթայն քարշեն պա-
հապանք , զի իմացեալ գայցեն եւ խօսես-
ցին ընդ առն՝ որ է արտաքս , 'ի փոքր ծա-
կէ դրան :

Եմէջ սրբոյ յարութեան երից ազ-
գաց պաշտօնատարք՝ են իբրեւ յիսսուն
հոգիք . իբր հնգետասան՝ մեր . հնգետասան
լատինաց . քսան՝ յունաց եւ ղպտոց . ղպտիք
եւ ասորիք յաւուր աւագ ուրբաթու յատուկ
թափօրիկ մի ունին զկնի յունաց . իսկ 'ի
զատկի եւ 'ի ծաղկազարդի զհետ մեր շըջին
'ի թափօր . եւ այս ամենայն կատարի 'ի
փառս եւ 'ի պատիւ Հօր եւ Որդոյ Հեւ
Հոգոյն սրբոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս
յաւիտենից ան:

Ե ՄԿՐՏԻՉ Ա ԸՐԴՅԱՌԵՑԻ

Յ Օ Ւ Խ Ե Ա Լ

Խջեալ յերկնից
ծընունդըն հօր՝
եւ փառակից՝
որդին անձառ՝

բանն էական,
անքըննական,
միշտ սուրբ հոգւոյն,
անեղական :

Ո արմին զգենուլ՝
հօրն պատկեր՝
ուստի յղանայ՝
նա աւետեօք՝

հողեղենի,
բարեհաճի,
յարգանդ կուսին,
գարբիկլի :

Ա թեաց զերկնից՝
կոյսն երջանիկ՝
ծընաւ մանուկ՝
'ի բեթլէհեմ՝

անտանելին,
յիւր արգանդին,
լոյս աշխարհի,
քաղաք դաւթին :

Բ ամից վերնոց՝
յերկնից յերկիր՝
արթուն հոգւոց՝
ծընունդ փըսկչին՝

խընչոյս կազմեալ,
փառք ծաւալեալ,
աւետէին,
մերոյ օծեալ :

Տ եսեալ ըգփառս՝
սուրբ յօհաննէս՝

երրորդութեան,
'ի յորդանան,

Հայր վըկայեալ՝ հոգին իջեալ,
յայն սուրբ խորհուրդն՝ մըկըթութեան :

Եւ անապատ՝ վարեալ հոգւով,
պահօք չարին՝ քաջ յաղթելով,
եւ գերիմաստ՝ քարոզութեամբ,
լուսաւորեալ՝ զմարդիկ յոլով:

Չէր նա պարապ՝ օր անցուցեալ:
անթիւ հրաշս՝ միշտ ներգործեալ,
յագեցուցեալ՝ զիւր հետեւողս,
բանիւ սըսբով՝ հացիւ օրհնեալ:

Վառեալ բարեգութն՝ իսէր մարդկութեան,
զիմէ կամովին՝ ի մահ դառնութեան,
կեանըս շնորհեալ՝ մեռելոյն հոգեալ,
փառօք մտանէ՝ ի քաղաք դաւթեան:

Երագ ընթանայ՝ ի տունն խորհրդոյ,
'ի ցոյց հեզութեան՝ ի նշան սիրոյ,
մաքրեալ զաշակերտս՝ ի յաղտից մեղաց,
սեղան պատրաստէ՝ անմահ կերակրոյ:

Պամեալ տիրաննենգ՝ ազգին հրէից,
տան վըճիու մահու՝ տեառըն համայնից:
'ի կալ նա յաղօթս՝ առ հայր ջերմաջերմ,
կալեալ կացուցին՝ յատեան դժնէից:

Դարանեալ դազանք՝ ժողովեալ 'ի մի,
 գոչեն 'ի ձայն մեծ՝ մահու խաչեսցի,
 կըուփեալ խոշտանգեալ՝ 'ի վեշտ դառնագին,
 'ի բանտ արգելեալ՝ յողոյն գիշերի:
 Արեան ծարաւիք՝ եկեալ 'ի մի վայր,
 դատեն զարարիչն՝ գոլ մահապարտ այր,
 կեղծեալ դատաւորն՝ կամելով հաճիլ,
 մատնեալ զտէրն 'ի խաչ կորոյս զանձն ընդ վայր,
 Պլսակ փըշեղէն՝ 'ի գլուխն եղեալ,
 ըզփայտն փրկութեան՝ յուս նորա բարձեալ,
 դառնաղէտ վըշտօք՝ հանեալ գողգոթա,
 ուժգին լըլկանօք՝ 'ի խաչ բեւեռեալ:
 Եկայք սիրելիք՝ կոչէ ըզձեղ տէր,
 տարածեալ ըզձեռս՝ ընդունի 'ի սէր,
 չարչարեալ խաչեալ՝ 'ի տես մօր իւրոյ,
 աւանդեալ զոգի՝ թաղի վասըն ձեր:
 Տիրական պատկեր՝ հօր ամենազօր,
 իջեալ 'ի կժոխս՝ զօրութեամբ հըզօր,
 յաղթեալ զթշնամին՝ ազատեալ զհոգիսն,
 յարեաւ հրաշսիառ՝ փառօք լուսաւոր:
 Եշից զտիեղերս՝ շնորհօք սուրբ հոգւոյն,
 գերազանց ըքով՝ յետ համբառնալոյն,
 ընդէ՞ր յապաղիք՝ դուք արդ տակաւին,
 սիրով ընծայել՝ համբոյր սուրբ տեղւոյն:

Յակուեանց՝ սրբոց գահ՝
Հրաշալի,

և պարծանք՝ Հայկազուն՝
Քաջ աղգի,

աննզման՝ սա 'ի մէջ՝
աշխարհի,

Հրաւիրէ՝ 'ի հանդէս՝
գալ ուխտի:

Օթեւան՝ յարդարեալ՝
պատրաստի,

յարգ պատիւ՝ վայելուչ՝
ընծայի,

ձիրք առատք՝ շընորհաց՝
միշտ բաշխի,

Հրաւիրէ՝ 'ի հանդէս՝
գալ ուխտի:

Բախճական՝ ձայներգոց՝
նուագի,

Հոգետր՝ քաղցրութեան՝
յօդ հնչի,

աղօթկեր՝ միաբանք՝
սուրբ վայրի,

Հրաւիրեն՝ 'ի հանդէս՝
գալ ուխտի:

Ե միջեւ՝

յարութեան՝

տաճարի,

են անթիւ՝

սուրբ տեղիք՝

պաշտելի,

ութիւնալի՝

գերեզմանն՝

յիսուսի,

հրաւիրէ՝

'ի հանդէս՝

գալ ուխտի.

Առ եռանդ՝

'ի հոգիս՝

բորբոքի,

յայս վայրիկ՝

սրբազան՝

տենչալի,

գունդիք վերին՝

սուրբ զօրաց՝

հրեղինի,

հրաւիրեն՝

'ի հանդէս՝

գալ ուխտի.

Երջանիկ՝

էք դուք յոյժ՝

մանկըտի,

զի ծընունդ՝

համբարձման՝

սուրբ տեղի,

գերեզման՝

տիրամօր՝

սուրբ կուտի,

հրաւիրեն՝

'ի հանդէս՝

գալ ուխտի.

Պետեաց՝ սուրբ երկիր՝
 յանկալի,
 մելք եւ կաթն՝ ՚ի նմանէ՝
 միշտ բըղիսի,
 ծարաւիս՝ սուրբ ջըռոյն՝
 կենդանի,
 հրաւիրէ՝ ՚ի հանդէս՝
 գալ ուխտի:
Լոյս փառաց՝ արարչին՝
 աստ փայլի,
 ՚ի սիրաըն՝ դիմողաց՝
 թափանցի,
 զերմեռանդ՝ ըզմանկունս՝
 սիօնի,
 հրաւիրէ՝ ՚ի հանդէս՝
 գալ ուխտի:
Ա Յ Ե Ւ Թ
 նաև զայնայն՝ գմանը ժ դ.
 վրձու պատու
 զօնապատու մանրնզը ք.
 զարով պատու
 ուկրանը ժ մայլյանը
 պատու լոր

ՅԵՒԿ

ԳՐՔՈՑՄ

Երես.

Դառւն : 3.

Հեղինակ գործոյս : 7.

Կախերգանք : 10.

Գ.Լ. Ա. Յաղագս գալոյ ՚ի սուրբ Ե-
շուստալէմ, եւ մտեալ ՚ի դրանէ Յոպ-
պէու գալ շրջիլ նախ զվահս սըր-
բոյն Յակոբայ : 15.

Գ.Լ. Բ. Յաղագս գնալոյ յերկնանման
տաճարն սրբոյ Յարութեան, եւ կար-
գաւ շրջագայելոյ զտնօրինական սըր-
բազան տեղիս, եւ զարդուց նոցա : 45.

Գ.Լ. Գ. Յաղագս շրջագայելոյ յայլ
սրբազան տեղիս՝ որք են ՚ի մէջ սըր-
բոյ քաղաքիս, եւ կամ արտաքոյ քա-
զաքիս մինչ ՚ի համբարձումն Վրիս-
տոսի : 85.

¶ 1. ¶ 3. Յաղագս ելանելոյ 'ի սուրբ
լեառն համբարձման, եւ ապա մը-
տեալ 'ի քաղաքն 'ի դրանէ սուրբ
Եստուածածնի շրջագայելով զսրբա-
զան տեղիս գալ 'ի սուրբ Յակոբ : 114.

¶ 1. Ե. Յաղագս գնալոյ 'ի սուրբ ծը-
նունդն Քրիստոսի, եւ ծանօթու-
թիւն սրբազան տեղեաց՝ որ 'ի շրջա-
գայս սրբոյ Յարուսաղէմի, եւ ոմանց
վանուց սրբոյ աթոռույս : 133.

¶ 1. Զ. Ծանօթութիւն շքեղա-
փոյլ հանդիսից եւ թափորից սրբոյ
աթոռոյս եւ այլ սրբազան տեղեաց
բաց 'ի սուրբ Յարութենէ : 155.

¶ 1. Ե. Ծանօթութիւնք ամենա-
փառաւոր հանդիսից եւ թափորից
սրբոյ Յարութեան, թէ յատկացե-
լոյն մեզ, եւ թէ երից ազգացս 'ի
միասին. նաև շաբաթական հասա-
րակ թափորից : 175.

¶ 1. Բ. Ծանօթութիւնք զանկաց
կոչնակաց եւ աւելից սրբոյ Յարու-
թեան : 195.

¶ 1. Վ կրտիչ վարդապետէ յօրինեալ . 203.

Ական	Առեղջ.	Էջ. Տար
բազմանչոյլ	բազմանշոյլ	4. 8.
չօր	զոր	10. 10.
յերորդ	յերրորդ	35. 21.
պատկերօք	պատկերօք	39. 5.
զիսսահակ	զիսահակ	46. 20.
երկաթագիր	երկաթագիր	52. 8.
գողղոթայ	գողցոթա	53. 1.
կերպուածով	կերտուածով	56. 23.
որպէս	որպէս	58. 2.
չետ	յետ	59. 14.
ըստիկոնք	դըստիկոնք	62. 17.
շրջագայի	շրջագայի	62. 13.
անձիւք	անթիւք	63. 2.
'ի ձախա	'ի ձախակողմն	64. 24.
ըստ	ընդ	75. 16.
իս կոյն	իսկոյն	75. 22.
անձնապաստա-	անձնապաստա-	
նութիւն	նութիւն	93. 8.
այս	այս	93. 9.
սարսափմամփ	սարսափմամբ	102. 3.
շրջես	շրջիս	102. 11.
գնտակն	գնդաւն	107. 28.

<i>որով</i>	<i>որով</i>	118.	5.
<i>երկնային</i>	<i>երկնային</i>	118.	10.
<i>երկնային</i>	<i>երկրային</i>	118.	11.
<i>կաթեղք</i>	<i>կանթեղք</i>	139.	1.
<i>որոյ</i>	<i>յորոյ</i>	139.	16.
<i>ճանապահն</i>	<i>ճանապարհն</i>	139.	21.
<i>յզգալին</i>	<i>յզգալին</i>	152.	11.
<i>զթաղմ ան</i>	<i>զթաղման</i>	169.	17.
<i>դիտեն</i>	<i>դիտեն</i>	188.	13.
<i>աղդարութեան</i>	<i>աղդարարու-</i>		
	<i>թեան</i>	201.	15.
<i>աննցման</i>	<i>անըման</i>	206.	5.



Se Ziffern auf den Tafeln hier.
Anfangs war ich ein g. D. der C. C.
Begonnen - p. u. haben wir uns dann
ein b. p. beglichen und ob es uns gelungen
war jenseit der ersten Januarzeit
in Differenz zu gehen. P.
Wurde es mir auf diese Weise gelungen

1871 -

uſt d. v. b.
e c n d h
uſt q. r. m.

6992

0003059

12013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003059

F-41

000